


5(075)
—
9 - 67

282

605

ԳՐԱԴԱՏԱԿՆԵՐ
„ԳԻՐ“
ԹԵՂԻՂԱԼՈՒ

20 MAR. 2013



5(045)
9-67

այ

23 MAY 2005
04 MAY 2010

ԴԱՍԱԳԻՐՔ

ԲՆԱՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՀԱՅՈՅ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կազմեց

8. ԳԻՒԶԵԼԵԱՆ

100+
31415


3685

ՄԱՍՆ Ա.Ա.ԶԻՒՆ

Անկենդան աշխարհ՝ ող, ջուր եւ երկիր

Երկրորդ բարեփոխած սպագրութիւն

Հայաստան. պահեաը
Ժեռական գումար
գրավաճառանցում



Թ. ի ժ ի ս
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱԱՐԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅՈՅ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՅ Գրամակայա փող., 6. Հեռախոս 566
Կառ. Ա. Մանուկյան
1911

Կ Ա Զ Մ Ռ Ղ Ղ Ի Յ

Երկրորդ տպագրութեամբ լոյս ընծայելով մեր «Բնապատմութեան» դասագրքի առաջին մասը, կարեոր ենք դանում մի համառօտ բացատրութիւն տալ այն փոփոխութիւնների մասին, որ անհրաժեշտ համարեցինք մայնել այս գրքի մէջ:

Նախ և առաջ մենք փոխեցինք դասագրքի վերնագիրը և փոխանակ «Բնական պատմութիւն» սխալ, թէև ընդհանրացած անունը, գործ զրինք «Բնապատմութիւն» խօսքը: Մենք էլ միանդամայն համաձայն ենք զրքիս մասին եղած քննադատութեան հետ (ահս Նոր Դպրոց 1909 թ. № 9), որ «Բնական պատմութիւն» դարձւածքը մտել է մեր զրականութեան մէջ օտար լեզուներից և կազմում է հին գործածական հistoire naturelle (естественная история) նոյնպէս սխալ դարձւածքի թարգմանութիւնը: Սխալ է այդ դարձւածքն այն պատճառով, որ «Բնական պատմութիւն» ասելով, կարծես թէ ընդունում ենք, որ կայ մի ուրիշ պատմութիւն, որը պէտք է բնորոշենք «անբնական» անունով: Գիտութեան այն մասը, որ յայտնի է այդ սխալ անւան տակ (կենդանաբանութիւն, բուսաբանութիւն և հանքաբանութիւն), զրադւում է բնական մարմինների և երևոյթների նկարագրութեամբ և ուսումնասիրութեամբ: Հետեւապէս դա «բնութեան» պատմութիւն է կամ բնապատմութիւն և ոչ «բնական պատմութիւն»:

Աւելի կարեոր են այն փոփոխութիւնները, որ անհրաժեշտ համարեցինք կատարել զրքիս նիւթի և նրա դասաւորման վերաբերմամբ:

Այդ կողմից, ինչպէս որ և մատնացոյց էր արւած նոյն քըննադատութեան մէջ, մենք էլ բարւոք համարեցինք զրքիս «Օդ» վերնագիրը կըող մասից դուրս հանել մարմինների ընդհանուր յատկութիւնների նկարագրութիւնը և դրանից մի առանձին նախորդող մաս կազմել: Աւելորդ չենք համարում յայտնել այստեղ, որ և պրօֆ. Յ. Ա. Վաղորեցը, որի նոյն անունը կըող դասագրքի հոտեղութեամբ և կազմել ենք մեր զիրքը, նոյն փոփոխու-

թիւնն է մտցրել իր այդ աշխատութեան մէջ։ Այդպէս ուրեմն գրքիս առաջին տպագրութեան մէջ եղած «Օդ» մասից գոյացաւ երկու մաս, I «Մարմինների ընդհանուր յատկութիւնները» և II «Օդ»։ Այդ մասերն սկզբից մինչև վերջը մշակւած և գրւած են նորից։ Բացի գրանից առաջին մասին աւելցրած է և մի նոր վլուխ՝ տարբութեան մասին։

Երկու միւս մասերը (ջուր և երկիր) թէև ամբողջովին նորից չեն գրւած (բացառութեամբ վերջին գլխի), բայց դարձեալ խիստ փոփոխութեան են ենթարկւած։ Ընդհանուր առմամբ պէտք է ասենք, որ այս տպագրութեան մէջ դուրս ենք զցել այն բոլորն, ինչ որ աւելորդ ենք համարել և ամեն կերպ աշխատել ենք, թէ նիւթի մշակման և թէ լեզվի կողմից որքան կարելի է աւելի տարբականացնել, աւելի մատչելի դարձնել։ Այդ նպատակով շատ տեղ կը ճանապարհ ենք, հարկաւոր տեղերում էլ լրացրել ենք, որի շնորհիւ հին տպագրութեան նկարներից տասնեւինդը դուրս ենք ձգել և մօտ տասը հատ էլ նոր նկարներ ենք աւելցրել։ Այդ փոփոխութիւնների շնորհիւ գրքիս ծաւալն զգալի չափով փոքրացաւ, որը համարաւորութիւն տւեց համապատասխան չափով իջեցնել և դինը։

Տ. Գիւղալեան

Օգոստոս 1911 թ.

Թիֆլիս

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Ամբողջ աշխարհն իր բոլոր առարկաներով միասին կոչում է ընութիւն։ Ուրեմն բնութիւնը կազմում են անտառներն ու գաշտերը, լեռներն ու ձորերը, ծովերն ու գետերը։ Նոյնպէս բոլոր կենդանիներն ու բոյսերը, երկնային մարմինները և ինքը մարդը։ Մի խօսքով այն բոլորը, ինչ որ կայ տիեզերքում և մարդու ձեռքով չէ շինւած։

Բնութեան բոլոր առարկաները կոչում են բնական մարմիններ։ Մարմինները երկու մեծ խմբի ենք բաժանում՝ կենդանի և անկենդան։ Կենդանի մարմինները նրանք են, որոնք ապրում են. այսինքն՝ որոնք ծնւում, մնունդ են ստանում, աճում և բազմանում։ Այդպէս են բոլոր կենդանիներն ու բոյսերը։ Երկրորդ խմբի մարմինները, ինչպէս օրինակ՝ քարը, ածուխը, ջուրը և այլն ոչ մնունդ կարող են ստանալ, ոչ աճել և ոչ բազմանալ։ Դրանք անկենդան մարմիններ են։

Թէ կենդանիների և թէ բոյսերի մարմինը բաղկացած է զանազան մասերից, որոնցից ամեն մէկն առանձին դեր է կատարում մարմնի համար։ Իւրաքանչիւր այդպիսի մաս կոչում է գործարան։ Այդպիսով աչքը տեսողութեան գործարան է, ատամները՝ կերակուր մանրացնելու, ստամոքսը՝ մարսելու. Նոյնպէս բոյսի արմատը հողից կերակուր ընդունելու գործարան է, ծաղիկը՝ բազմանալու և այլն։ Եւ որովհետև թէ կենդանիների և թէ բոյսերի մարմիններն այդպիսի գործարաններից են բաղկացած, իսկ անկենդան մարմինները՝ ոչ, այդ պատճառով առաջին

խմբի մարմինները կոչւում են գործարանաւոր, իսկ երկրորդ խմբինը՝ անզործարան:

Բնութեան մարմինները միշտ փոփոխուում են: Երկիրը պտաւում է իր առանցքի և արեի շուրջը. կենդանիներն ու բոյսերն անընդհատ փոփոխուում են մեր աչքի առաջ, — սնունդ են առնում, աճում, բազմանում: Նոյնիսկ անկենդան մարմինները միշտ փոփոխութեան են ենթարկուում. լեռներն ու հանքերը թէե շատ դանդաղ և մարդու աչքի համար աննկատելի՝ բայց անընդհատ քայլայւում են: Մարմինների հետ կատարւող իւրաքանչիւր փոփոխութիւն կոչւում է երեւոյթ: Հետևապէս ամեն բան, ինչ որ կատարւում է մարդու, կենդանիների, բոյսերի և անկենդան մարմինների մէջ, երեսոյթ է: Երեսոյթ է և ջրի հոսելը, և օդի շարժումը, և բոյսի աճումը, և կենդանիների իւրաքանչիւր շարժողութիւնը:

Ուսումնասիրել բնութիւնը նշանակում է ճանաչել բնութեան մարմինները, զիտենալ նրանց յատկութիւնները և հասկանալ այն երեսոյթները, որոնք կատարւում են նրանց հետ: Բնութեան ուսումնասիրութիւնը շատ կարևոր է մարդու համար: Հին ժամանակները, երբ մարդիկ զեռ ծանօթ չէին բնութեան, ենթազրում էին, թէ լեռներն ու անտառները, ծովերը, գետերն ու օդը լիքն են անտեսանելի էակներով, որոնց հրամանով և կատարւում են բնութեան երեսոյթները. նրանց կամքով էր արեը դուրս գալի և մայր մտնում, քամին փչում, անձրև գալիս. նրանց կամքով էր երաշտ լինում և ամեն բան չորացնում և կամ առատ բերք ստացում. նոյնիսկ մարդու ամբողջ կեանքը նրանց կամքով էր գալիս անց կենում. մի խօսքով հազար տեսակ սնօտիապաշտութիւններ մթացրել էին մարդու ուղեղը: Միմիայն բնութեան հետ հետզետէ ծանօթանալով՝ մարդը կարողացաւ ազատւել այդ սնօտիապաշտութիւններից և ճշմարիտ գաղափար կազմել բնութեան երեսոյթների մասին:

Որքան մարդ աւելի է ծանօթանում բնութեան, այնքան դա աւելի է հետաքրքրում նրան: Բնութիւնն ուսում-

նասիրելու համար երբեմն մարդիկ ոչ միայն նվիրում են իրենց ամբողջ ժամանակը, այլ և շատ անգամ զոհում են իրենց կեանքը: Թիչ մարդիկ չեն զոհւել ծովի ալիքների, բնեռային սառոյցների, կամ վայրի անապատների մէջ: Դրանց համար զիտութիւնն աւելի թանկ է եղել, քան կեանքի վայելըները: Սակայն բացի այդպիսի զուտ զիտական հետաքրքրութիւնից՝ բնութեան ուսումնասիրութիւնը մարդկութեան համար անվերջ յարմարութիւններ է ստեղծում: Ոչ մի բան այնքան չի նպաստում մարդու բարօրութեանը, որքան բնութեան ուսումնասիրութիւնը: Եթէ մարդը չծանօթանար բնութեանը, նա ոչ երկրագործութեամբ կարող կլինէր պարապել, ոչ արհեստներով: Նա ոչինչ չէր գիտենայ և նախամարդու նման գրեթէ ոչնչով չէր զանազանուի իրեն շրջապատող գազաններից:

Մարմիններին ծանօթանալու համար մենք օգտւում ենք մեր հինգ զգայարաններով: Տեսողութեամբ որոշում ենք մարմինի ձևը, դրութիւնը, հեռաւորութիւնը և արտաքին փոփոխութիւնները, որոնց ենթարկուում է նա: Հոտառութեամբ որոշում ենք նրա հոտը և այլն: Սակայն առարկայի և երեսոյթների մասին աւելի կատարեալ հասկացողութիւն կազմելու համար ստիպւած ենք լինում զանազան փորձեր կատարել: Օրինակ՝ մեր զգայարանների օգնութեամբ իմանում ենք, որ աղի կտորն ու փայտը պինդ մարմիններ են, իսկ կաւը փափուկ է ու մատների տակ ալրորւում է: Սակայն դրանով չի վերջանում այդ մարմինների զանազանութիւնը: Երբ ջրի մէջ ենք գցում, տեսնում ենք, որ աղը լուծում է, կաւը ջուր է կլանում և ուռչում, իսկ փայտը մնում է անփոփոխ: Վերջապէս կրակի մէջ փայտն այրուում է, աղը հալուում, իսկ կաւը թըրծում՝ աղիս է դառնում:

Ուրեմն բնութեան մարմիններն ու երեսոյթներն ուսումնասիրելու համար երկու միջոց ունենք՝ զիտողութիւն և փորձ: Մարմինը կամ երեսոյթը նախ զիտում ենք. ապա զրանց մասին աւելի լայն գաղափար կազմելու և մեր դի-

տողութեան արդիւնքն ստուգելու համար դիմում ենք փորձիս: Դրա համար նոյն մարմինը կամ երևոյթը ենթարկում ենք այս կամ այն ազգեցութեան և դիտում, թէ ինչ փոփոխութիւններ են կատարւում նրանց հետ:

Դիտողութիւնն ու փորձը հաւասարապէս անհրաժեշտ են բնութիւնն ուսումնասիրելու համար:

Բնութեան ուսումնասիրութիւնը պէտք է սկսենք մեղ համար ամենամօտիկ և մեզ շրջապատող մարմիններից, այն է՝ օդից, ջրից և հողից: Սակայն նախ և առաջ պէտք է ծանօթանանք մարմինների մի քանի ընդհանուր յատկութիւնների հետ:

I

ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Տարածականութիւն և ծաւալ

Բնութեան մարմինները միմեանցից զանազանուում են իրանց տարբեր յատկութիւններով: Օրինակ՝ կատիճն սպիտակ գոյն ունի և այնքան փխրուն է, որ ուրիշ մարմիններին քսելիս նրանց վրայ գիծ է թողնում. քարը պինդ է ու կարծր և մուրճի հարւածից կոտրւում է. երկաթն ընդհակառակը՝ թէև պինդ է, բայց հարւածից ոչ թէ կոտրւում, այլ տափականում է: Այդպէս էլ ամեն մի մարմին իր առանձին յատկութիւններն ունի, որոնցով տարբերում է ուրիշ մարմիններից:


Սակայն որոշ կողմերով էլ մարմիններն իրար նման են. այսինքն ունեն և այնպիսի յատկութիւններ, որոնք կան բոլոր մարմինների մէջ, որոնք ընդհանուր են բոլորի համար:

Բնութեան մարմիններին ծանօթանալը հէնց այդ ընդհանուր յատկութիւններից պիտի սկսենք:

Նախ և առաջ մարմիններն իրար նման են այն յատկութեամբ, որ բոլորն էլ տարածութեան մէջ որևէ տեղ են բռնում: Անկարելի է երկու մարմին միաժամանակ միենոյն տեղում տեղաւորել. օրինակ՝ մինչև որ մի աշակերտ իր տեղիցը չհեռանայ, միւսը նրա տեղը չի կարող բռնել. մինչև որ այս կատիճն իր տեղիցը չհեռացնենք, միւս կտորը նրա տեղը չենք կարող գնել: Նոյն պատճառով էլ եթէ բաժակը լիբը լցըել ենք ջրով, էլ աւել ջուր նրա մէջն

ածել չենք կարող. ինչքան աւելցնենք, այնքան էլ բաժակի ջրիցը կթափւի:

Այժմ մի փորձ կատարենք: Վերցնենք մի մեծ բանկա, կիսիցն աւելի լցնենք ջրով և յետոյ դատարկ բաժակը, բերանով ցած բռնած, իջեցնենք ջրի մէջ (նկար 1): Կտեսնենք, որ բաժակի մէջ ջուր չի լցւում: Պատճառն այն է, որ բաժակը, թէև մեզ դատարկ է թւում, բայց իսկապէս դատարկ չէ: Նրա մէջ ինչ որ բան կայ, որը բռնել է ամբողջ միջի տարածութիւնը: Մինչև որ այդ մարմինը բաժակից չհեռացնենք, նրա մէջ ջուր չի լցւի: Եթէ այժմ բաժակը քիչ թեքենք, կտեսնենք, որ նրա միջից խոշոր պղպջակ դուրս թռաւ ջրի երեսը և ջուրն էլ կիսով չափ լցրեց բաժակը: Եթէ բաժակն աւելի թեքենք, նորից պղպջակ դուրս կգայ և ամբողջ բաժակը կլցւի ջրով:




նկար 1.

Էլ տարածութեան մէջ տեղ է բռնում:

Նոյն բանը կարող ենք հաստատել ուրիշ փորձով:

Վերցնենք մի սրւակ, բերանը ծածկենք բետինէ խցանով, իսկ խցանի միջով անցկացնենք ձագարի երկար խողովակը (նկար 2): Եթէ ձագարի մէջ ջուր ածենք, կտեսնենք, որ ջուրը ձագարից սրւակի մէջ չի թափւում: Ին-

չու: Որովհետև սրւակը դատարկ չէ. Նրա մէջ օդ կայ: Նոյն փորձը կատարենք ըիչ տարբեր եղանակով (նկար 3): Սրւակի բերանը փակենք այնպիսի խցանով, որը երկու անցք ունենայ: Դրանցից մէկով անցկացնենք ձագարի երկար խողովակը, միւսով մի ծնկաձև խողովակ, որի միւս ծայրն իջեցնում ենք ջրով լցրած բաժակի մէջ: Այժմ եթէ ձագարի մէջ ջուր լցնենք, իսկոյն կթափւի սրւակի մէջ:



նկար 3.

նկար 2.

Մինոյն ժամանակ ծնկաձև խողովակի ծայրից ել կսկսն պղպջակներ դուրս դալ և բարձրանալ բաժակի ջրի երեսը: Ուրեմն սրւակից օդը դուրս է գալիս, իսկ ձագարից ջուրը թափւում ու բռնում է նրա տեղը: Եթէ ծնկաձև խողովակի ծայրը մատով բռնենք, օդն էլ չի դուրս գալ սրւակից: Մինոյն ժամանակ ջուրն էլ կդադարի թափւել սրւակի մէջ: Այդ բոլորից մենք համոզւում ենք, որ իւրաքանչիւր մարմին տարածութեան մէջ որեւէ տեղ է բռնում եւ երկու մարմին միհաժամանակ միեւնոյն տարածութիւնը բռնել չեն կարող: Մարմինների այդ յատկութիւնը կոչւում է տարածականութիւն: Իսկ այն տարածութիւնը, որ բռնում է մարմինը, կազմում է նրա ծաւալը: Ուրեմն ամեն մի մարմին որոշ ծաւալ ունի:

2. Պինդ, հեղուկ եւ գագային մարմիններ

Բոլորս էլ գիտենք, որ եթէ ջուրը սառեցնենք, սառոյց կդառնայ, այսինքն կանդանայ: Միւս կողմից եթէ ջուրը տաքացնենք, նրանից կսկսի գոլորշի բարձրանալ,

որը կտարածւի օդի մէջ ու կանյետանայ: Եթէ այդ բանը շարունակենք, ամբողջ ջուրը կգոլորշիանայ: Ուրեմն զուրշին էլ ջուր է: Այդպէս ուրեմն ջուրը կարող է լինել կամ իբրև սառոյց, կամ իբրև ջուր և կամ իբրև գոլորշի: Հետաքրքիրն այն է, որ բնութեան գրեթէ բոլոր մարմիններն էլ այդպէս են. այսինքն տաքութեան բարձրանալուց կամ իջնելուց նրանք փոխում են իրենց վիճակը: Սառցի նման պնդացած մարմիններին հէնց այդպէս էլ ասում են պինդ մարմինները, ջրի նման մարմիններին՝ հեղուկ և գոլորշու նման մարմիններին՝ գազային:

Տեսնենք ինչով են տարբերում պինդ, հեղուկ և գազային մարմինները:

Պինդ մարմինը, օրինակ՝ սառոյցը, քարը, փայտը կարող ենք տեղիցը վերցնել, դնել մի այլ տեղ. կարող ենք քանոնի ծայրիցը երկու մատով բռնել և բարձրացնել ամբողջ քանոնը: Դրանից այդ մարմիններն իրանց ձեր չեն փոխում, նրանց մասերն իրարից չեն բաժանում: Պինդ մարմինի մասերն իրարից բաժանելու համար, օրինակ՝ քարը կամ փայտը մի քանի կտոր անելու համար, պէտք է մի որոշ ոյժ գործ դնենք: Ուրեմն եղակացնում ենք՝ պինդ մարմինը որոշ ձեւ ունի. նրա մասերն իրանք իրանց միմեանցից չեն բաժանում: Հեղուկ մարմինը, օրինակ՝ ջուրը, կաթն ընդհակառակը՝ մատներով բռնել ու բարձրացնել չենք կարող. չենք կարող նոյնպէս դնել սեղանի վրայ: Նրանք կթափւեն, կցրւեն, որովհետև նրանց մասերն իրանք իրանց բաժանում են իրարից: Այդ պատճառով էլ դրանք որոշ ձեւ չունեն, այլ ըստանում են այն անօթի ձեր, որի մէջ ածել ենք: Օրինակ՝ ջուրն ափսէի մէջ տափակ ձեւ է ստանում, խողովակի մէջ՝ բարակ ձողի ձեւ և այլն: Ուրեմն հեղուկները տարբերութ են պինդ մարմիններից նրանով, որ որոշ ձեւ չունեն, որ նրանց մասնիկներն իրանք իրանց բաժանում են միմեանցից:


Գազային մարմիններին ծանօթանալու համար երկու

շիշ վերցնենք՝ մէկը ջրով լցրած, միւսը դատարկ: Արդէն վերեւում ասածից պարզ է, որ դատարկ շիշն իսկապէս դատարկ չէ, այլ լցւած է օդով (ինչպէս կարող ենք հաստատել): Այժմ թափենք լիքը շշի ջրի կէսը. իսկ միւս շշից դուրս քաշենք նրա միջի օդի նոյնալէս կէսը: Այդ բանը դժւար չէ անել: Առանձին գործիքներ կան, որոնց օգնութեամբ հեշտութեամբ կարելի է դուրս քաշել շշի օդի այս կամ այն մասը: Դրանից յետոյ կնկատենք, որ առաջին շշի մէջ ջուրը կը բռնի միայն շշի կէսը, իսկ երկրորդի մէջ մնացած օդը դարձեալ ամբողջ շիշը կլցնի: Մենք կարող ենք այդ օդի դարձեալ կէսը դուրս քաշել, յետոյ էլի մնացածի կէսը, և իւրաքանչիւր անգամ մնացած օդը կտարածւի և կը բռնի ամբողջ շիշը, միայն իւրաքանչիւր անգամ աւելի և աւելի նօսրացած: Մենք երբէք չենք կարող այնպէս անել, որ շշի մի մասում օդ լինի, միւսը դատարկ մնայ: Որովհետեւ օդն, ինչպէս եւ ամեն մի գազային մարմին, ընդունակութիւն ունի ցրւել և բռնել ամբողջ ազատ տարածութիւնը:

Այդպէս ուրեմն պինդ մարմին մասերն ամուր կպած են միմեանց. այդ պատճառով էլ նրա ձեւ ու ծաւալը մնում են անփոփոխ: Հեղուկ մարմինի մասերն այնքան թոյլ են միմեանց կպած, որ իրանք իրանց բաժանում են միմեանցից: Այդ պատճառով էլ նրանք թէկ պահում են իրանց ծաւալը (ինչով ենք այդ բանը հաստատում), բայց իրանց ձեր փոխում են իւրաքանչիւր դէպքում: Վերջապէս գազային մարմինների մասերը ոչ թէ կպած չեն միմեանց, այլ փախչում են իրարից: Այդ պատճառով էլ գազային մարմինները ոչ իրենց ձեւն են պահում և ոչ ծաւալը: Հեղուկ մարմինները կարելի է պահել միայն տակից ու կողկերքից փակ անօթի մէջ, որի բերանը կարող է բաց լինել, օրինակ բաժակը: Իսկ գազային մարմինը կարելի է պահել միայն ամեն կողմից պինդ ծածկած անօթի մէջ:

3. Մարմինների երեք վիճակը

Մենք ասացինք, որ ոչ միայն ջուրը, այլ բնութեան գրեթէ բոլոր մարմիններն էլ կարող են փոխել իրենց վիճակը. այսինքն կարող են երբեմն պինդ վիճակի լինել, երբեմն հեղուկ, երբեմն գազային։ Մարմինների վիճակի փոխւելու գլխաւոր պատճառը տաքութիւնն է։ Տաքութեան աստիճանը հետզհետէ բարձրացնելիս պինդ մարմինը նախ հեղուկ է դառնում, ապա գազային մարմին։ Ընդհակառակը՝ գազային մարմինն աստիճանաբար սառեցնելիս նրան նախ հեղուկ մարմին կդարցնենք, ապա պինդ։ Այժմ նոյն իսկ օդը կարողանում են հեղուկ ու պինդ մարմին դարձնել։



Նկար 4.

միւսի մէջ սնդիկ ասած մետաղը։ Սնդիկը մի ծանր փայլուն հեղուկ է ու, ինչպէս որ յետոյ տեսնելու ենք, իր յատկութիւններով շատ նման է միւս մետաղներին։ Սաստիկ ցրտից սնդիկը պնդանում է ու դառնում է որպէս կապար. իսկ տաքացնելիս սկսում է եռ գալ ու գազ դառնալ։ Եթէ սպիրտի լամպերի վրայ յիշեալ փորձանակները տաքացնենք, շուտով կնկատենք, որ ջուրն ու սընդիկն սկսում են եռ գալ։ Եռ գալուց ստացւում են գազային սնդիկ և գազային ջուր կամ գոլորշի։ Դրանք փորձանակների վերին մասերի սառը պատերին դիպչելով՝ թանձրանում են ու ջրի և սնդիկի մասրիկ կաթիլներ են գոյացնում։

Մարմինների այդ յատկութիւնը դիտելու համար կարող ենք հետեւ փորձը կատարել (նկար 4)։ Վերցնենք երկու փոքրիկ խողովակած անօթներ, որոնց փորձանակ են ասում։ Դրանցից մէկի մէջ ջուր ածենք, միւսի մէջ սնդիկ ածենք և դառնում է կազմակերպութիւն։ Ուրեմն այս գործիքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մանկական «սլտան» ասած խաղալիքը, կամ օդային ատրճանակը։

Զանազան մարմիններ պինդ վիճակից հեղուկ և ապա գազային վիճակ ստանալու համար տաքութեամբ տաքութիւն են պահանջում։ Օրինակ՝ ջուրն ու սնդիկը սովորական տաքութեան ժամանակ հեղուկ են և միմիայն տաքութիւնը շատ պակաելիս են պնդանում։ Մեղրամոմը, կնքամոմը, անագը, կապարը սովորական ժամանակ պինդ են, բայց փոքր տաքութիւնից արդէն հեղուկ են դառնում։ Ընդհակառակ՝ երկաթը նոյնիսկ գարբնի հողոյ տաքութիւնից չի հալւում, այսինքն հեղուկ չի դառնում, այլ միայն շիկանում է։ Դրան հալելու համար շատ մեծ տաքութիւն է պահանջում։ Վերջապէս կան և այնպիսի մարմիններ, որոնց մինչեւ այժմ չեն կարողացել հեղուկ դարձնել։ Այդպէս են օրինակ՝ կաւն ու ածուխը։

4. Սխմելիութիւն


Վերցնենք մի գլանած ապակէ խողովակ (նկար 5), որի մի ծայրն ամուր ծածկած է խցանով, իսկ միւս ծայրով անց է կացրած մղիչը։ Ուրեմն այս գործիքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մանկական «սլտան» ասած խաղալիքը, կամ օդային ատրճանակը։



Նկար 5.

Նախ քան խողովակի ծայրը խցանով փակելը նրա մէջ կիսով չափ ջուր ենք ածում։ Մղիչի կողքերին էլ ճարպ ենք քսում, որ նրա ու ապակու արանքով ջուրը դուրս չգնայ։ Երբ այդ գործիքը բռնում ենք ուղղահայեց, նկատում ենք, որ մղիչի վրայ կանգնած է ջուրը, իսկ ջրի և խցանի արանքը լցւած է օդով։ Եթէ այժմ մղիչը սեղմենք դէպի վեր, կնկատենք, որ նրա բարձրանալուց բարձրանում է և ջուրը ուրեմն դրա և խցանի արանքում գտնւած օդը սեղմալում, հուզ է գալիս ու փոքրանում։ Երբ մղիչը ազատ ենք թողնում, օդը նորից լայնանում է և ջրին ու մղիչին հրում է իրանց տեղը։

Եթէ այդ գործիքը չկայ, նոյն փորձը կարող ենք կատարել հետեւեալ աւելի պարզ եղանակով (նկար 6): Վերցնում ենք հասարակ փորձանակ, մէջը կիսով չափ ջուր ենք ածում ու բերանը փակում խցանով: Պէտք է աշխատենք միայն այնպիսի խցան ընտրել, որ ուղիղ փորձանակի բերանին համապատասխան լինի, որպէսզի նրա կողքերից ջուրը չժափւի: Եթէ այժմ փորձանակը բռնենք ուղղահայեաց, խցանի երեսին կկանգնի ջուրը, իսկ ջրից վերև՝ օդը: Երբ խցանը ուժով սեղմում ենք վեր, նոյն բանն ենք նկատում, ինչ որ և նախորդ փորձում: Այսինքն ջուրը վեր է բարձրանում ու սեղմում օդին, որն ինչքան խիստ է սեղմւած լինում, այնքան աւելի փոքր ծաւալ է ստանում: Իսկ երբ խցանն աղատ ենք թողնում, օդը նորից ընդարձակւում է ու ջրին և խցանին սեղմում ցած: Այդպէս ուրեմն օդը սեղմելուց փոքրացնում է իր ծաւալը: Այդ յատկութիւնը կոչւում է սխմելիութիւն: Սխմելիութիւն ունեն բոլոր մարմիններն էլ՝ թէ պինդ, թէ հեղուկ և թէ գաղային, թէն տարբեր չափով: Սեղմելուց ամենից շատ փոքրանում են օդն ու դագերը: Պինդ և հեղուկ մարմինները թէն նոյնպէս սեղմւում են հուսլ տալուց, բայց շատ փոքր չափով:



Նկար 6.

5. Ծանրութիւն

Եթէ որևէ առարկայ օրինակ՝ քար, փայտ բարձրացնենք և յետոյ բաց թողնենք, վայր կընկնեն: Նոյնպէս և վեր ձգած առարկաները՝ մի առժամանակ բարձրանում են վեր, յետոյ դարձեալ ընկնում են գետնի վրայ: Այդ բանը կատարւում է երկրի վրայ ամեն տեղ: Դրա պատճառն այն է, որ երկրը ձգողական ոյժ ունի և ամեն մի առարկայի ձգում է դէպ իրեն:

Երբ մի առարկայ ենք առնում ձեռքներս, իսկոյն ըգուում ենք նրա ծանրութիւնը: Առարկան ճնշում է գործում մեր ձեռքի վրայ, որովհետև երկիրը ձգում է նրան. Իսկ ձեռքը չի թոյլ տալիս, որ նա ընկնի: Հասկանալի է, որ ինչ չափով երկիրը ձգում է առարկային, այն չափով էլ դա ճնշում է գործում մեր ձեռքի վրայ: Ուրեմն առարկայի ծանրութիւնը նրանից է, թէ ինչ չափով է ձգում երկրից: Որ առարկային երկիրն ուժեղ է ձգում, նա ծանր է. ընդհակառակը՝ որն աւելի թոյլ է ձգում, նա աւելի թեթև է:

Հին ժամանակները մարդիկ կարծում էին, թէ շատ մարմիններ ծանրութիւն չունեն. այդպէս էին կարծում և օդի մասին: Սակայն այժմ յայտնի է, որ բնութեան մէջ չկայ մի մարմին, որին երկիրը չձգէ դէպ իրեն: Հետեւապէս բնութեան բոլոր մարմինները, նոյնիսկ ամենաթեթև գագերն անգամ, ծանրութիւն ունեն:

Մ Ա Ր Մ Ի Ն Ն Ե Ր Զ Ա Փ Ե Լ Բ

6. Երկարութիւն եւ ծաւալ

Անցածից տեսանք, որ ամենափոքը և ամենաթեթև մարմիններն էլ ունեն թէ ծանրութիւն և թէ ծաւալ: Առօրեայ կեանքում միշտ ստիպւած ենք լինում չափել մարմինները: Իւրաքանչիւր օր գնում ենք հաց, միս, թէյ, շաքար, կաթ. յաճախ գնում ենք և զանազան կտորեղէն, գինի և ոչ մի բան խանութում կամ շուկայում առանց չափի մեղ չեն տալիս:

Մարմինները չափում են կամ նրանց երկարութիւնը որոշելով, կամ ծանրութիւնը, կամ ծաւալը, կամ այլ եղանակով: Մենք կազմորենք չափելու միայն ամենապարզ եղանակները:


Մի քանի տեսակ մարմիններ չափում են միայն դը-

րանց երկարութիւնը որոշելով, օրինակ կտորեղէնը: Այդպիսի մարմիններ չափելու համար գործ են ածում երկարութեան չափեր: Որպէս երկարութեան չափեր մեզ մօտ ընդունւած են՝ մեծ տարածութիւնների համար՝ մղոնը, վերստը և սաժէնը, իսկ կտորեղէնի և դրանց նման մարմինների համար՝ արշինը, վերշոկը և այլն:

Ծաւալը չափելու համար գործ են ածում ծաւալի չափեր, այսինքն որոշ չափի անօթներ: Օրինակ՝ դինին, կաթը չափում են վերջոններով, հացահատիկները՝ շետվերտով, սօմարով, կոտով և այլն: Փոքը մարմինների ծաւալն ստոյգ կերպով որոշելու համար գործ են ածում ապակէ գլանաձև անօթ, որը բաժանւած է հաւասար մասերի: Այդ անօթը (նկար 7), որ կոչում է չափ (մենգուրկա), սովորաբար բաժանւած է խորանարդ սանտիմետրների: Եթէ ցանկանում ենք որոշել որևէ անօթի ծաւալը, դրան վիքը լցնում ենք ջրով և ապա ջուրը չափում յիշեալ չափով: Ենթադրենք չափը պարունակում է 60 խորանարդ սանտիմետր, իսկ մեր վերցրած անօթի ջուրը տասն անգամ լցրեց չափը. ուրեմն այդ անօթի ծաւալը հաւասար է 600 խորան. սանտիմետրի:

Պինդ մամի ծաւալը չափելու համար չափը մինչև որոշ գիծը լցնում ենք ջրով, ապա մարմինը խորասուզում ջրի մէջ: Ջուրը չափի մէջ պինդ կբարձրանայ և ուղիղ այնքան, որըանոր է ջրի մէջ խորասուզած մարմինի ծաւալը: Ենթադրենք չափի մէջ զուրը լցրել էինք մինչև 20 բաժանմունքը, այսինքն 20 խոր. սանտիմետր: Եթէ պինդ մարմինը խորասուզելուց յետոյ ջուրը բարձրացաւ մինչև 25 բաժանմունքը, նշանակում է, որ նրա ծաւալը ուղիղ 5 խոր. սանտիմետր է:

Եթէ մարմինը մեծ է և չափի մէջ խորասուզել չի կարելի, այդ գէպում այսպէս ենք անում: Վերցնում ենք աւելի մեծ անօթ, որի մէջ կտեղաւորւի մեր վերցրած




Նկար 7.

մարմինը և լիքը լցնում ենք ջրով: Ապա մարմինն իջեցնում ենք ջրի մէջ և թափւած ջուրը չափում: Թափւած ջրի ծաւալը հաւասար կինի վերցրած մարմինի ծաւալին: Վերջապէս եթէ մարմինը թեթև է և ջրի մէջ չի խորասուզում, օրինակ խցանը, այդ գէպում դրան խրում ենք երկաթէ բարակ ձողիկի ծայրին և ապա իջեցնում ենք ջրի մէջ: Որքան ջուր թափւի, կամ որքան ջուրը բարձրանայ չափի մէջ, այնքան էլ կինի առարկայի ծաւալը:

7. Ծանրութիւն չափելը: Կենով

Մարմինների ծանրութիւնը չափում են կշեռքով: Այդ գործիքը (նկար 8) բաղկացած է հետեւել մասերից: Առանձին յենարանի վրայ դըած է լծակը (նկար 9): Դա կա-



Նկար 8.

րող է ազատ շարժւել այս ու այն կողմը: Յենարանի վերին մասը երկճեղ է (նկար 10), իսկ լծակը մէջտեղում երկու եռանկիւնաձև դուրս ցցւած յաւելւածներ ունի: Դրանք իրենց ստորին սուր եղբներով դրւած են յենարանի ձիւղերի վրայ: Լծակի իւրաքանչիւր ծայրին մի մի կարթ կայ, որոնցից կախւած են կշեռքի նժարները: Որքան թեթև է լծակը, որքան փոքը է նրա յաւելւածների շփումը յենարանի ծայրերին, այնքան կշեռքն աւելի զգայուն է. այ-




Նկար 9.

սինքն աւելի շուտ նժարների վրայի ծանրութիւնների ամենիոքը տարբերութիւնից լծակը թեքւում է դէպի ծանր մարմնի կողմը:



Նկար 10.



Նկար 11

կշեռքը ճիշտ է այն ժամանակի, երբ լծակի երկու թեւ-
ւերը բոլորովին հաւասար երկարութիւն ունեն: Անհրաժեշտ
է նոյնպէս, որ նժարներն էլ հաւասար քաշ ունենան: Այդ
դէպքում եթէ նժարների վրայ հաւասար ծանրութիւն
դնենք, կշեռքը հաւասարակշռութիւն կպահպանի. այսինքն
երկու նժարներն էլ միևնոյն բարձրութեան վրայ կկանգ-
նեն: Իսկ եթէ լծակի թեւերից մէկը երկար է, նժարների
վրայ հաւասար ծանրութիւններ դնելիս երկար թեփ նժարը
կիջնի ցած, այսինքն աւելի ծանր կերևայ: Կամ եթէ լծա-
կի թեւերը հաւասար են, իսկ նժարները տարբեր քաշ ու-
նեն, այդ դէպքում հաւասար ծանրութիւններ դնելիս ծանր
նժարը ցած կիջնի և նրա վրայի մարմինը ծանր կերևայ:

Որպէս ծանրութեան չափեր գործ են ածում չուզունից կամ արոյրից պատրաստած փթանոցներ, ֆունտանոցներ և դրանց աւելի մանր մասերը:


8. Տանորդական չափեր

Իւրաքանչիւր երկրում՝ առանձին չափեր են գործածում։ Օրինակ մեզ մօտ կտորեղէնը չափում են արշի-

նով, ուրիշ երկրներում գաղով, մետրով և այն: Նոյնպէս ծանրութիւնը մեզ մօտ չափում են փթով կամ նրա մասերով, ուրիշ երկրներում բաթմանով, կիլոգրամով և այն: Այդ բանը շատ մեծ անյարմարութիւններ է ներկայացնում զանազան երկրների մարդկանց փոխադարձ յարաբերութիւնների ժամանակ: Մեր վաճառականները զանազան մրգեղէններ (քիշմիշ, խուրմա, նուշ) բերում են Պարսկաստանից. այնտեղ գնում են բաթմանով, մեզ մօտ ծախում փթով կամ ֆունտով: Նրանք ստիպւած են երկար չափել, համեմատել, հաշել: Դրանով ժամանակ է կորչում, նոյն իսկ սխալմունքներ են պատահում: Այդ պատճառով այժմ մարդիկ աշխատում են այնպէս անել, որ բոլոր երկրներում միևնույն չափերն ընդունւեն, այն է ֆրանսիական կամ տասնորդական, որովհետև գրանք բոլոր երկրների չափերից ամենից յարմար են: Յարմար են նրանով, որ դրանց իւրաքանչյւր չափը բաժանւում է կամ տասը, կամ հարիւր, կամ հազար և այն մասերի: Ուրեմն դրանցով հաշեւելու, մի չափը միւսի վերածելը, շատ հեշտ է:

Որպէս երկարութեան չափ ֆրանսիացիք ընդունել են
մետրը, որ հաւասար է մօտաւորապէս $22\frac{1}{2}$ վերշոկի։
Մետրը բաժանւած է տասը ղեցիմետրի, դեցիմետրը՝
տասը սանտիմետրի և սանտիմետրը՝ դասը միլիմետրի։
Միւս կողմից տասը մետրը կազմում է մի ղեկամետր,
տասը գեկամետրը՝ մի հեկտոմետր և տասը հեկտոմետրը՝
մի կիլոմետր։ Կիլոմետրը քիչ փոքր է վերստից։ Այդպէս
ուրեմն կիլոմետրը բաղկացած է՝ 10 հեկտոմետրից, 100
դեկամետրից, 1000 մետրից, 10000 դեցիմետրից, 100000
սանտիմետրից և 1000000 միլիմետրից։

Որպէս ծաւալի չափ նրանք ընդունել են խորանարդ գեցիմետրը, այսինքն այնպիսի մի անօթ, որի իւրաքանչիւր եզրը հաւասար է մի գեցիմետրի. Այդ չափը կոչւում է լիտր, նաև բի մեծ է սովորական գինու շնից. Տասը լիտրը կազմում է մի լիտր, տասը գեկալիտրը մի հեկտոլիտր և պահանջութեական է:



Որպէս ծանրութեան չափ ֆրանսիացիք ընդունել են զըամը։ Դա հաւասար է մի խորանարդ սանտիմետր սառը ջրի քաշին և մեր չափով մի մմխալի քառորդ մասից քիչ պակաս է։ Գրամը հաւասար է տասը ղեցիգրամի, դեցիգրամը՝ տասը սանտիգրամի, սանտիգրամը՝ տասը միլիգրամի։ Հազար գրամը կազմում է մի կիլոգրամ, որ բեշ պակաս է $\frac{2}{3}$ ֆունտից։

Ներկայումս տասնորդական չափերն ընդունւած են գրեթէ բոլոր եւրոպական երկներում բացի Անգլիայից և Ռուսաստանից։ Ռուսաստանում այդ չափերը գործ են ածւում միայն դեղատներում։

9. Մարմնի տեսակարար կեիռը

Զանազան մարմիններ տարբեր ծանրութիւն ունեն։ Բոլորս գիտենք, որ քարը ծանր է փայտից, երկաթը՝ քարից և այլն։ Ի հարկէ, երբ ասում ենք, որ քարը ծանր է փայտից, նշանակում է, որ աչքի առաջ ունենք գրանց հաւասար մեծութիւնները, այսինքն հաւասար ծաւալը։ Որովհետև եթէ վերցնենք մի մեծ փայտ և մի փոքր քար, այդ դէպքում փայտը կարող է քարից ծանր լինել։ Բայց կան այնպիսի մարմիններ, օրինակ երկաթն ու պղինձը, որ ձեռքներս առած՝ ծանր ու թեթև անելով, չենք կարող հաստատ ասել, թէ դրանցից որն է ծանր։ Միւս կողմից յաճախ շատ գժւար է լինում համեմատող մարմիններից բոլորովին հաւասար ծաւալ ստանալ։ Այդ պատճառով մարմինների համեմատական ծանրութիւնը գտնելու համար դրանց համեմատում ենք ջրի հետ։ Օրինակ՝ եթէ գտել ենք, որ մի մարմին ջրից ծանր է 10 անգամ, իսկ միւսը միայն 5 անգամ, դրանից եզրակացնում ենք, որ առաջին մարմինը երկրորդից ծանր է 2 անգամ։ Այն թիւը, որ ցոյց է տալիս, թէ քանի անգամ մի մարմին ծանր կամ թեթև է ջրից, կազմում է նրա տեսակարար կիրու։ Այդպէս գտել են, որ երկաթը ծանր է ջրից 8 անգամ, որն-

դիկը 14 անգամ։ Ուրեմն երկաթի տեսակարար կշիռը հաւասար է 8-ի, սնդիկինը՝ 9-ի։


Մարմնի տեսակարար կշիռը գտնելը շատ հեշտ է։ Դրա համար պէտք է վերցնենք հաւասար չափով (ծաւալով) սառը ջուր և այն մարմնից, որի տեսակարար կշիռը ուզում ենք որոշել։ Ապա պէտք է կշռենք և դրանց քաշերը համեմատենք իրար հետ։ Այսինքն պէտք է տեսնենք, թէ համեմատող մարմնի քաշը քանի անգամ աւել կամ պակաս է ջրի քաշից։ Օրինակ՝ եթէ ցանկանում ենք սնդիկի տեսակարար կշիռը որոշել, պէտք է վերցնենք մի փոքրիկ բաժակ ու նախ դրա քաշը որոշենք։ Յետոյ բաժակը մէկ պէտք է լցնենք ջրով ու կշռենք և ապա սընդիկով ու նորից կշռենք։ Այդպիսով կգտնենք, թէ հաւասար ծաւալով սնդիկն ու ջուրը որքան են կշռում։ Յետոյ սնդիկի քաշը բաժանելով ջրի քաշի վրայ, կգտնենք նրա տեսակարար կիրու։

ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆԴԱՐՁԱԿԻԵԼԸ ՏԱՔՍՆԱԼՈՒՑ

10. Պինդ մարմինների ընդարձակիելը

Բոլոր մարմիններն էլ տաքանալուց ընդարձակւում են, իսկ սառելուց սեղմւում։ Այդ բանը սովորական առարկաների մէջ փոքր չափով է կատարելում և այդ պատճառով էլ չենք նկատում։

Որ պինդ մարմինները տաքանալուց ընդարձակւում են և սառելուց սեղմւում, կարող ենք հաստատել նետենեալ փորձով։ Վերցնում ենք նկար 12-ի վրայ ներկայացրած գործիքը, որ բաղկացած է մետաղէ ողորկ գնդից և նոյն նիւթից շինած օղակից։ Սովորական ժամանակ գունդն ազատ անցնում է օղակի միջով։ Բայց երբ սպիրտային լամպի վրայ տաքացնելուց յետոյ նորից փորձում ենք, տեսնում ենք, որ օղակի անցքով նա այլևս չի անցնում։




Նկար 12.

Ուրեմն տաքանալուց գունդը մեծացաւ: Քիչ ժամանակից յետոյ նանորից անցնում է օղակի միջով, որովհետև սառելուց նորից սեղմում, փոքրանում է:

Առանց այդ գործիքն ունենալու էլ կարող ենք նոյն բանը հաստատել: Դրա համար տախտակի վրայ երկու մեխ ենք խփում, այնպէս որ նրանց արանքով անցնի հինգկոպէկանոցը (Նկար 13): Յետոյ դրամը լաւ տաքացնում ենք և նորից փորձում: Հինգկոպէկանոցն այժմ չի անցնում, որովհետև տաքանալուց ընդարձակւեց: Քիչ ժամանակից յետոյ, նա նորից կանցնի, որովհետև կսառի և նորից իր հին ծաւալը կստանայ, այսինքն կսեղմալի:

Այդ եղանակով կարող ենք հաստատել, որ բոլոր պինդ մարմիններն էլ տաքանալուց ընդարձակւում են. միայն այդ ընդարձակւելը կատարւում է շատ փոքր չափով. այդ պատճառով էլ չենք նկատում: Սակայն այդ ընդարձակւելը կատարւում է շատ մեծ ուժով: Մենք գիտենք օրինակ՝ որ եռացող ջրից բաժակը պայթում է: Եթե եռացող ջուրն ածում ենք սառը բաժակի մէջ, սրա ներբեն շերտըն աւելի արագ տաքանում ու ընդարձակւում է: Արտաքին շերտն ընդհակառակը տաքանում է աւելի դանդաղ, հետեւապէս աւելի քիչ է ընդարձակւում: Այդ պատճառով ներքին շերտը ձգում է արտաքինին ու պայթեցնում: Ճիշտ այդպէս էլ պատռում է նեղ շորը համեմատաբար աւելի հաստ մարդու վրայ:




Նկար 13.

Տաքանալուց մարմինների ընդարձակւելը և պաղելուց նրանց սեղմելը շատ մեծ նշանակու-

թիւն ունի բնութեան մէջ: Ամենապինդ քարերն ու ապասաժները, որոնցից բաղկացած են լեռները, ցերեկը մի կողմից աւելի են տաքանում, միւս կողմից պակաս և այդ պատճառով անդադար ճագճգում են և հետզհետէ քայլայւում:

11. Հեղուկ մարմինների ընդարձակւելը: Զերմաչափ



Նկար 14.

Նոյն երեսյթը կատարւում է և հեղուկների մէջ: Այդ բանը հաստատելու համար վերցնում ենք բաւականին մեծ սրւակ ու լցնում ջրով (Նկար 14): Որ փորձն ամբողջ դասարանին պարզ երևայ, սրւակի ջրին որևէ գոյն ենք տալիս: Սրւակի բերանն ամուր ծածկում ենք բետինէ խցանով, իսկ խցանի միջով ապակէ երկար խողովակ ենք անցկացնում: Անհրաժեշտ է, որ սրւակը ամբողջովին լիքը լինի (բնշու): Ապա սպիրտային լամպի օգնութեամբ սկսում ենք տաքացնել սրւակը, հետեւապէս և նրա միջի ջուրը: Քիչ ժամանակից յետոյ կնկատենք, որ ներկած հեղուկը կամաց-կամաց անցնում է խողովակի մէջ և բարձրացնում է բարձրացնում վեր: Եթէ փորձը շարունակենք քիչ երկար, կնկատենք, որ հեղուկը կհամնի խողովակի ծայրին ու կսկսի թափւել: Այժմ եթէ սրւակը յետ գնենք կրակից, ջուրը կսկսի սառել և կիշնի. այսինքն աւելի փոքր տեղ կրոնի: Նոյն բանը տեղի է ունենում և բոլոր հեղուկների վերաբերմամբ:

Այդ փորձից մենք պիտի եզրակացնենք և այն, որ հեղուկ մարմիններն աւելի խիստ են ընդարձակւում տաքանալուց և սեղմում սառելուց, քան պինդ մարմինները: Ցիրաւի՝ փորձի ժամանակ սրւակն ու նրա միջի ջուրը տաքանալով՝ ընդարձակւում են երկուան էլ. բայց որով-

հետեւ հեղուկ ջուրն աւելի շատ է ընդարձակվում, այդ պատճառով նա ոչ միայն բռնում է սրւակի ընդարձակւած տեղը, այլ բարձրանում է խողովակով և նոյնիսկ սկսում է թափւել նրանից:

Հեղուկների այդ յատկութիւնից օգտւելով, յօրինել են ջերմաչափը: Դրանով չափում ենք մեր բնակարանների կամ զանազան մարմինների տաքութիւնը: Զերմաշափի գլխաւոր մասը մի ապակէ բարակ խողովակ է իր գնդածե փակ ծայրով: Այդ գունդը և խողովակի մի մասը լցրած է սնդիկով: Տաք տեղում սնդիկն սկսում է լայնանալ ու խողովակով բարձրանում է վեր: Ցրտից նա սեղմում է ու սկսում է իջնել: Զերմաշափի տախտակի վրայ, նշաններ են դրած, որոնցով որոշում ենք տաքութիւնը:

Եթէ ջերմաչափի գնդածե մասն իջեցնենք հալող սառուցի, կամ սառչող ջրի մէջ, կնկատենք, որ նրա սնդիկն սկսում է իջնել, հասնում է 0 նշանին ու կանգնում: Այ-

նուհետեւ մինչև որ ամբողջ սառուցը չ'ալի, կամ ամբողջ ջուրը չսառչի, սնդիկը խողովակի մէջ ոչ կրարձրանայ և ոչ կիջնի: Այժմ՝ եթէ ջերմաչափը գետեղենք եռացող ջրի մէջ, կնկատենք, որ սնդիկն սկսում է բարձրանալ ու համելով 80 աստիճանին՝ կանգ է առնում: Այնուհետեւ ինչքան էլ կրակն ուժեղացնենք, սնդիկը չի բարձրանայ, մինչև որ բոլոր ջուրը եռավուց չգոլորշիանայ: Այդպէս ուրեմն 0 նշանը սառուցի հալման կամ ջրի սառչելու աստիճանն է, իսկ 80-ը՝ ջրի եռացման:

Զերմաչափը շինում են այսպէս: Վերցնում են ապակէ բարակ խողովակ, որի մի ծայրը փակ է և գնդածե ուռեցրած, իսկ միւսը՝ բաց է: Խողովակի մի մասը և ուռոյցը լցնում են սնդիկով: Ապա սնդիկը տաքացնում են այնքան, որ լայնանայ և լցնի ամբողջ խողովակը մինչև ծայրը: Այդ դրութեամբ խողովակի միւս ծայրն էլ են



Նկար 15.

ծածկում: Այժմ սնդիկը հովանալով՝ իջնում է ու բռնում է խողովակի մի մասը միայն. իսկ նրանից վերև դատարկ տարածութիւն է ստացւում: Այդ բանը շատ կարևոր է. որովհետեւ եթէ խողովակում օդ մնայ, նա էլ տաքանալուց կը լայնանայ ու կսկսի ձնշել սնդիկին. ուրեմն սնդիկի ցուցմունքը ուղիղ չի լինի:

Երբ խողովակը պատրաստ է, ամրացնում են տախտակի վրայ ու իջեցնում հալող սառուցի մէջ: Որտեղ սնդիկը կանգ է առնում, դրա հանդէպ տախտակի վրայ նշանակում են 0 թւանշանը: Յետոյ նրան գետեղում են եռացող ջրի մէջ: Սնդիկն սկսում է բարձրանալ և նորից կանգ է առնում: Դրա դիմացը նշանակում են 80 և ապա 0-ից մինչև 80-ը եղած տարածութիւնը բաժանում են 80 հաւասար մասերի, որոնց աստիճանն են ասում: Որովհետեւ յաճախ ջերմաչափի սնդիկը զերօից ցած էլ է իջնում, ուստի նոյնպիսի աստիճաններ կարկինով նշանակում են և զերօից ներքև: Այժմ արդէն ջերմաչափը պատրաստ է: 0-ից բարձր աստիճանները կոչւում են տաքութեան աստիճաններ և նշանակում են՝ կամ առջնը «+» դրած, կամ առանց նշանի: 0-ից ցածը աստիճանները կոչւում են ցրտութեան աստիճաններ ու նշանակում են թւի առջնը «—» նշանը դրած: Բացի դրանից տաքութեան կամ ցրտի աստիճանը նշանակելու համար գրում են սնդիկի ցոյց տւած թիւը և դրա աջ կողմից վերևում մի փոքրիկ օ:

Այդ ջերմաչափը յօրինել է յայտնի գիտնական թեօմիւրը և այդ պատճառով էլ դա կոչւում է թեօմիւրի ջերմաչափ: Մի այլ գիտնական, Յելսիոս անունով, մի ուրիշ ջերմաչափ շինեց, որը դրանից տարբերում է միայն նրանով, որ նրա վրայ եռացման կէտը 80-ի տեղ 100 թւով է նշանակւած: հետևապէս նրա հալման և եռացման կէտերի մէջ եղած տարածութիւնը բաժանած է 100 մասի: Ուրեմն Յելսիոսի ջերմաչափի աստիճանները քիչ փոքր են թեօմիւրի ջերմաչափի աստիճաններից:


Հիւսիսային երկրներում, օրինակ Սիբիրում, տաքու-

թեան աստիճանը երբեմն իջնում է մինչև 50 և աւել աստիճան գերօից ցած: Այդպիսի երկներում վերոյիշխալ ջերմաչափերը անպէտք են, որովհետև սնդիկն արդէն—33° տաքութեան ժամանակ սառչում ու պնդանում է: Դրա համար այդ երկներում այնպիսի ջերմաչափեր են գործածում, որոնց մէջ սնդիկի տեղ սպիրտ է ածած: Սպիրտը տաքութեան այդ աստիճաններին չի սառչում:


12. Գազային մարմինների ընդարձակւելը

Տաքանալուց գազային մարմիններն անհամեմատ աւելի արագ և աւելի խիստ են ընդարձակւում: այդ պատճառով դրանց դիտելն էլ աւելի հեշտ է: Դրա համար վերցնում ենք մի խոշոր դատարկ սրւակ, որի բերանը ծածկում ենք բետինէ խցանով: իսկ խցանի միջով անց ենք կացնում մի ծնկաւոր խողովակ (նկար 16): Խողովակի ստորին մասում ներկած ջուր ենք ածում՝ դարձեալ նրա համար, որ գասարանի ամենահեռաւոր աշակերտներն էլ տեսնեն փորձը: Սրւակի մէջ իհարկէ օդ կայ: Այդ օդը տաքացնելու համար կարիք էլ չկայ, որ նրա տակը լամպ վառենք: Բաւական է, որ ձեռքներիս ափերով բռնենք սրւակը, որ նա տաքանայ ու այդ տաքութիւնն անցնի նրա միջի օդին: սա էլ լայնանալով՝ արագութեամբ սկսում է ջրի կաթիլը քշել դէպի վեր: Երբ սրւակն ազատ ենք թողնում, ջուրը նորից իջնում է ցած: Դրա պատճառն այն է, որ սրւակի օդը ձեռքներս հեռացնելիս սառում է ու աւելի փոքր տեղ է բռնում:

Ինչպէս ասացինք, օդը և միւս գազային մարմինները տաքութիւնից աւելի խիստ են ընդարձակւում: Եթէ




Նկար 16.



Նկար 17.

մետաղէ սրւակի մէջ, որի բերանն ամուր ծածկած է խցանով, նա լայնանալով այնքան առաձգականութիւն է ստանում, որ վերջն ուժեղ պայթիւնով դուրս է ձգում խցանը: իսկ եթէ նոյն փորձն ապակէ սրւակի մէջ կատարենք, սրւակը կապայթի և նրա կտորները կարող են վնասել մեզ: Սակայն առանց վտանգի ապակէ սրւակի օդնութեամբ կա-



Նկար 18.

Նկար 19.

ըող ենք հետևեալ հետաքրքիր փորձը կատարել։ Սրւակի բերանին բետինէ թաղանթ ենք կապում ու ապա սկսում ենք տաքացնել։ Նրա միջի օդը լայնանում է ու սկսում է գնդաձե ուոցնել թաղանթը։ Եթէ տաքացնելը շարունակենք, թաղանթը, բարձրածայն պայթիւն արձակելով, պատուում է (նկար 18):

Հասկանալի է իհարկէ, որ օդը տաքութիւնից լայնանալով՝ միևնոյն ժամանակ և թեթևանում է։ Այդ բանը նկատում ենք գրեթէ իւրաքանչիւր քայլափոխում։ Օրինակ՝ մենք տեսնում ենք, որ վառարանը վասելիս տաքացած օդը ծիփ հետ դուրս է գնում ծինելոյզից։ Իսկ եթէ թղթից պտուտակաձե մի շերտ կտրենք և մի ծայրին ամրացած՝ պահենք վառած լամպի ապակու բերանից քիչ վեր, կնկատենք, որ տաքացած օդն այնպիսի ուժով է բարձրանում վեր, որ արագ պտտեցնում է նրան։

13. Տաքութիւն եւ ցուց։ Լաւ եւ վաս հաղորդիչներ

Տաքութիւնն այն պատճառն է, որից սառուցը հալւում է, ջուրը եռ է գալիս և այլն։ Զանազան առարկաների տաքութիւնը կարող ենք որոշել ձեռքերի օգնութեամբ՝ շոշափելով։ Երբ ձեռքով շփում ենք այս կամ այն մարմինը, մէկը կարող է տաք լինել, միւսը՝ սառ։ Տաք ասում ենք այն մարմնին, որի տաքութիւնը մեր մարմնի տաքութիւնից բարձր է։ Իսկ երբ որևէ առարկայի տաքութիւնը մեր մարմնի տաքութիւնից ցածր է, դրան ցուրտ ենք ասում։ Ուրեմն ցուրտը ոչ թէ մի տարբեր բան է, այլ նոյն տաքութիւնն է, միայն պակաս քանակութեամբ։

Ինչպէս ասացինք, զանազան մարմինների տաքութիւնը որոշում ենք շօշափելով։ Սակայն այդ բանը կարող է մեզ սխալեցնել։ Օրինակ՝ սենեակում եղած ջուրն աւելի սառն է թւում, քան շրջապատող օդը։ Թէև դրանց տաքութեան աստիճանը միևնոյնն է։ Նոյնպէս միևնոյն առարկան կարող է մեզ համար թէ տաք երևալ, թէ սառ։ Յիշաւի, եթէ ձեռքս իջեցնեմ

սենեակի օդի տաքութեան ջրի մէջ, նա սառը կթւայ. բայց եթէ նախ ձեռքս պահեմ աւելի սառը ջրի մէջ և ապա իջեցնեմ սենեակի տաքութեան ջրի մէջ, դա արդէն տաք կերեայ։ Ուրեմն միմիայն շօշափելով տաքութեան մասին ճիշտ գաղափար կազմել չի կարելի։ Դրա համար պէտք է անպատճառ դիմենք ջերմաչափի օգնութեան։

Բնութեան մէջ տաքութեան ամենազլիսաւոր աղբիւրն արեգակն է։ Եթէ արեգակը չլինի, երկիրն ամբողջովին կծածկելի սառուցով և բոլոր մարդիկ, բոյսերն ու կենդանիները կոչնչանան։ Սակայն ի՞նչու արեգակն ամառ և ձմեռ հաւասար քանակութեամբ տաքութիւն չի տալիս մեզ։ Դրա պատճառն այն է, որ ձմեռը նա օրւայ ընթացքում քիչ է մնում երկնքում, քիչ է բարձրանում և նրա թեք ձառագայթները քիչ տաքութիւն են տալիս։ Ամառը ընդհակառակը՝ արել թէ աւելի երկար է մնում երկնքում և թէ աւելի շատ է բարձրանում։ Եւ այդ պատճառով նրա ուղղահայեաց ձառագայթներն աւելի շատ տաքութիւն են տալիս։

Տաքութեան երկրորդ աղբիւրը կրակն է, որն ստանում ենք զանազան նիւթեր այրելուց, օրինակ՝ փայտ, ածուխ, նաւթ և այլն։ Վառող նիւթերի տւած տաքութեան աստիճանը շատ տարբեր է լինում, նայած նիւթի յատկութեան, քանակութեան և այլն։

Տաքութիւն ստանում ենք և մարմինները միմիանց ուժեղ շփելուց։ Եթէ վերցնենք մի կառը չոր փայտ և դրանով սկսենք ուժով շփել մի ուրիշ փայտի, որն անշարժ ամրացրած է մի տեղ, կնկատենք որ երկու փայտն էլ շփման տեղում այնքան են տաքանում, որ սկսում են ծուխ արձակել։ Աւելի ուժեղ և երկար շրմելուց դրանք կարող են և բոցավառել։ Վայրենիներից շատերն այժմ էլ միայն այդ եղանակով են կրակ ստանում։

Ուժեղ հարւածն էլ տաքութիւն է առաջացնում։ Օրինակ՝ եթէ դարբնի սալի, կամ նոյնիսկ տափակ բարի վրայ երկաթէ լար գնենք և ուժեղ կերպով սկսենք մուրճով

խփել, լարն այնքան կտաքանայ, որ ձեռք տալ չենք կարող:

Զանազան մարմիններ տարբեր արագութեամբ են տաքանում: Օրինակ՝ եթէ բաժակի մէջ եռացող ջուր լըցնենք ու դրա մէջ մի-մի արծաթէ և ապակէ դդալներ դնենք, քիչ ժամանակից յետոյ կնկատենք հետևեալը. արծաթէ գդալի ջրից դուրս մնացած մասն էլ այնքան կտաքանայ, որ ձեռք տալ չենք կարող. մինչդեռ ապակէ գդալի ազատ ծայրը գրեթէ չի տաքանայ: Դրա պատճառն այն է, որ ապակու միջով տաքութիւնը դժւարութեամբ ու դանդաղ է անցնում, ընդհակառակը՝ արծաթի միջով աւելի արագ: Բնութեան մարմիններից ոմանք այդ կողմից նման են արծաթին, միւսներն ապակուն: Առաջին խմբի մարմինները կոչւում են տաքութեան յաւ հաղորդիչներ, երկրորդինը՝ վատ հաղորդիչներ: Արծաթը, երկաթը, պղինձը և առհասարակ բոլոր մետաղները լաւ հաղորդիչներ են. ընդհակառակը՝ բամբակը, բուրդը, փայտը, ապակին, ձիւնը, օդը վատ հաղորդիչներ են:

Տաք մարմինը, ինչպէս գիտենք, սառը տեղ մնալով, հետզհետէ սառում է ու ստանում է շրջապատող օդի տաքութեան աստիճանը. որովհետև նրա տաքութիւնը հետզհետէ անցնում է շրջապատող մարմիններին: Նոյն պատճառով էլ սառը մարմինը տաք տեղում հետզհետէ տաքանում է և ստանում է շրջապատի տաքութեան աստիճանը: Առօրեայ կեանքում յաճախ հարկաւոր է լինում երկար պահել մարմնի տաքութիւնը կամ սառնութիւնը: Այդ դէպքում դիմում ենք վատ հաղորդիչների օգնութեան: Օրինակ՝ երբ ամառը ցանկանում ենք սառուցը պահպանել շուտ հալելուց, նրան ծածկում ենք խոտով, յարգով կամ փայտի թեփով: Չմեռը բնակարանի տաքութիւնը պահպանելու համար լուսամուտներին կրկնակի փեղկեր են դնում: Այդ փեղկերի արանքում եղած օդի միջով սենեակի տաքութիւնը դժւարութեամբ և դանդաղ է դուրս գնում: Բուրդն ու բամբակը վատ հաղորդիչներ են հէնց այն պատճառով, որ նրանց մազիկների արանքում օդ է մնում, որն

իր միջով տաքութիւնը չի անցկացնում: Այդ պատճառով մարդկանց զգեստը կամ կենդանիների մարմինը ծածկող բուրդը, մազը կամ վետուրն այն նշանակութիւնն ունեն, որ դրանց օգնութեամբ մարմինը ծածկւած է օդի գրեթէ անշարժ շերտով: Այդ օդը մարմնից տաքանալով՝ իր տաքութիւնը դժւարութեամբ է տալիս զրսի օդին:

մենք զգում ենք նրա դիմադրութիւնը։ Այդ դիմադրութիւնն աւելի ուժեղ է լինում, երբ լայն զգեստ ենք հագած լինում, կամ երբ ձեռքներիս բաց հովանոց ենք ունենում։

15. Օդի ծանրութիւնը։ Մքնոլորս

Օդը գազային մարմին է. իսկ գազի զլխաւոր յատկութիւնն այն է, որ ձգտում է ցրւել և տարածւել ամբողջ ազատ տարածութեան մէջ։ Եթէ այդպէս է, օդը պէտք է հաւասարապէս տարածւած լինէր ամբողջ տիեզերքի մէջ։ Սակայն նա տարածւած է միայն երկրի շուրջը, որոշ հաստութեան շերտով շրջապատում է երկրագունդը։ Դրա պատճառն այն է, որ երկրագունդը դէպ իրեն է ձգում օդը, ինչպէս և ամեն մի մարմին։ Այդ պատճառով էլ օդը կպած է երկրին։ Որոշ տարածութեամբ երկրագունդից հեռու օդ չկայ։

Եթէ երկրագունդը դէպ իրեն է ձգում օդը, ուրեմն օդն էլ ծանրութիւն ունի. որովհետեւ, ինչպէս զիտենք, մարմնի ծանրութիւնը նրանիցն է, որ նրան ձգում է երկիրը։ Յիրաւի, գտել են, որ օդն էլ ծանրութիւն ունի և բոլորովին դժւար չէ նրա քաշը որոշել։ Դրա համար վերցնում ենք մի մեծ և որքան կարելի է թեթև դատարկ սըրւակ, որի բերանն ամուր ծածկած է ուետինէ խցանով։ Սրւակը թէկ դատարկ ենք ասում, բայց մենք զիտենք, որ նա դատարկ չէ, այլ լիքն է օդով։ Ենթադրենք, թէ սրւակի բովանդակութիւնը 1000 խոր. ասնտիմետր է, այսինքն սովորական ժամանակ այդքան օդ է պարունակում։ Ստոյգ կշեռքի օգնութեամբ որոշում ենք օդով լիքը սրւակի ծանրութիւնը։ Յետոյ սրւակի բերանը բաց ենք անում ու սկսում ենք տաքացնել սպիրտային լամպի վրայ։ Տաքանալուց նրա միջի օդն ընդարձակւում է ու սկսում է դուրս գալ։ Այդ եղանակով կարող ենք սրւակի օդի կիցն աւելին դուրս հանել։ Յետոյ տաքացրած սրւակի բերանը աւելին դուրս հանել։

II

ՕԴ

14. Ի՞նչ տեսակ մարմին է օդը

Մարմինների տարածականութիւնը ցոյց տալիս մասմբ ծանօթացանք օդին։ Երբ խցանի միջով ձագար անցկացրինք ու ձագարի մէջ ջուր ածեցինք (նկար 2), ջուրը չթափւեց սրւակի մէջ. որովհետեւ նա դատարկ չէր, այլ լիքն էր օդով։ Յետոյ փորձը ըիչ փոփոխելով (նկար 3), ստիպեցինք օդին պղպջակների ձեռով դուրս գալ սրւակի բերանը դրած խողովակի ծայրից։ Սրւակի մէջ օդը չէր երևում, որովհետեւ նա անզոյն եւ թափանցիկ մարմին է. խողովակի ծայրից նա բարձրանում էր ջրի երեսը պղպջակների ձեռով, որովհետեւ նա զազ է եւ ջրից շատ թեթեւ. նրա դուրս գալը մենք չէինք զգում, որովհետեւ նա ոչ հոտ ունի եւ ոչ համ։

Երկրի երեսին օդը տարածւած է ամեն տեղ և ամեն կողմից շրջապատում է մեզ։ Նա մարդու և կենդանիների համար շատ կարևոր է։ Սակայն նրա ներկայութիւնը չենք զգում, չենք շօշափում, որովհետեւ նա շատ նուրբ մարմին է։ Երբեմն էլ պատահում է, որ մենք շօշափում ենք նրան։ Օրինակ՝ երբ նա արագ շարժում է, ուժով քսւում է մեր երեսին, ձեռքերին և այդ մենք զգում ենք։ Այդ դէպում նա բարձրացնում է մեր մազերը, շարժում է մեր զգեստը և այն։ Օդի ներկայութիւնը կարող ենք զգալ և նրա հանգիստ ժամանակը, երբ ինքներս արագ շարժում ենք, օրինակ՝ երբ վազում ենք. այդ դէպում

րանը նորից ամուր փակում ենք խցանով (ինչու) և կը շուռական սուրբ սրբակի քաշը պակաս է: Ենթադրենք, թէ տաքացնելուց յետոյ սրբակի քաշը պակասեց մի գրամով. ուրեմն սրբակից դուրս գնացած օդը քաշում է մի գրամ: Եթէ տաքացը սրբակը կշռելուց յետոյ իջեցնենք ջրի մէջ ու խցանը հանենք, ջուրը կակսի անցնել սրբակի մէջ ու կցնի նրա որոշ մասը: Պարզ է, որ սրբակի մէջ այնքան ջուր կանցնի, ինչքան որ օդ է դուրս եկել: Եթէ օրինակ սրբակի մէջ 500 խոր. սանտիմետր ջուր անցաւ, նշանակում է, որ նրանից 500 խ. սանտ. օդ էր դուրս եկել և այդքան օդը քաշում է 1 գրամ:

Այդպիսով գտել են, որ օդը 770 անգամ թեթև է ջրից և որ նրա 1000 խոր. սանտիմետրը քաշում է $1\frac{1}{3}$ գրամ: Եթէ այդ թիւը սովորական չափերի վերածենք, կտեսնենք, որ մի խորանարդ ոտնաչափ օդը քաշում է $8\frac{1}{2}$ մսխալ: Դրա օգնութեամբ կարող ենք որոշել ամեն մի տարածութեան մէջ եղած օդի քաշը: Օրինակ մի սենեակ, որի երկարութիւնն երեք սաժէն է, լայնութիւնը նոյնպէս երեք սաժէն, իսկ քարձութիւնը $1\frac{1}{2}$ սաժէն, պարունակում է իր մէջ մօտ 11 փութ օդ: Այդպէս ուրեմն օդը թէև շատ թեթև մարմին է, բայց մեծ քանակութեամբ վերցրած՝ նշանաւոր քաշ է ունենում:

Օդի տարածութիւնը երկրից դէպի վեր շատ մեծ է: Մարդիկ օդապարիկի օգնութեամբ բարձրացել են երկրից մինչև տասը վերստ և դարձեալ իրենցից վերև ամպեր են տեսել. ուրեմն օդի այն շերտը, որտեղ լողում էին այդ ամպերն, աւելի բարձր էր: Գիտնականները դտել են, որ օդի շերտի բարձրութիւնը հասնում է մինչև 300 վերստի: Այդպիսի հաստ շերտով նա շրջապատում է երկրագունդը ամեն կողմից:


Երկրագունդը շրջապատող օդային այդ շերտը կոչում է միջնորդու:

16. Օդի առաձգականութիւնը եւ նեռումը

Մենք արդէն տեսանք, որ երբ օդի վրայ ճնշում ենք գործում, նա սեղմւում է (նկար 5 և 7). իսկ երբ դադարում ենք սեղմելուց, նա նորից ընդարձակւում է և բռնում է իր նախկին ծաւալը: Ուրեմն սեղմւած օդը ճնշում է գործում այն բոլորի վրայ, ինչ որ շրջապատում է նրան ու խանգարում է նրա ընդարձակւելուն:

Որքան շատ է սեղմւած օդը, այնքան աւելի մեծ է նրա ճնշումը: Բացի դրանից սեղմւած օդը ճնշում է գործում ոչ թէ մի որոշ, այլ ամեն ուղղութեամբ: Ցիրաւի՝ այն փորձանակը (նկար 7), որի մէջ օդը սեղմել էինք, ինչ ուղղութեամբ էլ որ պահում էինք, ազատ թողած խցանը դուրս էր գնում փորձանակից: Որ սեղմւած օդը ճնշում է գործում ամեն ուղղութեամբ, կարող ենք հաստատել և հետևեալ փորձով: Սրւակի մէջ կիսով չափ ջուր ենք ածում ու բերանն ամուր փակում ուետինէ խցանով: Խցանի միջով էլ մի երկար խողովակ ենք սննդկացնում, որի վերին ծայրը նեղացրած է, իսկ ստորինը հասնում է մինչև սրւակի խորը (նկար 21): Եթէ խողովակի դրսի ծայրով սկսենք ուժով օդ փչել, կտեսնենք, որ դա պղպջակների ձևով ներս է գնում սրւակի մէջ: Պարզ է, որ սրվակի միջի օդը սեղմւեց, որովհետև այնտեղի չսեղմւած օդին աւելացաւ որոշ քանակութեամբ նոր օդ: Ուրեմն աւելի մեծ քանակութեամբ օդը դարձեալ նոյն տեղն է բռնել: Խողովակը բերանից հեռացնելով, նկատում ենք, որ նրա ծայրից ջուրը շատը լանի պէս գցում է վեր: Պատճառը հասկանալի է: Սրւակի միջի սեղմւած օդը ճնշում է գործում ամեն ուղղութեամբ: Սակայն ամուր զրւած խցանը և ապակէ պատերը զիմադրում են այդ ճնշման. իսկ հեղուկ ջուրը տեղի է տալիս նրան ու խողովակով վեր բարձրանալով՝ ըսկում է դուրս թափւել: Ջուրը կշարունակէ դուրս հոսել այնքան ժամանակ, մինչև որ նրա հեռանալով սրւակի մէջ այնքան տեղ կբացւի, ինչքան որ օդ է ներս մտել:


Օդի կամ գազերի սեղմւելն ու կատարած ճնշումը յա-
ճախ տեսնում ենք առօրեայ կեանքում: Օրինակ՝ եթէ
սելտերեան ջրի շահ երկաթէ թե-
լերն արձակենք, խցանը, յաճախ
առանց ձեռք տալու, պայթիւնով
դուրս է թռչում շահ բերանից:
Պատճառն այն է, որ սելտերեան
ջրի մէջ սեղմւած գազ կայ: Որ-
քան այդ գազի քանակութիւնը
շատ լինի, այսինքն որքան նա ա-
ւելի է սեղմւած, այնքան նրա կա-
տարած ճնշումն աւելի ուժեղ է:
Երբեմն շահ մէջ գազի ճնշումն այն-
քան մեծ է լինում, որ տրաքացնում
է շիշ: Այդ բանն էլ ցոյց է տա-
լիս, որ սեղմւած գազը ճնշում է
գործում ոչ միայն դէպի վեր, այլ ամեն ուղղութեամբ:



Նկար 21.

17. Մթնոլորտի ճնշումը


Ճնշում է գործում ոչ միայն սեղմւած օդը, այլ և այն
օդը, որ շրջապատում է մեզ, այսինքն մթնոլորտը: Այդ
բանը հաստատելու համար հետևեալ հասարակ փորձն ենք
կատարում: Բաժակը մինչև
պոռնկը լցնում ենք ջրով ու
ծածկում խաղաթով (նկար
22): Ապա թուղթը մատով
բռնած՝ բաժակը զգուշու-
թեամբ դարձնում ենք ցած ու
մատներս հեռացնում: Եթէ
փորձն զգուշութեամբ ենք կա-
տարել ու բաժակի մէջ օդ չի
անցել, խաղաթուղթը մնում
է բաժակի բերանին ու ջուրն



Նկար 22.

էլ չի թափւում: Սակայն բաժակի մէջ ջուր կայ և այդ
ջուրն էլ որոշ ծանրութիւն ունի: Այդ ծանրութեան չա-
փով ջուրը վերկից ճնշում է թղթի վրայ: Այնուամենայնիւ
խաղաթուղթը բաժակի բերանից չի ընկնում: Ուրեմն պիտի
եզրակացնենք, որ թղթի վրայ մի բան էլ ճնշում է ցածրից
և աւելի մեծ ուժով, քան ջուրը վերկից: Սակայն խաղա-
թուղթից ցած, բացի օդից, ուրիշ բան չկայ: Պարզ է ուրեմն,
որ նրա վրայ ցածրից ճնշում է օդը:

Այդ բանը հաստատելու համար մի ուրիշ փորձ կա-
տարենք: Բաժակի փոխարէն վերցնենք մի ձագար, խողո-
վակի ծայրը մատով բռնենք ու մէջը լիքը ջուր ածենք.
ապա դարձեալ բերանը խաղաթուղթով ծածկենք ու դարձնենք:
Խաղաթուղթը կմնայ ձագարի բերանին կպած և ջուրը չի
թափւի (նկար 23): Սակայն հէնց որ ձագարի խողովակի
ծայրից հեռացնում ենք մատներս, իսկոյն թուղթն ընկ-
նում է, և ջուրը թափւում: Որովհետև այժմ խաղաթուղթի
վրայ ցածրից ճնշում է միայն օդը. իսկ վերկից թէ ջուրը
և թէ խողովակով ներս գնացած օդը: Վերկի կողմի ճնշումն
այժմ աւելի շատ է, քան ցածրինը, և այդ պատճառով էլ
խաղաթուղթը վայր է ընկնում:




Նկար 23.

Նկար 25. Նկար 26.

Մթնոլորտային օդի ճնշման հիման վրայ յօրինւած է
և 24-րդ նկարի վրայ ցոյց տաւծ անօթը: Դա իր ստո-
րին կողմում ծորակ ունի, իսկ վերին կողմում զտնւում է
բերանը, որը փակւում է խցանով: Եթէ անօթը լիքը լրց-
նենք ջրով, ու բերանն ամուր փակենք, կտեսնենք, որ
ծորակը բանալիս ջուրն այդտեղով չի թափւում: Պատճառն

այն է, որ ծորակի բերանին ցածրից ճնշում է օդը և չի թողնում, որ ջուրը թափւի: Եթէ բերանի խցանը հեռացնենք, օդը կսկսի վերևից չած իջնել և ճնշել ջրին. ջուրն էլ կսկսի ծորակով թափւել: Բայց հէնց որ բերանը փակենք, դարձեալ ծորակից ջուրը կդադարի հոսել:



Նկար 24.

Մթնոլորտային օդի ճնշման հիման վրայ կարող ենք երկու հետևեալ հետաքրքիր փորձերն էլ կատարել: Վերցնում ենք մի սրւակ ու սպիրտի լամպի վրայ տաքացնելուց յետոյ բերանը պինդ ծածկում ենք բետինէ թաղանթով (Նկար 25): Տաքանալուց սրւակի միջի օդն ընդդարձակում է, ու նրա մի մասը դուրս գնում: Սակայն երբ սրւակը հովանում է, նրա միջի մնացած օդն էլ է հովանում ու սեղմւում: Այժմ դրսի օդի ճնշումն աւելի ուժեղ է, քան սրւակի օդինը. այդ պատճառով էլ դրսի օդը ճնշում է ու իջեցնում է բետինէ թաղանթը դէպի սրւակի ներսը:

Միւս փորձը կատարում ենք այսպէս: Նոյն սրւակը տաքացնելուց յետոյ բերանը փակում ենք խցանով, իսկ խցանի միջով բետինէ խողովակ ենք անցկացնում, որի անցքը բռնած է փականով (Նկար 26): Սրւակը հովանալուց յետոյ նրան շուռ ենք տալիս, ապա բետինէ խողովակի ծայրն իջեցնում ենք ջրի մէջ ու փականը թուլացնում: Զուրը դրսի օդի աւելի ուժեղ ճնշման տակ խողովակով բարձրանում է վեր և սկսում է խփել ինչպէս շատրւան:

Վերջապէս մթնոլորտային օդի ճնշումով ենք բացատրում և հետևեալ փորձը: Վերցնում ենք ջրով լիքը շիշը ու բերանը մատով բռնած՝ իջեցնում ենք ափսէի ջրի մէջ: Շշի ջուրն ափսէի մէջ չի թափւում, թէկ շի մէջ ջուրն աւելի բարձր է կանգնած, քան ափսէի մէջ: Պատճառն այն է, որ օդը ճնշում է գործում ափսէի ջրի երեսին և չի թոյլ տալիս, որ ջուրը շահագ թափւի: Նա կարող կլինէր

թափւել միայն այն դէպքում, եթէ նրա ճնշումը, այսինքն նրա ծանրութիւնը, օդի կատարած ճնշումից աւելի լինէր:

18. Մթնոլորտի հնւման չափելը: Բարօմետր


Ելևակալենք մի տարածութիւն, որ շրջապատւած է բարձր պարսպով. երևակայենք, թէ այդ տարածութիւնը մինչև պարսպի ծայրերը լցրել ենք բամբակով: Բամբակը թէկ թեթև մարմին է, սակայն նա որոշ ծանրութիւն ունի: Նրա իւրաքանչիւր շերտն իր ծանրութեամբ կնստի ստորին շերտի վրայ և կսեղմի նրան: Այդպիսով ամենաստորին շերտի վրայ ճնշում են գործում վերևի բոլոր շերտերը: Այդ պատճառով նա ամենից շատ կսեղմէի և այնքան հուզ կփայ, որ թաղիքի նման մի բան կդառնայ: Ընդհակառակը՝ վերին շերտը բոլորովին սեղմւած չի լինի:

Նոյնը կատարւում է և օդի հետ: Օդն ի հարկէ բամբակից աւելի թեթև մարմին է. սակայն նրա բարձրութիւնը, ինչպէս ասացինք, ահագին է, մօտ 300 վերստ: Որովհետև օդն էլ ծանրութիւն ունի, ուրեմն նրա իւրաքանչիւր շերտն իր ծանրութեամբ ճնշում և սեղմում է իր տակ գտնւած շերտը: Հետևապէս երկրի երեսին գրտնւած օդը կրում է իր վրայ ամբողջ մթնոլորտի ծանրութեան ճնշումն ու ամենից խիստ է սեղմւած և խտացած: Իսկ մենք արդէն գիտենք, որ որքան գազն աւելի է սեղմւած, այնքան նրա կատարած ճնշումն աւելի ուժեղ է: Ուրեմն պարզ է, որ երկրի երեսի վրայի օդը անհամեմատ աւելի ուժեղ ճնշում է գործում, քան մթնոլորտի աւելի բարձր շերտերում եղածը:

Օդի ճնշումը չափելու համար յօրինել են մի գործիք, որին բարօմետր կամ ծանրաչափ են ասում: Այդ գործիքը շինւած է հետևեալի հիման վրայ: Մենք արդէն գիտենք, որ եթէ ջրով լցրած շիշը փակ բերանով իջեցնենք ջրով լիքը աւազանի մէջ ու յետոյ բերանը բանանք, նրա միջից ջուրը չի թափւի: Աւազանի ջրի վրայ մի կողմից

Ճնշում է օդը, միւս կողմից անօթի ջուրը. բայց որովհետեւ ողի ճնշումն աւելի մեծ է, այդ պատճառով էլ անօթի ջուրը չի թափւում։ Պարզ բան է, որ եթէ հետզհետէ աւելի և աւելի բարձր անօթներ վերցնենք, կգտնենք վերջապէս այնպիսի անօթ, որի միջի ջրի ծանրութիւնը հաւասար կլինի օդի ծանրութեան։ Դրանից երկար անօթ վերցնելիս՝ ջրի ծանրութիւնն օդի ծանրութիւնից աւելի կը լինի, և աւելորդ ջուրը անօթից կթափւի աւազանի մէջ։ Փորձը ցոյց է տալիս, որ մենք պէտք է մօտ 5 սաժէնանոց խողովակ վերցնենք, որ նրա միջի ջրի ծանրութիւնը հաւասար լինի օդի ճնշման։ Պարզ է, որ այդպիսի երկար խողովակով փորձ կատարել անկարելի է։

Այդ պատճառով նոյն փորձերը կատարում ենք սնդի-
 կի օգնութեամբ։ Սնդիկը, ջրից մօտ 14 անգամ ծանր է,
 ուրեմն եթէ ջրի տեղ մնդիկ վերցնենք, նոյն ծանրութիւնն
 ստանալու համար պէտք է մնդիկը
 Ջրից մօտ 14 անգամ պակաս լի-
 նի։ Յիշեալ փորձերը սնդիկի վերա-
 բերմամբ կատարելու համար վերց-
 նում ենք զանազան երկարութեան
 խողովակներ, որոնց մի ծայրը փակ
 է, միւսը բաց։ Դրանց մէջ սնդիկ
 ենք լցնում մինչև ծայրը և բերան-
 ները մատով բռնած՝ իջեցնում ենք
 սնդիկով լի բաժակի մէջ։ Նկատում
 ենք, որ այն խողովակների մէջ, ո-
 րոնց երկարութիւնը 30 մատնաչա-
 փից պակաս է, մնդիկը մնում է լի-
 քը։ Իսկ եթէ վերցնում ենք աւելի
 երկար խողովակ, այդ դէպքում
 խողովակի միջի մնդիկը մասսամբ
 իջնում է և կանգ է առնում միշտ մի
 որոշ բարձրութեան վրայ։ Զափե-
 լով տեսնում ենք, որ բաժակի




Նկար 27.

մնդիկի մակելուոյթից մինչև խողովակի մնդիկի մակերեւոյթը կազմում է ուղիղ 30 մատնաշափ: Ինչ երկարութեան կամ լայնութեան խողովակ վերցնենք, միևնուն է. Նրանց մէջ մնդիկը պիտի իջնի ու կանգնի ուղիղ 30 մատնաշափ բարձրութեան վրայ: Այդ նշանակում է, որ 30 մատնաշափ մնդիկի սիւնի ծանրութիւնը կամ ճնշումը հաւասար է օդի ճնշման: Եթէ վերցնենք մի բառակուսի վերշոկ տրամագիծ ունեցող խողովակ և նրա մէջ 30 մատնաշափ բարձրութեամբ մնդիկ ածենք, այդքան մնդիկը կկշռի ուղիղ 50 ֆունտ: Այդ պատճառով էլ ասում ենք, որ մի քառակուսի վերշոկ տարածութեան վը-րայ օդը ճնշում է 50 ֆունտի ծանրութեամբ:

Բարօմետրի էական մասը հէնց այդ է. այսինքն սնդի-
կով լցրած երկայն խողովակ, որի մի ծայրը փակ է, իսկ միւս
բաց ծայրը իջեցրած՝ սնդիկ ածած բաժակի մէջ (նկար 28):
Արդէն մեզ համար յայտնի պատճառով՝ սնդիկը խողովա-
կից չի թափւում. նա կանգնած է մնում՝ բաժակի սըն-
դիկի մակերեսոյթից հաշւած՝ մօտ 30 մատ-
նաչափ բարձրութեան վրայ: Պատճառն այն է,
որ օդը ճնշում է բաժակի միջի սնդիկի վրայ
ու խողովակի մէջ նրան պահում է իր ճնշման
բարձրութեան վրայ: Ուրեմն օդը սնդիկին
հրում է դէպի խողովակի փակ ծայրը. պարզ
է, որքան օդի ճնշումն ուժեղ լինի, այնքան
սնդիկն այս ծայրում աւելի կբարձրանայ. իսկ
ճնշումը պակասելիս սնդիկն էլ կիշնի: Մթնոլոր-
տի ճնշումն, այսինքն սնդիկի բարձրանալն ու իջ-
նելը դիտելու համար խողովակն ամրացնում ենք
մի նեղ տախտակի վրայ, որի երկարութեամբ
աստիճաններ ենք նշանակում: Այդ աստիճաննե-
րով որոշում ենք մթնոլորտի ճնշման չափը:

Վերևում ասացինք, որ օդի ձնշումը երկ-
ըի երեսին աւելի մեծ է, քան մթնոլորտի
բարձր շերտերում։ Յիշաւի՛ եթէ ծանրաչափը



ձեռքներիս բարձրանանք լեռան վրայ, կնկատենք, որ որքան աւելի ենք բարձրանում, այնքան ծանրաչափի մնդիկն իջնում է, իսկ երբ իջնում ենք, նա նորից սկսում է բարձրանալ:

19. Մթնոլորտի ննուման չափը եւ փոփոխութիւնները


Բարօմետրի օգնութեամբ գտել են, որ մթնոլորտի ճնշումը շատ մեծ է. իւրաքանչիւր քառակուսի վերջոկի վրայ նա ճնշում է 50 ֆունտի ծանրութեամբ։ Այդ հաշով միջին մարդու մարմնի վրայ օդը ճնշում է հազար փետի ծանրութեամբ։ Դա սոսկալի բան է, սակայն այդ ճնշումը մենք չենք զգում, որովհետև մեր մարմինը սկիզբ է առել և զարգացել այդպիսի ճնշման տակ։ Ուրեմն այդ ճնշմանը ներքուստ նա դիմագրում է նոյնչափ ուժով։ Հակառակ դէպքում մեր մարմինը պէտք է սաստիկ սխմւէր, ճմլւէր դրա ազդեցութեան տակ։ Եթէ այդպէս է, ուրեմն մեր մարմնի համար անսովոր և վտանգաւոր կլինի, երբ այդ ճնշումը պակասի (կամ աւելանայ)։ Յիշաւի, օդի բարձր շերտերում, որտեղ մթնոլորտի ճնշումը շատ պակաս է, մարդիկ չեն կարողանում ապրել։

Բարօմետրը ցոյց է տալիս նոյնպէս, որ միևնոյն տեղում մթնոլորտային օդի ճնշումը անփոփոխ չէ։ Միևնոյն տեղում կախած բարօմետրի մնդիկը մերթ բարձրանում է, մերթ իջնում։ Ուրեմն բարօմետրի վրայ եղած օդի սիւնի ծանրութիւնը մերթ աւելանում է, մերթ պակասում։ Բայց երբ մի տեղ այդ ճնշումն աւելանում է, մի ուրիշ տեղ նա անպատճառ պակասում է։ որովհետև ամբողջ մթնոլորտի ծանրութիւնը միշտ մնում է անփոփոխ։

20. Մթնոլորտային օդի շարժութիւնը

Մթնոլորտային օդը երբէք հանգիստ չէ մնում։ Նա շարժում է նոյնիսկ և այն ժամանակ, երբ մենք այդ բանը չենք տեսնում, չենք զգում։

Օդի մշտական շարժւելու պատճառը գտնելու համար հետևեալ փորձը կատարենք։ Կշեռքի լծակին մինժարի փոխարէն դատարկ և բաց սրւակ կախենք, իսկ միւս նժարի վրայ այնքան ծանրութիւն դնենք, որ կշեռքը հաւասարակշռութեան գայ (նկար 29)։ Անհրաժեշտ է միայն, որ նախ կշեռքը ստոյդ լինի և երկրորդ՝ սրւակը լինի մեծ և որքան կարելի է թեթև, այսինքն բարակ ապակուց շինած։ Եթէ սրւակի տակ սպիրտային լամպ վառենք, կտեսնենք, որ նա բարձրանում է վեր, այսինքն թեթևանում է։ Պատճառը գիտենք։ Սրւակի տաքանակուց տաքանում է և նրա միջին օդը. դրանից օդն ընդարձակուում է ու նրա մի մասը դուրս է գնում սրւակից։ Հետևապէս սրւակը թեթեւանում է։ Մթնոլորտային օդի շարժւելու պատճառը հէնց այդ է։ Տաքացած օդն ընդարձակուում է, թեթևանում ու բարձրանում վեր. իսկ սառն օդը գալիս բռնում է նրա տեղը։




Նկար 29.

Օդն արեգակի ճառագայթներից շատ քիչ է տաքանում, որովհետև նա թափանցիկ է։ Ամեն մարդ նկատած կլինի հետևեալ փաստը. երբ արեգակն ընկած է լինում փակ պատուհանի վրայ, այդ դէպքում փայտէ շրջանակը և մանաւանդ երկաթէ մասերը խիստ տաքացած են լինում, մինչդեռ ապակիները գրեթէ բոլորովին սառն են մնում։ Դրա պատճառն այն է, որ թափանցիկ պակառ միջով ա-

րկի ճառագայթներն անցնում են առանց նրան տաքացնելու։ մինչդեռ խաւար փայտի միջով չեն անցնում, այլ մտնում են նրա մէջ ու տաքացնում նրան։ Օդն ապակուց էլ աւե-

լի է թափանցիկ, և այդ պատճառով արեգակի ճառագայթ-ները նրա միջով անցնելիս նրան գրեթէ բոլորովին չեն տաքացնում:

Մթնոլորտային օդը տաքանում է գլխաւորապէս երկրագնդից: Արեգակի ճառագայթներն ընկնում են գետնի վրայ և նրան տաքացնում. իսկ օդը, շփւելով տաքացած երկրին, ինքն էլ է տաքանում: Սակայն տաքացած օդը երկրի վրայ չի մնում: Տաքանալուց նա թեթևանում է ու բարձրանում վեր: Յիրաւի, եթէ ամառայ տաք օրին կէսորից յետոյ նստում ենք մի որևէ տեղ և նայում հեռուն, մեզ թւում է, թէ ծառերը, բարերը տները և ամեն մի առարկայ շարժւում է: Սակայն շարժւում են ոչ թէ այդ առարկաները, այլ օդը: Այդ օդի շիթերն են, որ տատանւելով բարձրանում են վեր:




Նկար 30.

Տաքութեան ազգեցութիւնն օդի վրայ կարող ենք դիտել հետեւեալ փորձի օգնութեամբ: Վերցնում ենք մի մանկական օդապարիկ: Նրա կապին բարակ թելի օգնութեամբ փորձիկ թղթէ արկղիկ ենք ամրացնում. ապա արկղիկի մէջ այնքան ծանրութիւն ենք դնում, որ օդապարիկն օդում ոչ բարձրանայ վեր և ոչ իջնի ցած (Նկար 30): Եթէ այդպէս պատրաստած օդապարիկը բաց թողնենք սենեակում տաք վառարանի մօտ,

հետեւեալ երևոյթը կնկատենք: Նա նախ կբարձրանայ վեր մինչեւ առաստաղը և այստեղից մեղմիկ կլողայ դէպի պատուհանը: Մի առժամանակ այդտեղ մնալով, նա կակսի իջնել ցած ու յատակի երեսով կգնայ դէպի վառարանը: Այստեղից նորից կբարձրանայ վեր իր շրջանաձև ճանապարհորդութիւնը կըկնելու: Օդապարիկի այդպիսի շարժումը սենեակի օդի շարժւելու հետեւանքն է: Տաք վառարանի մօտ օդը տաքանում, թեթևանում ու բարձրանում է վեր:

Դրա տեղը բոնում է լուսամուտների կողմից եկած սառնօդը: Այդ պատճառով էլ տաքացած օդը առաստաղով հոսում է դէպի լուսամուտները՝ այդտեղի դատարկութիւնը լցնելու: Այդտեղ նա որոշ ժամանակից յետոյ սառում է, սեղմւում ու ծանրանում և այդ պատճառով էլ իջնում է ցած ու յատակով հոսում դէպի վառարանը: Քանի վառարանը տաք է և սենեակի օդի զանազան մասերի տաքութիւնը տարբեր, օդի այդ շրջանաձև շարժողութիւնը պիտի շարունակի. և որքան վառարանն աւելի տաք լինի, այնքան օդի շարժողութիւնն աւելի արագ կլինի:

Օդի շարժողութիւնը տեսնելու համար աւելի հասարակ փորձ կարող ենք կատարել (Նկար 31): Եթէ ձմեռ ժամանակ տաք սենեակի դուռը մի փոքր բանանք դէպի նախասենեակը, ապա վառած մոմ բոնենք դոների բացւածքում, կնկատենք հետեւեալը: Բացւածքի վերին մասում մոմի բոցը թեքւում է տաք սենեակից դէպի սառը նախասենեակը. իսկ ստորին մասում՝ նախասենեակից դէպի տաք սենեակը: Մոմի բոցի թեքւելը ցոյց է տալիս, որ վերևով հոսում է տաք օդը, իսկ ցածրով՝ սառը:



Նկար 31.

Մթնոլորտային օդի շարժւելն էլ առաջ է գալիս նրա զանազան մասերի անհաւասար տաքանալուց: Մթնոլորտն տաքանում է երկրից. սակայն երկրագունդն իր բոլոր մասերով հաւասարապէս չէ տաքանում արեգակից: Նրա այն մասերը, որոնք մօտ են հասարակածին, աւելի խիստ են տաքանում: Միւս կողմից երկրագունդն անընդհատ պտտւելով իր առանցքը շուրջը, միշտ զանազան մասերով է դէպի արե-

գակը, իհարկէ, որ կողմը որ դարձած է դէպի արեգակը, նա տաքանում է. սակայն այդ տաքացած կողմը, երբ հեռանում է արեգակից, սկսում է սառել, մինչև որ նորից կդառնայ դէպի արեգակը: Հասկանալի է ուրեմն, որ մթնոլորտի մերթ մի մասն է տաքանում, մերթ միւս:

Որտեղ որ երկրագունդն աւելի խիստ է տաքանում, այնտեղ սաստիկ տաքանում է և օդի ստորին շերտը: Տաքանալով նա թեթևանում է ու բարձրանում վերև: Նորից ցած իջնել այդ օդը չէ կարող, որովհետեւ ցածրից անդադար տաք օդի հոսանք է գալիս վեր: Այդ պատճառով որոշ բարձրութեան վրայ տաք օդն սկսում է ցրւել դէպի զանազան կողմեր: Իսկ այնտեղի շրջակայքում, որտեղ օդը բարձրանում է վեր, մթնոլորտի ճնշումն սկսում է աճել, որովհետեւ այդտեղ ուրիշ տեղերից սառն օդի նորանոր հոսանքներ են գալիս: Այդպէս ուրեմն ստացւում է երկու հարեան շրջաններ մթնոլորտի տարբեր ճնշումով: Որտեղ օդը տաքանում, դէպի վեր է հոսում, այնտեղ մթնոլորտի ճնշումը ցածր է. իսկ միւսում, ուր սառն օդի նորանոր հոսանքներ են գալիս, ճնշումը բարձր է: Օդի այդպիսի տարբեր ճնշումից առաջ է գալիս նրա տեղափոխութիւնը, նրա շարժւելը: Այն տեղերից, ուր օդը խտացած է (ճնշումը մեծ է), նա սկսում է հոսել դէպի այն տեղերը, որտեղ նա նոսրացել է, որտեղ ճնշումը փոքր է:

Այդպէս երկրի երեսով օդը հոսում է բարձր ճնշման տեղերից դէպի ցածր ճնշման տեղերը: Այստեղ տաքանալով՝ նա բարձրանում է վերև և նորից ցրւում դէպի հարեան կողմերը: Այդ է պատճառը, որ օդի վերին շերտերում նրա հոսանքը գնում է տաք երկրներից դէպի ցուրտ երկները, իսկ երկրի երեսին ընդհակառակը՝ ցուրտ երկրից դէպի տաք:

Այդպէս ուրեմն մթնոլորտային օդը միշտ շարժման մէջ է: Երբեմն այդ շարժումն այնքան մեղմէիկ է կատարում, որ մենք չենք նկատում: Բայց աւելի յաճախ օդի


շարժւելը կատարուում է արագ և առաջացնում է այն երկոյթը, որին հողմ կամ քամի ենք ասում:

Օդի շարժւելը կամ քամին շատ մեծ դեր է կատարում բնութեան մէջ: Նախ մարդիկ նրանով օգտուում են հողմաղացներ, կամ այլ գործիքներ բանեցնելու համար: Երկրորդ՝ առագաստաւոր նաւերը միայն քամու օգնութեամբ են շարժւում ծովի երեսին: Սակայն քամու նշանակութիւնն աւելի մեծ է:

Քամին է, որ տաք երկրներից տաքութիւնը տանում, տարածում է սառը երկրներում և ընդհակառակը՝ ցուրտ երկրներից ցրտութիւնն է տարածում տաք երկրներում. այդպիսով նա մեղմացնում է սառուցեալ երկրների ցուրտը և այրեցեալ երկրների շոգը: Բացի դրանից քամին ծովի երեսից առնում է ջուրն ու անձրեկ կամ ձիւնի ձևով տարածում ցամաքի վրայ: Եթէ քամի չլինէր, երկրագնդի մի մասում կլինէր շատ շոգ, միւսում շատ ցուրտ, իսկ ցամաքը բոլորովին զուրկ կլինէր ջրից: Ոչ անձրեկ և ոչ ձիւն կգար այդտեղ. աղբիւրներն ու գետերը բոլորովին կցամաքէին: Իետևապէս և ոչ մի կեանք չէր լինի նրա վրայ:

21. Օդի բաղադրութիւնը

Եթէ վերցնենք մի կտոր մոմ, վառենք ու թողնենք, նա կայրւի կվերջանայ: Բայց եթէ վառած մոմը կանգնեցնենք ողորկած սեղանի վրայ ու վրան մի անօթ դարձնենք, այնպէս որ դրա տակով օդը ներս ու դուրս չանի, մոմը շուտով կհանգչի: Պատճառուր հասկանալի է. մենք գիտենք, որ այրւելու համար օդի մշտական հոսանք է հարկաւոր: Օրինակ՝ գիւղացի մանուկը գիտէ, որ թոնիրը վառելու համար պէտք է սըն-




դուն բաց անել: Սնդուննրա համար է, որ օդ հոսէ դէպի կրակը: Բոլորս գիտենք նոյնպէս, որ երբ վառած վառարանի դուռը ծածկում ենք, նրա մէջ կրակն խսկոյն հանդշում է: Պատճառը նոյնն է: Մեր այդ փորձից պէտք է եզրակացնենք, որ մոմի այրւելուց օդն անպէտքանում է. նա այնպիսի փոփոխութեան է ենթարկում, որ նրա մէջ այլևս ոչ մոմ կարող է այրւել և ոչ մի ուրիշ մարմին:

Այժմ տեսնենք ինչ փոփոխութեան է ենթարկում օդը, երբ նրա մէջ մի նիւթ է այրւում: Դրա համար մոմի տեղ լուսածին կայրենք: Լուսածինը մի դեղնաւուն մարմին է ու ինքն իրան այրւում է օդում: Այդ պատճառով էլ նրան պահում են ջրի մէջ: Փորձը կատարում ենք այսպէս (նկար 33): Վերցնում ենք մի մեծ թաս ու մէջը կիսով չափ ջուր լցնում: Ջրի երեսին դնում ենք մի տափակ խցան, իսկ դրա վրայ մի փոքրիկ ճենապակէ թաս: Խցանը նրա համար է, որ թասը լողայ ջրի երեսին: Յետոյ այդ փոքրիկ թասի մէջ մի փոքրիկ կտոր լուսածին ենք դնում, լուսածինն այրում ենք մի տաքացրած ծայրով ու ծածկում ապակէ զանգով: Որովհետև զանգի բերանն ընկղմած է ջրի մէջ, այդ պատճառով ոչ դրա օդը կարող է ներս գնալ և ոչ ներսինը դուրս գալ: Լուսածինը մի առժամանակ շարունակում է այրւել զանգի տակ: Նրա այրւելուց ինչ որ, սպիտակ գոյնի ամպանման թանձր գագ է գոյանում, որն անմիջապէս ամեն բան ծածկում է մեր աշքից: Սակայն այդ գազը հետզհետէ նկում է նօսրանալ և վերջը բոլորովին անհետանում է: Նրա անհետանալով ջուրն սկսում է բարձրանալ ու լցնում է զանգի մի հինգերորդական մասը, իսկ դրա չորս հինգերորդական մասը բռնում է մնացած օդը:

Սկզբում զանգի տակ կար՝ լուսածին և օդ: Փորձի ընթացքում լուսածնի մի մասը այրւեց և այդ պատճառով նրա քանակութիւնը պակասեց: Սակայն, ինչպէս տեսանք, այրւելուց պակասեց և օդի քանակութիւնը: Զանգի տակ մնաց օդի միայն չորս հինգերորդական մասը: Սա-

կայն զանգի տակ մնացած այդ օդն այլևս խսկական օդ չէ: Խսկական օդում լուսածինն այրւում է մինչև վերջը. իսկ օդի այդ մնացած մասի մէջ ոչ լուսածին է այրւում և ոչ մի ուրիշ մարմին:

Ուրեմն այդ փորձի շնորհիւ զանգի մէջ եղած օդը երկու մասի բաժանւեց. նրա հինգերորդական մասը անհետացաւ, իսկ չորս հինգերորդականը մնաց: Քանի որ այդ անհետացած մասը խառն է օդին, նրա մէջ լուսածինը այրւում է. իսկ երբ նա անհետանում է, մնացած մասի մէջ ոչ մի մարմին այլևս չի այրւում:



Նկար 33.

Դրա հիման վրայ մենք իրաւունք ունենք եզրակացնել, որ օդը ոչ թէ մի նիւթ է, այլ բաղկացած է երկու նիւթից: Մէկն այն է, որի մէջ այրւում են լուսածինը, մոմը, փայտը և այլն: Դա կազմում է օդի մի հինգերորդական մասը: Միւսը դրանից չորս անգամ շատ է և այդ յատկութիւնը չունի. Նրա մէջ ոչ մի մարմին չի այրւում: Առաջին նիւթին ասում են թթւածին, երկրորդին՝ բորակածին:

Սակայն լուսածնի այրւելու ժամանակ ի՞նչ եղաւ թթւածինը. կամ որտեղից գոյացաւ այն ամպանման գազը: Լուսածինը ջրի մէջ ամենեն չէ լուծւում. իսկ այդ գազը լուծւեց: Ուրեմն այդ գազը լուսածին չէ, այլ մի ուրիշ մարմին: Բայց նա ինքնիրան ոչնչից գոյանալ չէր կարող, որովհետև ընութեան մէջ ոչ մի բան ոչնչից չէ գոյանում: Եւ ոչ մի նիւթ չէ ոչնչանում: Հետևապէս ի՞նչից կարող էր գոյանալ յիշեալ ամպանման մարմինը: Իհարկէ միայն անհետացած թթւածնից և լուսածնի այրւած մասից. որովհետև փորձին մասնակցող միւս մարմինները մնացին անփոփոխ: Լուսածնի արդ մասն ու թթւածինը մսխւեցին

այրւելու ժամանակ. բայց նրանք ոչ թէ անհետացան, այլ միացան իրար հետ և մի երրորդ մարմին կազմեցին։ Այդ նոր մարմինը ոչ լուսածնի է նման և ոչ թթւածնի։ Լուսածինը պինդ մարմին է ու ջրի մէջ չէ լուծում։ Թթւածինն էլ անգոյն գաղ է, բայց ջրի մէջ նոյնպէս զրեթէ չէ լուծում։ Ընդհակառակն՝ այդ նոր ստացած գաղը թթւածնից թանձր է, սպիտակ գոյն ունի և արագութեամբ լուծում է ջրի մէջ։ Ցետոյ նա շատ խեղդիչ հոտ ունի, իսկ ջրի մէջ լուծւելով, նրան թթու համ է տալիս։

Այդ նիւթին ասում են լուսածնի թթուով։ Ուրեմն լուսածինն այրւելով, միացաւ օդի թթւածնի հետ և լուսածնի թթուով տւեց։

22. Ածուխի այրւելու Ածխաթթուու գաղ


Աժմ մի կտոր ածուխ այրենք։ Դրա այրւելուց յետոյ կմնայ միայն մի փոքր մոխիր, որ մեր վերցրած ածուխի փոքրագոյն մասն է կազմում։ Ապա ինչ եղաւ ածուխի մնացած մասը։ Իհարկէ նա ոչնչանալ չէր կարող։ Յիրաւի, նա ոչ թէ ոչնչացաւ, այլ միացաւ թթւածնի հետ։ ճիշտ այնպէս, ինչպէս որ դրա հետ միացաւ լուսածինը։ Սակայն լուսածնի այրւելուց ստացւեց լուսածնի թթուով, որ մենք տեսանք։ ապա ինչու ածուխի այրւելուց գոյացող նիւթը չենք տեսնում։ Պատճառն այն է, որ այդ նոր նիւթն օդի նման անգոյն և թափանցիկ մարմին է։

Ուրեմն եղակացնում ենք, որ ածուխն էլ բաղկացած է երկու նիւթից։ Նրա մի մասը մոխիրն է, որ չի այրվում։ միւս մեծագոյն մասը պինդ սկ գոյնի նիւթն է, որին ածխածին են ասում։ Ածուխն այրւելիս նրա ածխածինը միանում է թթւածնի հետ և տալիս է վերոյիշեալ անգոյն ու թափանցիկ մարմինը։ Դրան էլ ածխաթթուու են ասում։ Ուրեմն ածխաթթուուն ստացւում է ածխածնի (ածուխի) այրւելոց, այսինքն երբ նա միանում է թթուածնի հետ։

Ածխաթթուուոը կարելի է ստանալ սովորական կաւճից։ Կաւճը բաղկացած է ածխաթթուուից և կրից, այդ պատճառով էլ դրան ասում են ածխաթթուուային կիր։ Ածխաթթուուային կրից է բաղկացած և մարմարը։ Ցետոյ կրաքար ասած քարը, որից շատ տեղ պատեր են շարում, կամ փողոցների մայթերը սալայատակում, նոյնպէս մեծ մասամբ ածխաթթուուային կրից է բաղկացած։ Ինչպէս որ ածուխն այրւելիս ածխածինը միանում է թթւածնի հետ ու ածխաթթուուտ կազմում, այնպէս էլ յաճախ ածխաթթուուտը միանում է կրի հետ և ածխաթթուուային կիր տալիս։

Եթէ վերցնենք մի կտոր մարմար և վառարանում շիկացնենք, նա կիխրունանայ. քիչ յետոյ կմանրանայ ու ալիւրի նման փողի կկազմի։ Դա արդէն մարմար չէ, այլ կիր է։ Տաքութեան ազդեցութեան տակ մարմարի ածխաթթուուտը բաժանւեց ածխաթթուուային կրից և ցնդեց օդը։ Տեղը մնաց միայն կիրը։

Ածխաթթուուտը կարելի է դուրս հանել մարմարից կամ կաւճից նոյնպէս որևէ թթւուտի օգնութեամբ։ Օրինակ քացախն իր մէջ թթւուտ է պարունակում։ Այդ պատ-




Նկար 34.

ճառով, եթէ թունդ քացախի մէջ մի կտոր կաւիճ գցենք,
նրանից կսկսեն ինչ որ գազի պղպջակներ բարձրանալ:
Ածխաթթւուտը հէնց այդ է: Քացախը միանում է կը հետ,
իսկ ածխաթթւուտն ազատում է:

Ածխաթթւուտ գազն ստանալու համար վերցնում են
մի սրւակ, մէջը կաւճի կամ մարմարի կտորներ են գցում
և վրան ածում աղային թթւուտ ասած հեղուկը: Այդ հե-
ղուկը մարմարի վրայ աւելի ուժեղ է ազդում, և ածխաթ-
թւուտ էլ շատ է ստացւած: Սրւակի խցանի միջով անց են
կացնում մի ծնկածե ապակէ խողովակ, որի միւս ծայրն
իջեցնում են բաժակի կամ մի այլ անօթի մէջ (նկար 34):
Ածխաթթւուտը պղպջակների ծնկով բարձրանում է կաւ-
ճից և ծնկածե խողովակով հաւաքւում է բաժակի մէջ: Որով-
հետեւ այդ գազն օդից ծանր է, այդ պատճառով նա իս-
կոյն չի ցնդում օդը, այլ հաւաքւում է բաժակի մէջ:


Այժմ տեսնենք, ինչով է տարբերում ածխաթթւուտն
օդից: Եթէ բաժակը լցնենք ածխաթթւուտով և ապա նրա-
մէջ վառած լուցկի իջեցնենք, նա իսկոյն կհանգչի: Կամ
եթէ լայն ամանի մէջ վառած մոմի կտոր կանգնեցնենք և
դրա կողքից ածխաթթւուտ ածենք, մոմն իսկոյն կհանգչի
(նկար 35): Ածխաթթւուտի մէջ թէև թթւածին կայ, բայց



Նկար 35.

այդ թթւածինը ազատ չէ, այդ պատճառով ոչ լուցկին և
ոչ մի այլ մարմին նրա մէջ վառել չեն կարող:

Նոյնպէս եթէ ածխաթթւուտի մէջ որևէ կենդանի
գցենք, նա շուտով կլինեղուի, որովհետեւ ածխաթթւուտով
չնչել չի կարելի:




Նկար 36.

Ածխաթթւուտն, ինչպէս ասա-
ցինք, օդից ծանր է. այդ պատ-
ճառով նրան կարելի է ջրի նման
վերին ամանից ածել ցածրի ամա-
նի մէջ (նկար 36): Որովհետեւ
ածխաթթւուտը թափանցիկ է, ուս-
տի այդ գործողութեան ժամանակ
նրա թափւելը չենք տեսնում. բայց
եթէ փորձից յետոյ ցածրի ամանի
մէջ, որտեղ առաջ ածխաթթւուտ
չկար, վառած մոմ իջիցնենք, նա
իսկոյն կհանգչի:

Վերջապէս ածխաթթւուտի ծանրութեան պատճառով
կարող ենք և հետեւեալ հետաքրքիր փորձը կատարել (նկար
37): Լայն բանկան կիսով չափ լցնում ենք ածխաթթւուտով
և ապա նրա մէջ սապանի պղպջակ ենք թողնում: Պղպջա-
կը ոչ թէ իջնում է բանկայի յատակը, այլ լողում է ած-
խաթթւուտի երեսին: Պատճառն այն է, որ պղպջակը լց-
ւած է օդով, իսկ օդն ածխաթթւուտից թեթև է:

Ածխաթթւուտն ու կիրը կարելի է
իրար հետ միացնել և նորից ածխաթթւ-
ուուտային կիր, այսինքն կաւիճ, ստանալ:
Դրա համար կիրն ածում ենք ջրի մէջ
ու խառնում: Ստանում ենք մի սպիտա-
կաւուն պղտոր հեղուկ, որը եթէ ծծան
թղթի միջով անցկացնենք, կստանանք
բոլորովին պարզ ջուր: Սակայն դա մա-
քուր ջուր չէ, այլ կրածուր. այսինքն
իր մէջ պարունակում է լուծւած կիր,
ինչպէս աղտջուրը պարունակում է աղ,
շաբարաջուրը՝ շաքար և այլն: Եթէ
բանկայի մէջ ածխաթթւուտ լցնենք և յետոյ նրա մէջ ա-
ծենք կրածուրն ու խառնենք, այդ հեղուկն իսկոյն կպղդ-
տորւի և կաթնանման սպիտակ հեղուկ կտայ: Քիչ յետոյ



Նկար 37.

հեղուկը կպարզի, ու տակին սպիտակ նիւթ կնստի։ Եթէ երեսի պարզ ջուրը թափենք ու տակի սպիտակ նիւթը չորացնենք, կստանանք իսկական կաւիճ։

Նոյն եղանակով կարող ենք ցոյց տալ, որ մեր արտաշնչած օդում ածխաթթւուտ է պարունակում։ Վերցնում ենք մի բաժակ ու կիսով չափ լցնում կրածռվ։ Ապա կրածռի մէջ իջեցնում ենք ապակէ խողովակի ծայրը, իսկ միւս ծայրով սկսում ենք շրթունքներով օդ փըչել նրա մէջ։ Շուտով պարզ կրածռը պղտորւում, սպիտակ հեղուկ է դառնում։ Այդ փաստը շատ կարևոր է, դացոյց է տալիս որ մարդը, նոյնպէս և բոլոր կենդանիները, շնչելիս ածխաթթւուտ են արտաշնչում։ Ինչպէս յետոյ աւելի մանրամասնօրէն ծանօթանալու ենք այդ բանին, կենդանին շնչելիս օդից առնում է թթւածին և արտաշնչում ածխաթթւուտ։ Թթւածինը նրա մարմնում նոյն դերն է կատարում, ինչ որ ածուխի այրւելու ժամանակ. այսինքն միանում է նրա ածխածնի հետ ու այրում նրան։

Այդպէս ուրեմն՝ ածխաթթւուտն ստացւում է ածուխի կամ փայտի այրւելու և կենդանիների շնչելու ժամանակ. նա ստացւում է նոյնպէս բոլոր կենդանական և բուսական մարմինների այրւելու ժամանակ, օրինակ՝ խոտի, տերևի, կաշւի, մսի, ճարպի, մազի, ոսկրների, սմբակների և այլն, որովհետև դրանք բոլորն էլ ածխաթթւուտ են պարունակում։ Ածխաթթւուտ են պարունակում նոյնպէս՝ քարածուխը, նաևթը, աթարը և այլն. ուրեմն դրանց այրւելու ժամանակ էլ ածխաթթւուտ է ստացւում։ Այժմ եթէ յիշենք, թէ որքան մարդիկ և կենդանիներ են շնչում, որքան լամպեր և վառարաններ են վառում՝ տներ լուսաւորելու, կերակուր եփելու, սենեակներ տաքացնելու, հազարաւոր գործարաններ բանեցնելու, այն ժամանակ կհասկանանք, թէ որքան ածխաթթւուտ է ստացւում բնութեան մէջ։ Այդ պատճառով օդի մէջ բացի թթւածնից և բորակածնից որոշ քանակութեամբ էլ ածխաթթւուտ կայ։

Չնայած որ ածխաթթւուտը բնութեան մէջ ստացւում


է անընդհատ և մեծ քանակութեամբ, այնուամենայնիւ նրա քանակութիւնը օդի մէջ շատ քիչ է և միշտ մնում է անփոփոխ։ Այն է օդի 10000 մասից ածխաթթւուտը կազմում է մօտաւորապէս միայն 4 մասը։ Դրա պատճառն այն է, որ թէկ ածխաթթւուտը մի կողմից անդադար գոյանում է, միւս կողմից էլ անդադար ծախսւում է։ Ինչպէս յետոյ տեսնելու ենք, բոյսերն անդադար ածխաթթւուտ են կլանում և թթւածին արտադրում։ Այդ պատճառով թէ ածխաթթւուտի և թէ թթւածնի քանակութիւնը օդի մէջ միշտ մնում է անփոփոխ։ Եւ որովհետև ածխաթթւուտը բոյսերի համար է անհրաժեշտ, իսկ թթւածինը կենդանիների, ուրեմն բոյսերն ու կենդանիները փոխադաբար ապահովում են միմեանց կեանքը։

Ածխաթթւուտի քանակութիւնը ամեն տեղ հաւասար չէ։ Մեծ քաղաքներում, որտեղ ահազին քանակութեամբ մարդիկ և կենդանիներ են հաւաքւած, որտեղ անթիւ քանակութեամբ վառելիք են վառում, նրա քանակութիւնը սովորականից աւելի շատ է լինում։ Ընդհակառակը քաղաքներից գուրս, դաշտերում և անտառներում, որտեղ բուսականութիւնը առատ է, նրա քանակութիւնը սովորականից պակաս է։ Ամենից պակաս է նրա քանակութիւնը ծովի երեսին, որովհետև ածխաթթւուտը հեշտութեամբ լուծում է ջրի մէջ։

23. Բորակածին եւ թրւածին

Բորակածին գազը մենք արդէն ստացանք, երբ ապակէ զանգի տակ լուսածին այրեցինք։ Այդ գազը հէնց այդպէս էլ ստանում են։ Դա թափանցիկ և անդոյն մարմին է ու ոչ հոտ ունի և ոչ համ. այդ պատճառով էլ նրան ոչ տեսնել կարող ենք և ոչ զգալ նրա մէջ, ինչպէս և ածխաթթւուտի մէջ, ոչ մի մարմին չի այրում և կենդանիներն էլ խեղդում են։ Իհարկէ այդպէս էլ պէտք է լինի, որովհետև այրւելը ոչ այլ ինչ է, եթէ ոչ նիւթի միանալը թթւածնի

հետ: Իսկ շնչառութիւնն, ինչպէս տեսանք, նոյն բանն է: Թթւածին օդից ստանալ չենք կարող: Սակայն բնութեան շատ մարմիններ իրենց մէջ թթւածին են պարունակում: Դրանցից մի քանիսը, երբ բարձր տաքութեան ենք ենթարկում, հեշտութեամբ դուրս են թողնում իրենց թթւածինը: Այդպէս է և բերտոլետեան աղը: Դա այն դեղն է, որով բուկներս ցաւելիս բժշկի խորհրդով ողողում ենք մեր կոկորդը:



Նկար 38.

Թթւածին ստանալու համար փոշի դարձրած բերտոլետեան աղն ածում ենք ըետորդտ ասած անօթի մէջ ու տաքացնում սպիրտային լամպի օգնութեամբ: Նախ քան այդ աղը ըետորդի մէջ ածելը նրա հետ հաւասար քանակութեամբ խառնում ենք մի սկ փոշի, որին մարգանեցի թթւուկ են ասում: Այդ նիւթի շնորհիւ բերտոլետի աղն աւելի հանդարտ է տաքանում և աւելի մեծ քանակութեամբ թթւածին է տալիս: Բետորդի բերանին ամրացնում ենք մի ապակէ, կամ ըետինէ խողովակ, որի միւս ծայրն իջեցնում ենք ջրով լցրած ամանի մէջ (Նկար 38): Երբ բերտոլետեան աղը տաքանում է, խողովակի ծայրից սկսում է գազ դուրս գալ: Որովհետև այդ գազը թեթև է և խակոյն ցնդում է օդը, այդ պատճառով դրա հաւաքելու համար խողովակի ծայրի վրայ շուռ ենք տալիս ջրով լցրած մի որեւէ անօթ: Գաղը խողովակի ծայրից դուրս գալով, բարձրանում է վեր ու ջուրը դուրս մղում անօթից: Երբ

անօթը լցւում է գազով, նրա բերանը ծածկում ենք ու մի կողմ առնում, իսկ նրա տեղ մի ուրիշն ենք դնում: Այդ եղանակով ստանում ենք մի անգոյն ու թափանցիկ գազ, որն արտաքուստ ոչնչով չէ տարբերում օդից: Դա թթւածինն է:

Այժմ տեսնենք, ինչով է նա տարբերում օդից: Դրա համար այն անօթի մէջ, ուր թթւածին ենք հաւաքել, կրածուր ենք ածում ու խառնում: Կրածուրը չի պղտորում, որովհետև անօթի մէջ ածխաթթւուտ չկայ: Ապա երկար մլի օգնութեամբ վրան մի փոքրիկ կայծ ունեցող ածուխի կտոր ենք իջեցնում անօթի մէջ ու բերանը փակում (Նկար 39): Ածուխն անմիջապէս սկսում է արագ և փայլուն լուսով այրւել: Եթէ ածուխի տեղ բարակ փայտի կտոր իջեցնենք, որի ծայրին դարձեալ կայծ կայ, փայտը կրոցավառւի և այնպիսի փայլուն լրյս կտայ, ինչպէս բենգալեան կրակը:

Ածուխն ու փայտն անօթում կշարունակեն վառւել այնքան ժամանակ, մինչև որ թթւածինը կվերջանայ: Բայց նախ քան այդ՝ նկատում ենք, որ կրածուրը պղտորւմ է այն ժամանակ, երբ նա խառնուում է ածխաթթւուտի հետ: Ուրեմն նորից համոզւում ենք, որ ածխաթթւուտն ստացւում է, երբ ածխածինը միանում է թթւածնի հետ:




Նկար 39.

Թթւածնի օգնութեամբ կարող ենք աւելի հետաքրքիր փորձ կատարել (Նկար 40): Վերցնում ենք պղպատէ բարակ զսպանակ (ժամացոյցի զսպանակը) ու ծայրին մի կտոր աբեթ (ղաւ) ամբացնում: ապա աբեթը վառում ենք ու զսպանակն իջեցնում թթւածնով լցրած անօթի մէջ: Աբեթն

այրւելուց յետոյ վառում է պողպատէ զսպանակը և սկսում է բազմաթիւ փայլուն կայծեր արձակել չորս կողմք:

Այդ փորձերի հիման վրայ եղրակացնում ենք. նախ այն մարմինները, որոնք այրւում են օդում, թթւածնի մէջ այրւում են աւելի արագ, աւելի եռանդով: Եւ երկրորդ՝ թթւածնի մէջ այրւում են և այսպիսի մարմիններ, որոնք օդի մէջ ոչ մի կերպ վառել չեն կարող:



Նկար 40.

24. Մոմի այրւելուց գոյացող նիւթերը

Մենք արդէն գիտենք, որ կենդանային և բուսական մարմինների մէջ ածխածին կայ: Այդ պատճառով, երբ այդ մարմիններն այրւում են, նրանց ածխածինը միանում է թթւածնի հետ. իսկ դրանից ածխաթթւուտ է գոյանում:


Տեսնենք, ինչ նիւթեր են ստացւում մոմի այրւելու ժամանակ: Վառենք մոմը և նրա բոցի ամենափայլուն մասով մի կտոր սպիտակ թուղթ անցկացնենք: Կտեսնենք, որ թղթի վրայ սկ շերտ գոյացաւ. կարծես նրան մուր բսեցինք: Այդ սկ նիւթն ածխածինն է, որ միշտ մեծ քանակութեամբ գտնւում է ծխի մէջ և նրան սևաւուն գոյն տալիս: Ծխի հետ դուրս գալով, նա նստում է ծխնելոյզների պատերի վրայ և առաջացնում մուրը: Եթէ այդ մուրը պարբերաբար չեռացնենք ծխնելոյզներից, նա կարող է վառել և հրդեհի պատճառ դառնալ:

Ուրեմն մոմի մէջ ածխածին կայ: Սակայն այդ ինքնըստ ինքեան հասկանալի է, որովհետև մոմը բաղկացած է պատրոյքից և ճարպից. իսկ մենք գիտենք, որ պատրոյքը բուսական մարմին է, ճարպը՝ կենդանական: Որ բամբակէ թելից պատրաստած պատրոյքի մէջ ածխածին կայ, այդ ինք-

ներս ենք տեսնում, որովհետև մոմն այրւելիս նրա պատրոյքը սևանում է, այսինքն ածուխ է դառնում: Սակայն մենք կարող ենք ցոյց տալ, որ սպիտակ ճարպն էլ իր մէջ ածխածին է պարունակում: Դրա համար մաքուր մլով մի կաթիլ ճարպ վերցնենք և բռնենք բոցի վրայ: Շուտով այդ կաթիլը կվառէ, և եթէ նրա բոցի միջով էլ սպիտակ թուղթ անցկացնենք, դարձեալ նոյն բանը կնկատենք. այսինքն թուղթը կսևանայ:

Այդպէս ուրեմն մոմի թէ պատրոյքի և թէ ճարպի մէջ ածխածին կայ. հետեապէս մոմն այրւելիս նրա ածխածինը պիտի միանայ թթւածնի հետ և ածխաթթւուտ առաջացնէ: Այդ բանը ցոյց տալու համար հետեւալ փորձն ենք կատարում: Վերցնում ենք մի բանկայ ու մէջը քիչ կրածուր ածում. ապա մի կտոր մոմ ենք վառում, իջեցնում բանկայի մէջ և բերանը ծածկում: Եթէ հանգչելուց յետոյ մոմը հանում ենք, բանկայի բերանը նորից փակում ու կրածուրը խառնում, իսկոյն դա սպիտակ գոյն է ստանում: Ինչպէս արդէն գիտենք, այդ բանն ապացոյց է ածխաթթւուտի ներկայութեան:

Սակայն մոմի այրւելու ժամանակ միայն ածխաթթւուտ չէ գոյանում: Եթէ մոմի բոցի վրայ բերանը գէպի ցած մի սառը բաժակ բռնենք, շուտով կնկատենք, որ բաժակի պատերը ներսի կողմից քրտնում են. իսկ յետոյ այդ բրտնքից ջրի կաթիլներ են գոյանում և թափւում ցած: Եթէ բաժակը դրսի կողմից սառը պահենք, մոմի շարունակ ջուր կատա-



Նկար 41.


այրւելու ամբողջ ընթացքում

նանք։ Ուրեմն մոմի այրւելուց բացի ածխաթթւուտից ստանում ենք և ջուր։ Դրա պատճառն այն է, որ մոմի նիւթի մէջ բացի ածխածնից գտնում է մի ուրիշ մարմին, որին ջրածին են ասում։ Երբ ջրածինն այրվում է, այսինքն միանում է թթւածնի հետ, ջուր է ստացվում։ Ուրեմն ջուրը ջրածնի թթւուկն է։

25. Ջրածին

Ջրածին ստանալու համար վերցնում ենք երկու բերան ունեցող մի սրւակ և սարքում ենք ճիշտ այնպէս, ինչպէս ածխաթթւուտ ստանալու ժամանակ (նկար 42)։ Սրւակի մէջ սկզբում ցինկի կտորներ ենք ածում. ապա նրա մի բերանով անց ենք կացնում ձագարով վերջաւորւած մի երկար խողովակ, որի ծայրը հասնում է մինչև անօ-

թի տակը։ Միւս բերանում ամրացնում ենք զաղատար ասած խողովակը, որի ազատ ծայրը խորասուզում ենք աւազանի ջրի մէջ։ Որովհետև ջրածինը շատ թեթև գագ է, այդ պատճառով այդ մարմին էլ թթւածնի



Նկար 42.

նման կարելի է հաւաքել միայն ջրի օգնութեամբ։ Երբ գործիքը պատրաստ է, ձագարով սրւակի մէջ ծծմբային թթու ենք ածում։ Հէսց որ այդ հեղուկը ցինկի կտորներին է հասնում, իսկոյն գրանցից սկսում են բազմաթիւ մանր պղպջակներ գոյանալ, և հեղուկն էլ կարծես եռ է գալիս։ Որովհետև սրւակի մէջ օդ կար, ուստի գաղատար խողովակից սկզբում դուրս է գալիս այդ օդը։ Մի տասը ըռպէից յետոյ արդէն սկսում ենք հաւաքել գազը՝ գաղատար

խողովակի բերանին ջրով լցրած անօթներ դարձնելով։ Ստանում ենք առանց հոտի ու համի մի թափանցիկ և անգոյն գազ։ Այդ ջրածինն է։ Նա արտաքինով բոլորովին նման է օդին, թթւածնին կամ բորակածնին։ Սակայն ուրիշ յատկութիւններով նրանցից խիստ տարբերում է։

Վերցնում ենք ջրածնով լցրած ու բերանը դէպի ցած գարձրած երկար զլանաձև անօթ և բերանը բանալով՝ ներս ենք տանում նրա մէջ վառած մոմը (նկար 43)։ Մոմի բոցը խողովակի բերանին հասնելու պէս՝ մի պայթիւն ենք լսում. յետոյ տեսնում ենք, որ մոմը ջրածնի մէջ հանգաւ, իսկ դրա փոխարէն խողովակի բերանի եզրներին աղօտ բոց սկսեց երևալ։ Այրւողը խողովակից դուրս եկող ջրածինն է։ Մոմի տեղ կարող ենք վերցնել՝ վառած

լուցիի, տաշեղ և այն. այդ բոլորն էլ ջրածնի մէջ անմիջապէս հանգչում են, իսկ ջրածինն ինքն է սկսում վառել։ Ուրեմն այդ կողմից ջրածինն թթւածնի հակառակն է ներկայացնում։ Թթւածինն ինքը չի այրւում, բայց նպաստում է ուրիշ մարմինների այրւելուն. ջրածինն ընդհակառակը՝ չէ նպաստում մարմինների այրւելուն, բայց ինքն այրւում է։

Ջրածինը նշանաւոր է նոյնպէս և այն կողմից, որ ամենաթեթև մարմինն է բնութեան մէջ։ Նրա թեթևութիւնը կարող ենք հաստատել հետեւեալ փորձով։


Ջրածին պարունակող անօթի բերանը բաց ենք անում ու նրա վրայ շուռ տւած մի ուրիշ անօթ ենք պահում (նկար 44)։ Երկու ըոպէից յետոյ վառած լուցին մօտեցնում ենք երկրորդ անօթի բերանին և իսկոյն պայթիւնի ձայն ենք լսում։ Ուրեմն ցածի անօթից ջրածինն անցաւ վերի անօթի մէջ։ Այդ կողմից ջրածինն ածխաթթւուտի հակառակն է ներկայացնում։ Ածխաթթւուտը ջրի



Նկար 44.

նման կարելի է վերին անօթից ածել ստորինի մէջ. ջրածինն ընդհակառակը՝ ստորին անօթից կարելի է ածել վերինի մէջ:

Այժմ երկբերան սրւակից հանենք գազատար խողովակը և դրա փոխարէն անց կացնենք մի կարճ և ծայրը սրած խողովակ (նկար 45): Եթէ այդ խողովակի ծայրին փառած մոմ մօտեցնենք, խկոյնկտեսնենք, որ անօթից դուրս եկող ջրածինն սկսում է փառել աղօտ բոցով: Եթէ այդ բոցի վրայ մի սառը բաժակ բռնենք, նրա պատերի վրայ ջրի կաթիլներ կրգոյանան ու կսկսեն թափւել ցած: Մենք արդէն գիտենք, որ ջրածնի այրւելուց ջուր է գոյանում:



Նկար 45.

Եթէ երկբերան անօթի մէջ թթւածին մնացած լինի, այդ դէպքում լուցկին խողովակից հոսող գազին մօտեցնելիս սաստիկ պայթիւն կստանանք. անօթն էլ կփշրւի, և նրա կտորներն ամեն կողմ թռչելով՝ կարող են վնասել և մեզ: Այդ պատճառով շատ զգոյշ պէտք է լինենք ջրածինն այրելիս: Խցանները պիտի շատ ամուր դրւած լինեն սրւակի բերանների մէջ, որ նրանց արանքով օդ ներս չզնայ: Յետոյ պէտք է համոզւած լինենք, որ սրւակի մէջ եղած օդն ամբողջովին դուրս է գնացել: Միայն այդ պայմանները պահելուց յետոյ կարելի է փառել ջրածինը: Յամենայն դէպս, անհրաժեշտ է նախ երկբերան սրւակը պինդ շըրջապատել անձեռոցիկով և ապա մօտեցնել մոմը: Այդ դէպում եթէ պայթիւն էլ տեղի ունենայ, ապակու կտորները կմնան անձեռոցիկի մէջ և չեն վնասիլ ներկայ եղողներին:

26. Ֆիզիկական եւ ֆիմիական երեւոյթներ: Հասարակ խառնուրդ եւ ֆիմիական միացում

Մինչև այժմ բաւական երեսոյթների ծանօթացանք: Թէ այդ կթէ բնութեան մէջ կատարւող բոլոր մնացած երեսոյթները երկու խմբի ենք բաժանում: Մի կարգ երեսոյթներ կան, որնց ժամանակ թէկ մարմինը փոփոխութեան է ենթարկւում, բայց դարձեալ նոյնն է մնում: Օրինակ՝ շաքարը ինչքան էլ մանրացնենք, նրա ամենափոքրիկ մասնիկը դարձեալ շաքար է: Բոլոր մարմինները տաքութիւնից ընդարձակում են, ցրտից սեղմւում, բայց դարձեալ նոյնն են մնում: Զուրը տաքացնելուց գազ, կամ ինչպէս սովորաբար ասում են, գոլորշի է դառնում. ցրտից նա պնդանում, սառոյց է դառնում, բայց այդ բոլորն էլ նոյն ջուրն է: Վերջապէս եթէ ջրի մէջ աղ կամ շաքար ձգենք, կլուծեն, կանհետանան, բայց նրանք ջրի մէջ դարձեալ նոյնն են մնում ու նրան հաղորդում են իրենց յատկութիւնները՝ իրենց համը, հոտը և այլն: Եթէ այդ ջուրը գոլորշացնենք, տակին կմնայ նոյն աղը, կամ շաքարը: Ուրեմն այդ բոլոր երեսոյթների ժամանակ մարմինները թէկ փոփոխում են, բայց նրանց նիւթը նոյնն է մնում: Այդպիսի երեսոյթները կոչւում են ֆիզիկական երեւոյթներ: Դրանց մենք տեսնք և մի շաք ուրիշ երեսոյթներ: Դրանց ժամանակ մարմիններն այնքան խոր փոփոխութեան էին ենթարկւում, որ նրանցից բոլորովին ուրիշ մարմիններ էին ստացւում: Օրինակ՝ ապակէ զանգի տակ լուսածին այրեցինք և ստացանք ամպանման սպիտակ, թանձր գազ, որին լուսածնի թթւուկ են ասում: Պինդ լուսածնի և գազային թըթւածնի միացումից ստացանք այնպիսի մարմին, որ ոչ լուսածնին է նման, ոչ թթւածնին: Պինդ մարմարի վրայ աղդեցինք աղային թթու ասած հեղուկով և ստացանք ածխաթթւուտ գազը. պինդ բերտոլետեան աղը տաքացրինք և ստացանք թթւածին գազը: Վերջապէս ծծմբային թթու ասած հեղուկով աղդեցինք ցինկ մետաղի կտորների վրայ

և ստացանք ջրածին գաղը։ Այդ բոլորը երևոյթների ժամանակ մարմիններն այնպիսի խոր փոփոխութիւնների ենթարկւեցին, որ նրանցից բոլորովին այլ մարմիններ ստացանք։ Դրանք կոչւում են քիմիական երեւոյթներ։

Ֆիզիկական երևոյթների մէջ կան և այնպիսիները, որոնք արտաքուստ շատ նման են քիմիական երևոյթներին։ Օրինակ՝ լուսածինն ու թթւածինը միանում են իրար հետ և լուսածնի թթւուկ են տալիս։ Միւս կողմից՝ աղն էլ խառնւելով ջրի հետ, կարծես մի երրորդ մարմին է տալիս։ Սակայն այստեղ տարբերութիւնն աւելի մեծ է, քան երևում է մեզ առաջին անդամից։ Թէև աղը ջրի մէջ լուծւելիս իր ձևը փոխում է, նոյնիսկ աներևոյթանում է, սակայն նա դարձեալ աղ է մնում։ Եթէ այդ ջուրը ցամաքեցնենք, աղը բոլորովին կազատւի։ Այստեղ աղը միայն լուծւում, խառնուում է ջրի հետ, և դրանից առաջացող խառնուրդին հէնց այդպէս հասարակ խառնուրդ են ասում։ Հասարակ խառնուրդ են տալիս և շաքարի կամ այլ նիւթերի լուծւելը ջրի մէջ։ Նոյնպէս մի կողմից ջրի, միւս կողմից՝ գինու, օղիի, կաթի խառնւելը միւմեանց հետ և այն։

Հեղուկների նման գաղային մարմիններն էլ կարող են խառնւել միմեանց հետ և հասարակ խառնուրդներ կազմել։ Օրինակ՝ օդը ներկայացնում է զլիաւորապէս թթւածնի և բորակածնի խառնուրդ։ Զուրը տաքութիւնից ջրային գաղ է դառնում և խառնում օդին։ Սակայն այդ գաղն օդի հետ չի միանում, այլ միայն հասարակ խառնուրդ է կազմում։ Ցիրաւի, եթէ օդը սառեցնենք, նրա միջի ջրային գաղը կթանձրանայ և դուրս կգայ միջիցը։

Միւս կողմից ածխաթթւուտ գաղը մենք չենք կարող ածխածնի և թթւածնի խառնուրդ համարել. նա աղը էն դրանցից ոչ մէկի յատկութիւնը չունի։ Բացի դրանից՝ սառեցնելով կամ տաքացնելով, նրանից թթւածին կամ ածխածին ստանալ չենք կարող։ Այդ պատճառով ածխա-

թթւուտ գաղին ոչ թէ խառնուրդ, այլ քիմիական միացում ենք ասում։

Քիմիական միացումը հասարակ խառնուրդից տարբերում է և ուրիշ կողմից։ Խառնուրդ կազմելու համար խառնող նիւթերը կարող ենք վերցնել զանազան քանակութեամբ, երբեմն նոյնիսկ ինչ քանակութեամբ որ ուղենք։ Օրինակ՝ որոշ քանակութեամբ սպիրտի հետ, ինչ քանակութեամբ ջուր ուղենանք, կարող ենք խառնել և ընդհակառակը։ Նոյնպէս որոշ քանակութեամբ ջրի մէջ կարող ենք խառնել զանազան քանակութեամբ աղ, շաքար և այլն։ Քիմիական միացում կազմելիս նիւթերը միանում են միայն որոշ և անփոփխ քանակութեամբ։ Օրինակ՝ ածխաթթւուտ ստանալու համար պէտք է երեք քաշ ածխածնի վրայ ութ քաշ թթւածին վերցնենք։ Դրանցից որևէ մէկի աւելորդ քանակութիւնը միացման երևոյթի մէջ չի մասնակցի։

Մենք արդէն գիտենք, որ երբ մարմինն այրւում է, նշանակում է, որ նա միանում է թթւածնի հետ։ Այդ երևոյթին նոյնպէս թթւուկ են ասում, իսկ թթւածնի միացումից առաջացող մարմիններին՝ թթւուկներ։ Այդպիսով, երբ լուսածինն այրւում է, ասում են որ նա թթւում է, իսկ դրանից առաջացող արդիւնքը կոչւում է լուսածնի թթւուկ։ Երկաթը խոնաւ տեղում մնալով՝ միանում է թթւածնի հետ և ժանդ է առաջացնում։ Ուրեմն երկաթի ժանդուելը թթւել է, իսկ ժանդը՝ երկաթի թթւուկն է։

27. Բարդ եւ պարզ մարմիններ

Մենք արդէն մի շարք այնպիսի քիմիական երևոյթների ծանօթացանք, երբ երկու մարմին իրար հետ միանում, երրորդ մարմին են կազմում։ Օրինակ՝ լուսածինն ու թթւածինը միանում՝ լուսածնի թթւուկ են տալիս, նոյնպէս թթւածինն ածխածնի հետ միանում ածխաթթւուտ է տալիս, և այն։ Սակայն կան և այնպիսի երևոյթներ, երբ մի մարմնից երկու կամ մի քանի ուրիշ մար-

միններ են ստացւում: Օրինակ՝ բերտողետեան աղը տաքութեան ենթարկեցինք և նրանից թթւածին ստացանք. սակայն թթւածինը դուրս գալով բետօրտի մէջ մի ուրիշ մարմին էլ մնաց, որը բերտողետեան աղ չէ, որովհետե եթէ նրան տաքացնենք, էլ թթւածին չենք ստանալ: Կարելի է տարրալուծել նոյնպէս ջուրը, որից կստանանք թթւածին ու ջրածին, ածխաթթւուտը, որից կստանանք թթւածին և ածխածին և այլն:

Գիտնականներն այդ եղանակով տարրալուծել են բնութեան մէջ եղող զանազան մարմինները և գտել են, որ կան և այնպիսի մարմիններ, որոնց ոչ մի կերպ տարրալուծել չի կարելի: Օրինակ՝ ջուրը տարրալուծելով, ստացել են թթւածին և ջրածին. սակայն այդ վերջին մարմիններն արդէն տարրալուծել անկարելի է: Նոյնպէս ժամգը տարրալուծել են և ստացել թթւածին և երկաթ. իսկ երկաթը թթւածնի նման անկարելի է եղել տարրալուծել: Այդ հիման վրայ բնութեան մէջ եղող բոլոր մարմինները բաժանում ենք երկու խմբի՝ պարզ և բարդ մարմիններ: Բարդ մարմինները նրանք են, որոնց այս կամ այն եղանակով կարելի է տարրալուծել. իսկ պարզ կամ տարրական մարմինները մինչեւ այժմ յայտնի ոչ մի եղանակով անկարելի է եղել տարրալուծել:

Պարզ մարմինները համեմատաբար շատ քիչ են, մօտաւորապէս 70 հատ: Դրանց միմիանց հետ միանալուց կազմել են բնութեան մէջ տարածւած անհամեմատ աւելի մեծ քանակութեամբ բարդ մարմինները: Պարզ մարմինները են՝ թթւածինը, բորակածինը, ջրածինը, լուսածինը, ածխածինը, յետոյ մնդիկը և բոլոր մետաղները, ուրեմն՝ երկաթը, պղինձը, անագը, կապարը, ոսկին, արծաթը, նոյնպէս՝ ծծումբը, եօդը և այլն:

Բարդ մարմիններ են՝ ջուրը, ածխաթթւուտը, ժանգը, զանազան քարեր ու հանքեր: Վերջապէս բոլոր բոյսերն ու կենդանիները բաղկացած են բաղմատեսակ և բաղմաթիւ բարդ մարմիններից:

III

Զ Ո Ւ Ր

1: Զրի նշանակութիւնը եւ տեսակները

Բնութեան մէջ գուցէ ոչ մի բան այնպիսի մեծ նշանակութիւն չունի, ինչպէս ջուրը: Կեանքի համար նա նոյնքան կարեռ է, որքան և օղը: Որտեղ ջուր չկայ, անձրև չէ գալիս, այնտեղ երկիրը տիսուր անապատ է. ոչ բուսականութիւն կարող է լինել այնտեղ, ոչ էլ կենդանիներ:

Չուրը շատ տարածւած է բնութեան մէջ: Երկրագնդի մակերեռյթի $\frac{2}{3}$ մասը պատած է ջրով: Բացի ջրանից՝ ցամաքի վրայ գտնւում են բազմաթիւ մեծ և փոքր գետեր, որոնք անըդհատ ահագին քանակութեամբ ջուր են տանում դէպի ծովերն ու ովկիանուր: Մեծ քանակութեամբ ջուր է գտնւում նոյնպէս մթնոլորտի մէջ: Վերջապէս ջուրը գտնւում է հողի, նոյնպէս բոլոր կենդանիների և բոյսերի մէջ: Դրանց մարմնի մօտաւորապէս $\frac{3}{4}$ -ը ջրից է բաղկացած:

Սովորական ջուրն անգոյն ու թափանցիկ հեղուկ է: Ինչ վերաբերում է նրա համին կամ հոտին, այդ կախւած է այն բազագրութիւններից, որ խառնւած, կամ լուծւած են նրա մէջ: Առհասսարակ բնութեան մէջ հեղուկ դրութեամբ մաքուր ջուր չի գտնւում. նոյնիսկ ամենապարզ ջրի մէջ միշտ որոշ քանակութեամբ զանազան աղեր են լուծւած: Այդ կողմից զանազանում են՝ ծովի ջուր, որ աղի և դառն է՝ իր մէջ պարունակած սովորական աղի և ուրիշ նիւթերի պատճառով. անուշ ջուր, որպիսի անուն


տալիս են աղբիւրների և գետերի ջրին. վերջապէս հանքային ջուրն իր մէջ սովորականից աւելի հանքային նիւթեր է պարունակում և այդ պատճառով էլ բուժիչ նշանակութիւն ունի:

Մենք արդէն գիտէնք, որ ջուրը պատահում է որպէս սառուց, որպէս հեղուկ ջուր և որպէս ջրային գազ կամ գոլորշի: Սակայն բացի դրանից՝ ջուրն ուրիշ ձեւեր էլ է ստանում. մասախուղը, ամպը, եղեամը, ձիւնը և կարկուտը դարձեալ ջրի գանազան ձեւերն են:

2. Ջրի եռացումը

Մենք գիտենք, որ ջուրը տաքութեան 100 աստիճանի ժամանակ սկսում է եռ գալ: Այդ բանը ցոյց տալու համար հետեւեալ փորձը կկատարենք:

Կվերցնենք ապակէ մի սրւակ, մէջը կիսով չափ ջուր կածենք ու կդնենք կասկարայի վրայ. ապա տակին սպիրտային լամպ կվառենք ու կսկսենք տաքացնել (Նկար 46): Նախ քան տաքացնելը՝ սրւակի մէջ կախ կտանք մի ջերմաչափ, այնպէս, որ նրա մսդկի գունդը խորասուղւած լինի ջրի մէջ: Նախ և առաջ կնկատենք, որ սրւակը տաքանալով՝ նրա յատակին և կողքերին կսկսեն մանր արծաթագոյն պղպջակներ գոյանալ: Դրանք մէկ մէկու յետեկից կպոկւեն, կբարձրանան ջրի երեսն ու կպայթեն: Այդ պղպջակները ջրի մէջ լուծւած օդն է: Քիչ ժամանակից յետոյ շին յատակին կսկսեն գոյանալ աւելի խոշոր պղպջակներ, որոնք նոյնպէս կպոկւեն յատակից ու կբարձրանան ջրի երեսը: Դրանք արդէն գազ դարձած ջրի պղպջակներն են: Շին ստորին պատճառ արդէն այնքան տաքացած է իլինի, որ նրան



Նկար 46.

շիւող ջուրն այլևս հեղուկ մնալ չի կարող. Նա գազ կըդառնայ ու պղպջակներ կազմելով՝ կբարձրանայ վեր: Քանի սրւակին ու ջուրն աւելի տաքանան, այդ պղպջակներն աւելի արագ կգոյանան: Վերջապէս, երբ ջրի տաքութեան աստիճանը կհասնի 100-ի, պղպջակների արագ գոյանալուց և շատութիւնից ջուրն կսկսի շարժւել կամ եռ գալ: Այդ ժամանակ ջրային գազն արդէն ամբողջովին դուրս վանած կլինի շին միջի օդը և կբռնի նրա տեղը: Այստեղ մի հետաքրքիր երեսոյթ էլ ենք նկատում: Այդ բանը ցոյց է տալիս, որ ջրային գազն ու գոլորշին միենոյն բանը չեն: Ջրային գազն օդի նման մեր աչքին չի երևում: Այս սենեակում և ամեն տեղ օդի մէջ ջրային գազ կայ, սակայն մենք չենք տեսնում: Բայց երբ այդ գազը գոլորշի է դառնում, արդէն տեսնում ենք: Մեր թոքերից օդի հետ միշտ և ջրային գազ ենք արտաշնչում: Ամառն օդի տաք լինելու պատճառով՝ այդ գազը որպէս գազ էլ անցնում է դրսի օդի մէջ ու մեր աչքին չի երևում: Ընդհակառկը՝ ձմեռը նոյն ջրային գազը մեր բերանից դուրս գալիս երեսում է, որովհետև ցրտից գոլորշի է գառնում: Ջրային գազը թթւածնի կամ ջրածնի նման սովորական գազ է. իսկ գոլորշին գազ չէ, այլ բաղկացած է ջրի մանրիկ կաթիլներից և այդ պատճառով էլ երեսում է մեր աչքերին: Սակայն այդ կաթիլներն այնքան մանր են, որ օդից թեթև են և թոշում են վեր: Երբ ձմեռուայ ցրտին բաց ենք անում տաք սենեակի օդանցքը, կամ գիւղերում գոմերի երդիկն, այդ օդանցքից կամ երդիկից քուլայ-քուլայ բարձրանում է գոլորշին. մինչդեռ ոչ սենեակում և ոչ գոմում գոլորշի չի երևում:


Նոյն փորձի ժամանակ մի ուրիշ հետաքրքիր երեսոյթ էլ ենք նկատում: Երբ շին ջուրն սկսում ենք տաքացնել, նրա տաքութեան աստիճանն աստիճանաբար բարձրանում է: Այդ բանը շարունակում է, մինչև որ սնդիկը հասնում է

100 աստիճանի, և ջուրն էլ սկսում է եռ գալ: Իհարկէ այդ շատ հասկանալի է: Իւրաքանչիւր ըռպէի ընթացքում ջուրը լամպից նոր քանակութեամբ տաքութիւն է ստանում, որը մի որոշ չափով բարձրացնում է նրա տաքութեան աստիճանը: Սակայն դրանից յետոյ, թէև սպիտային լամպը շարունակում է վառւել, բայց ջերմաչափի մնդիկը 100° -ից էլ չի բարձրանում: Մենք կարող ենք նոյնիսկ կրակի բոցը կրկնակի ուժեղացնել, սակայն ջրի տաքութեան աստիճանը դարձնալ չի բարձրանայ: Ապա ուր են գնում լամպի բոցից ստացւող տաքութեան նորանոր քանակութիւնները: Նրանք ծախսում են ջուրը ջրային գազ դարձնելու վրայ: Ջրային գազը կլանում է այդ տաքութիւնը և ինքն էլ հարիւր աստիճանի է համուռմ: Այդ բանի մէջ համոզում ենք, երբ ջերմաչափի մնդիկը զետեղում ենք ոչ թէ եռացող ջրի, այլ նրա երեսին կանգնած ջրային գազի մէջ: Այդ գէպքում էլ ջերմաչափի մնդիկը 100° է ցոյց տալիս: Ուրեմն եռացող ջրից գոյացող ջրային գազն իր հետ տանում է այն տաքութիւնը, որ լամպից ստանում է ջուրը:

Որովհետև ջրային գազն իր մէջ տաքութիւն է պարունակում, նրանով կարող ենք գանազան մարմիններ տա-

բացնել, օրինակ՝ ջուրը: Այդ բանը ցոյց տալու համար հետևեալ փորձն ենք կատարում (նկար 47): Սրւակի բերանին, որի մէջ ջուր ենք եռացնում, խցանի օգնութեամբ մի խողովակ ենք ամրացնում: Խողովակի միւս ծայրն իջեցնում ենք մի անօթի, օրինակ՝ սովորական չափի մէջ: Ջրի եռ գալուց գոյացող ջրային գազն անցնում է այդ անօթի մէջ և այնտեղից էլ դուրս չի գալիս. որովհետև այնտեղ թանձրանում, ջուր

է դառնում ու խառնուում նրա ջրին: Այդ պատճառով դրա մէջ ջրի քանակութիւնը հետզհէտէ աւելանում է, ու միւ-



Նկար 47.

նոյն ժամանակ ջուրն էլ տաքանում է: Անօթի ջրի աւելացումը ցոյց է տալիս, թէ սրւակից ինչքան ջուր է գազդարձել, իսկ նրա տաքութեան աստիճանի բարձրանալով կարող ենք եզրակացնել, թէ այդ ջրային գազն ինչքան տաքութիւն է իրենից արտադրել:

Ուրեմն հեղուկ ջուրը ջրային գազ դառնալու համար որոշ քանակութեամբ տաքութիւն է պահանջում: Ընդհակառակը՝ երբ այդ ջրային գազը նորից թանձրանում, հեղուկ է դառնում, իր ստացած տաքութիւնը յետ է տալիս:

3. Զրի գոլորշիանալը

Եթէ մի ափսէի մէջ ջուր ածենք ու թողնենք, որոշ ժամանակից յետոյ այդ ջուրը կցամաքի, կամ ինչպէս ասում են, կգոլորշիանայ: Պատճառն այն է, որ ջուրը ջրային գազ է դառնում ոչ միայն եռացման, այլ եւ տարութեան աւելի ցածր աստիճանների ժամանակ:

Սովորական ժամանակ ջրի գոլորշիացումը միշտ միւնոյն արագութեամբ չի կատարւում: Որքան գոլորշիացող ջրի մակերեսոյթը մեծ է, այնքան գոլորշիացումն աւելի արագ է կատարւում: Օրինակ՝ ափսէի մէջ ջուրն աւելի շուտ է ցամաքում, քան բաժակի կամ շշի մէջ: Ցետոյ որքան եղանակը տաք է, այնքան գոլորշիացումն աւելի արագ է կատարւում: Գոլորշիացման արագութեան վրայ ազդում են նոյնպէս՝ օդի չորութիւնն ու խոնաւութիւնը և նրա խաղաղ կամ շարժուն վիճակը: Զմեռուայ տաք, բայց խոնաւ օրերին փուած լացքն աւելի ուշ է չորանում, քան աւելի ցուրտ բայց չոր եղանակին. նոյն լացքը քամու ժամանակ աւելի արագ է չորանում, քան հանդարտ եղանակին:


Չուրը գազ դառնալու համար, ինչպէս տեսանք, որոշ քանակութեամբ տաքութիւն է պահանջում: Այդ կատարւում է ոչ միայն ջրի եռացման ժամանակ, այլ և երբ նա գազ է դառնում տաքութեան աւելի ցածր աստիճաններին: Այդ

դէպքում գազ դառնալու համար անհրաժեշտ տաքութիւնը ջուրը խլում է շրջապատող օդից և իրենից: Այդ պատճառով էլ դրանց տաքութեան աստիճանը նշանաւոր չափով իջնում է: Իսկ երբ ջրային գազը թանձրանում, ամպ կամ անձրեկի կաթիներ է դառնում, նրա միջի տաքութիւնն արձակում է, և շրջապատող օդը տաքացնում: Ցիրաւի՝ ամառ ժամանակ ջրառատ տեղերում օդն աւելի զով է լինում, քան չոր երկրներում. որովհետև այստեղ ջուրը գոլորշիանալով, իջեցնում է գետնի և օդի տաքութեան աստիճանը: Բոլորս էլ գիտենք նոյնպէս, որ երբ ամառ ժամանակ փողոցները կամ գիւղերում աների յատակն ու բակերը սրսկում են ջրով, համեմատաբար աւելի զովանում է օդը. Ջրային գազի գոլորշի դառնալուց օդի տաքանալը նկատում ենք ձմեռը: Երբ ձմեռայ պարզկայ գիշերը յանկարծ ամպեր են գոյանում երկնքի վրայ, օդը նկատելի չափով տաքանում է:

Որ ջուրը գոլորշիանալով՝ իր և իրեն շրջապատող մարմինների տաքութեան աստիճանն իջեցնում է, այդ կարող ենք ցոյց տալ հետևեալ փորձով: Վերցնենք ջրով լցրած ու մէջները մի-մի ջերմաչափ դրած երկու շիշ (նկար 48): Դրանցից մէկը շրջապատենք թաց կտորով և այդ կտորը շարունակ թրջենք նոյն ջրով, որից ածել ենք շիշը մէջ: Քիչ ժամանակից յետոյ այդ շիշ միջի ջերմաչափը ցոյց կտայ, որ այդտեղի ջրի տաքութիւնն իջել է: Պարզ է, որ այստեղ ջրի տաքութեան իջնելու պատճառը կտորի կողմից ջուր գոլորշիացնելն է: Եթէ մենք թաց կտորի վրայ սկսենք փուքաով փշել, ջուրը կսկսի աւելի արագ ու աւելի մեծ քանակութեամբ գոլորշիանալ: Դրանից անօթի ջրի տաքութեան աստիճանն էլ աւելի արագ և աւելի շուտ կիշնի:

Գոլորշիացման պատճառով ովկիանոսները, ծովերն ու գետերն անընդհատ մեծ քանակութեամբ ջուր են տալիս օդին: Դրա շնորհով սթնոլորտի մէջ միշա ահագին քանակութեամբ ջրային գազ կայ: Ջրային գազի ներկայու-

թիւնն օդի մէջ կարելի է ցոյց տալ շատ հեշտ եղանակով. եթէ գրաֆինով սառցաջուր ենք ներս բերում, գրաֆինն ինչքան էլ չոր սրբած լինենք, նրա պատերն իսկոյն դըրսկից քրտնում են: Այդ քրտինքը գոյանում է օդի մէջ եղող



Նկար 48.

ջրային գազից. դրա մասնիկները գրաֆինի սառը պատերին շփւելով՝ թանձրանում ու ջրի մանրիկ կաթիներ են կաղմում նրա վրայ: Ճիշտ այդ եղանակով էլ ձմեռ ժամանակ քրտնում են պատռհանների սառն ապակիները: Իհարկէ որբան բնակարանը տաք է և օդը խոնաւ, իսկ դրսի օդը ցուրտ, այնքան աւելի խիստ են քրտնում պատռհանները:

Հենց նոյն եղանակով էլ գոյանում է երեկոյեան ցողը: Արեւ մայր մտնելուց յետոյ երկիրն սկսում է արագ սառել: Օդի մէջ պարունակուղ ջրային գազը՝ շփւելով գետինը պատող սառը քարերին, բոյսերին ու այլ առարկաներին, մանր կաթիների ձևով նստում է գրանց վրայ և ցող առաջացնում: Առաւտեան, արեգակի գուրս գալով, օդը և երկիրը սկսում են տաքանալ, և ցողի կաթիները կամաց-կամաց գոլորշիանում են ու ցնդում օդը:

4. Ամպ, մառախուղ, անձրեւ եւ ձիւն:

Ամպի, մառախուղի, անձրեկի և ձիւնի գոյանալը կարող ենք հասկանալ հետևեալ փորձի օգնութեամբ: Վերցնում ենք երկու շիշ ու երկուսի մէջն էլ հաւասար քանակութեամբ քիչ ջուր ենք ածում: Ապա մէկի բերանը ծածկում ենք խցանով, իսկ միւսինը բաց թողած՝ երկուսն էլ դնում ենք մի տեղ ու թողնում: Մի քանի օրից յետոյ տեսնում ենք, որ

բաց շնի ջուրը ցամաքել է, իսկ փակ շնինը մնացել է գրեթէ անփոփոխ: Ի՞նչ է դրա պատճառը. ինչու բաց շնի մէջ՝ ջուրը գոլորշիանում է մինչև վերջը, իսկ փակ շնի մէջ ոչ: Պատճառն այն է, որ օդի իւրաքանչիւր քանակութիւնը միայն որոշ քանակութեամբ ջրային զազ կարող է ընդունել: Մեր բերած օրինակում փակ շնի օդը ջրից այնքան ջրային գազ ստացաւ, որքան որ կարող էր պահել իր մէջ: Դրանից յետոյ նրա միջի ջուրն էլ չէր գոլորշիանում:

Միւս կողմից բաց շնի օդն էլ ջրից ստացաւ այնքան ջրային գազ, որքան որ կարող էր պահել, այսինքն ճիշտ այնքան, որքան և փակ շնի օդը: Սակայն այդ օդն այժմ աւելի խոնաւ է, քան դրսինը. իսկ օդը չի կարող թոյլ տալ; որ նրա մի մասը խոնաւ լինի, միւսը չոր: Այդ պատճառով բաց շնի բերանով ներսի խոնաւ օդը դուրս է գնում ու խառնուում մթնոլորտի օդին: Դրա փոխարէն դրսի չոր օդը ներս է գնում նրա մէջ, նորից խոնաւանում և դուրս գնում: Ահա այդպէս բաց շնի մէջ օդի ներս ու դուրս անելը շարունակում է այնքան, մինչև որ նրա միջի ջուրն ամբողջովին ցամաքում է:

Երբ օդն իր մէջ այնքան ջրային գազ է պարունակում, որ էլ աւելի չի կարող ընդունել, ասում են որ նա յագեցած է ջրային գազով: Սակայն օդի միենոյն քանակութիւնը տաքութեան տարբեր աստիճանների ժամանակ զանազան քանակութեամբ ջրային գազ կարող է պահել իր մէջ: Որքան տաքութեան աստիճանը բարձր է, այնքան մեծ քանակութեամբ ջրային գազ է հարկաւոր օդի որոշ քանակութիւնը յագեցնելու համար: Օրինակ՝ եթէ օդը յագեցած է 20° տաքութեան ժամանակ, իսկ որեւէ պատճառով նրա տաքութիւնն իջնում է, ասենք, մինչև 10° , այդ դէպքում ջրային գազի մի մասը չի կարող մնալ օդի մէջ. նա պիտի թանձրանայ ու ջրի կաթիլներ կազմէ: Ահա հէնց այդ հիման վրայ են գոյանում ամպլ, մառախուղն, անձրեն ու ձիւնը:

Ովկիանոսից անընդհատ ահազին քանակութեամբ ջրային գազ է բարձրանում մթնոլորտի մէջ, և այդ պատճառով նրա վրայի օդը գրեթէ յագեցած է ջրով: Սակայն այդ օդը չի մնում միայն այնտեղ՝ ովկիանոսի վրայ կուտակւած. քամին նրան առնում, քշում է զանազան կողմեր: Երբ նա ընկնում է մթնոլորտի աւելի սառը մասերի մէջ, նրա տաքութեան աստիճանն իջնում է: Ուրեմն էլ նոյն քանակութեամբ ջրային գազ օդը չի կարող պահել իր մէջ: Այդ պատճառով ջրային գազի աւելորդ մասը թանձրանում, ջրի մանրիկ կաթիլներ է կազմում: Դրանք, եթէ օդի բարձր շերտերումն են, երեսում են մեզ ամպերի ձևով. իսկ եթէ այդպիսի կաթիլներ գոյանում են օդի ստորին շերտերում և տարածւում են զետնի երեսին, այդ երեսոյթին մառախուղ ենք ասում: Ուրեմն մառախուղն ու ամպն իսկապէս միենոյնն են. այն տարբերութեամբ միայն, որ առաջինը կազմուում է օդի ստորին շերտերում, ամպլ՝ վերին: Իրենց այս կամ այն դրութեան և լուսաւորութեան պատճառով ամպերը զանազան ձևեր են ստանում և անդադար փոփոխուում են: Նրանց ձևից և գոյնից կարելի է գուշակել ապագայ եղանակը:

Ամպերը կազմող ջրային կաթիլները ցրտից թանձրանում ու իրար հետ միանալով՝ աւելի խոշոր կաթիլներ են կազմում: Դրանք արդէն այնքան ծանր են, որ էլ օդում մնալ չեն կարող, ուստի թափւում են երկրի վրայ, որպէս անձրւ: Եթէ այդ կաթիլների թանձրացումը տեղի է ունենում աւելի ցուրտ շերտերում, այդ դէպքում ան-



Նկար 49.

ձրէի կաթիլների փոխարէն գոյանում են սառցի մանրիկ և բարդ բիւրեղիկներ (Նկար 49): Դրանք միմեանց հետ

միանալով՝ ձիւնի փաթիլներ են կազմում ու թափւում են երկրի վրայ արդէն ձիւնի ձևով:


Աշնանը ցուրտ և պարզկայ գիշերներին գետնի տաքութեան աստիճանը զրօից ցածր է իջնում: Այդ դէպքում օդի ստորին շերտերում եղող ջրային գազը ցողի կաթիլների փոխարէն սկսում է նստել գետնի վրայ սառցի մանր բիւրեղիկների ձևով: Դրանք էլ իրար վրայ դարսելով՝ առաջացնում են եղեամը:

5. Սառցի ձեւի փոփոխւելը

Զուրը ցրտից պնդանում, սառուց է դառնում, որը տաքութիւնից նորից հալում հեղուկ ջուր է տալիս: Սառուցը մի քանի արտասովոր յատկութիւններ ունի, որով կարողանում է շատ մեծ գեր կատարել բնութեան մէջ: Այդ յատկութիւններին ծանօթանալու համար հետեւալ փորձերն ենք կատարում:

Վերցնում ենք մի երկար սառցի կտոր: Դրա մի ծայրը դնում ենք նըստարանի վրայ, իսկ միւսը թողնում ենք ազատ օդի մէջ. ապա երկու ծայրերին էլ այնպիսի ծանրութիւններ ենք ամրացնում, որ սառուցը այդպիսի դրութեամբ էլ մնայ (նկար 50). Մի կամ երկու օրից յետոյ նկատում ենք, որ սառուցը ծանրութեան ճնշման տակ թերւել է դէպի ցած: Այդպիսով առանց կոտրւելու սառուցը կարող է բոլորպին թեքւել: Եթէ մենք ուզենայինք այդպէս թերել միանգամից, սառուցը կկոտրւէր:


Այժմ վերցնենք մի ուրիշ կտոր սառուց, մանր ջարդենք, կտորները մի շահ մէջ ածենք ու դնենք սառնամա-



Նկար 50.


նիքում: Մի քանի օրից յետոյ կտեսնենք, որ սառցի կը-տորները կպել են միմեանց և շահ չեն թափւում: Իսկ եթէ շիշը հանգիստ թողնենք երկար ժամանակով, սառցի կտորները հետզհետէ կմիանան միմեանց հետ և նորից սառցի մի ամբողջ կտոր կկազմեն:

Մի հաստ կտոր սառուց ծայրերով երկու աթոռի վրայ դնենք, այնպէս որ միջի մասն ազատ մնայ. ապա վրայովը մի բարակ թոկ ձգենք ու դրա ծայրերին մի ծանրութիւն կապենք (նկար 51): Արդէն հետեւեալ օրը կը-նկատենք, որ թոկը կտրել է սառուցը ու խրւել նրա մէջ: Օրէց օր թոկը կշարունակէ ցած իջնել, բայց սառցի կտրւած եզրները նորից կկպչեն միմեանց և բոլորովին կմիանան: Այդպիսով երբ թոկն ամբողջ սառուցը կկտրի ու կընկնի ցած, սառցի երկու մասերը նորից միացած կը-լինեն միմեանց հետ:



Նկար 51.

Հի: Երբ շահ միջի ամբողջ ջուրը սառուց կդառնայ, խցանը կհանենք ու մի հաստ ձող ուղղահայեաց տնկելով, շահ որ-քը կհազցնենք նրա տափակ ծայրին, իսկ շահ վզին երկար թոկի օգնութեամբ երկու ծանրութիւն կկապենք: Դրանք շիշը դէպի ցածից ցած բաշելով՝ կստիպեն ձողին ցածից ճնշում գործել սառցի վրայ: Մի քանի օրից յետոյ կտեսնենք, որ շահ միջի հաստ սառուցը սկսում է կամաց-կամաց դուրս գալ շահ նեղ բերանից: Դուրս եկող սառուցն օրէց օր երկարում է՝ տաք օրերին արագ, իսկ ցուրտ օրե-



Նկար 52.

ըին՝ դանդաղ։ Այդ բանը շարունակում է այնքան, մինչև որ ձողը հասնում է շնի նեղ մասին ու այլիս չի թոյլ տալիս շշին ցած իջնել։


Այդ բոլոր փորձերը ցոյց են տալիս, որ սառուցը, թէև հարւածից հեշտութեամբ կոտրում է, սակայն երկարատև գործող ճնշման ազդեցութեան տակ կարող է փոխել իր ձեր՝ կարող է կոտրատել, նորից միանալ, ծռել, նեղանալ և այն։ Սաոցի այդ յատկութիւնն ամենից շատ երևան է գալիս սառցադաշտերի շարժման ժամանակ։

6. Սառցադաշտեր

Մեր երկրում տարւայ ցուրտ եղանակին է միայն ձիւն գալիս. սակայն կան այնպիսի ցուրտ երկրներ, որտեղ ձիւն է գալիս և ամառւայ ամիսներին։ Այդպէս է լինում նոյնպէս տաք և բարեխառն երկրներում մըշտական ձիւնով պատած բարձր լեռների վրայ։ Դրանց վրայի ձիւնը երբէք չի վերջանում, և նորը գալիս նստում է հնի վրայ։ Պարզ բան է, որ այդ լեռների ծերպերի և վիթ կողերի վրայ ձիւնը մնալ չէ կարող. քամին քշում, հաւաքում է այդ բարձրութիւնների վրայ գտնող ձորերի և խորխորատների մէջ, որոնք այդպիսով ահազին ձիւնադաշտեր են կազմում։ Այդ ձիւնը կամաց կամաց հալւելով՝ փոփոխութեան է ենթարկում. նա միայն երեսից է ձիւնից բաղկացած. տակի ձիւնը, հետզհետէ ծծելով հալելուց գոյացող ջուրը, սեղմւում է և վերջապէս իսկական սառուց է դառնում։ Այդ բանը հասկանալու համար յիշենք, թէ ինչպէս, ճնագունդը երկար ժամանակ ձեռքներիս մէջ սեղմելիս պնդանում, սառուց է դառնում։ Այդպէս ուրեմն յիշեալ

ձիւնադաշտերը լցւած են ոչ թէ ձիւնով, այլ սառցով և կոչւում են սառցադաշտեր կամ գլետչերներ (նկ. 53։)

Սառցադաշտերը մեծ դեր են կատարում բնութեան մէջ։ Բանը նրանումն է, որ սառցով լցւած ձորերը միշտ որոշ աստիճանի թերութիւն են ներկայացնում։ Նրանք սկսում են լեռան գրեթէ գագաթից կամ կողքերից և անընդհատ իջնում են ցած։ Պարզ բան է, որ այդ ձորերը լցնող սառցի ստորին մասերը միշտ գտնուում են վերին մասերի ճնշման տակ։ Այդ պատճառով սառցադաշտերը



Նկար 53.

միշտ շարժւում են, միշտ հոսում են դէպի ցած. միայն թէ այդ հոսանքը խիստ դանդաղ է։ Իհարկէ նրանց տաշտը կազմող ձորերը հարթ և հաւասար չեն՝ տեղ-տեղ լայնանում են, տեղ-տեղ նեղանում։ Յատակին և կողքերին


շրւած են լինում մեծ-մեծ քարաժայուեր: Մի խօսքով՝ սառադաշտի հոսանքի դէմ հազարաւոր արգելքներ կան: Սակայն դրանք անկարող են սառցի առաջն առնել: Նեղ կիրճերին մօտենալիս նա կծկում, նեղանում է. բարձրութիւնների առաջ կամաց-կամաց բարձրանում է վեր, հասնում է դրանց ծերպերին, անցնում է դրանց վրայով ու անվերջ շարունակում իր ճանապարհը: Հասկանալի է, թէ սառցի այդ հոսանքն ինչ ազգեցութիւն է անում իր տաշտի կազմութեան վրայ: Նա անդադար քերում, մաշում է լեռը: Իր տակին ահազին քարաժայուեր է պոկում և հետզհետէ դէպի առաջ գորում: Աւելի խիստ կերպով քերում, մաշում է սառցադաշտն իր կողքերով: Այդ է պատճառը, որ ձորի երկու կողքերից միշտ պոկում, թափւում են սառցադաշտի եզրների վրայ մեծ և փոքր քարեր, քարաժայուեր և հող: Դրանք սառցադաշտի երկու եզրներին շարւած են նրա ամբողջ երկարութեամբ: Քարերի այդ կոյտերը սառցադաշտը հետզհետէ իջեցնում է ցած և բերում, թափում է այնտեղ, որտեղ ինքն էլ հալւում, վերջանում է: Իսկ այդտեղ սառցադաշտի հալելուց գոյացած և մինչև այժմ նրա տակովը հոսող գետակը՝ մանաւանդ գարնան յորդացած ժամանակին՝ առնում է այդ բոլորը և շշում դէպի ցած:

Սառցադաշտերն, ինչպէս ասացինք, հոսում են առհասարակ շատ դանդաղ, օրական առաջ են գնում երբեմն միայն մի քանի վերշոկ. սակայն կան և այնպիսիները, որոնք օր և գիշերւայ ընթացքում անցնում են մինչև 10 սաժէն: Տաք օրերին սառցադաշտերը հոսում են աւելի արագ, և ահա մանաւանդ այդ ժամանակ սառցադաշտին մօտենալիս՝ հազարաւոր ձայներ ենք լսում: Նա մերթ մեղմ ճաքճում է, մերթ դղրդում է, որպէս թնդանօթ. դրան խառնուում է հազարաւոր կաթիլների կաթկըթոցը, հոսող ջրի կարկաչիւնը, թափւող հողի կամ ընկնող քարի աղմուկը և այլն:

Տաք երկրներում սառցադաշտերը յաճախ իջնում են

մշտական ձիւնի սահմանից էլ ցած. իսկ ցուրտ ծովափնեայ երկրներում անընդհատ հոսելով, շատ անգամ հասնում են ծովին և խրւում նրա մէջ: Ծովի ալիքները երբեմն նրանից ահազին կտորներ են պոկում: Դրանք երկար ժամանակ վրան կազմում են պոկում նրան ահազին սառցակոյտերը, որոնք յայտնի են սառցալեռներ անսունով (Նկար 54):

Այժմ սառցադաշտերը գտնուում են միայն բարձր լեռների գագաթների մօտ գտնուող ձորերում: Իսկ հին ժամանակները նրանցով պատաժ էր ամբողջ Եւրոպայի հիւսիսային և կենտրոնական, նոյնպէս մեր Կովկասի մեծագոյն մասերը:




Նկար 54. Ծովը իջնող սառցադաշտ.

Այդ սառցադաշտերը պատել էին ոչ միայն մեր երկրի մեծ և փոքր լեռների գագաթները, այլ իջնում և տարածւում էին աւելի ցած, աւելի հեռուն: Նրանք ամբողջ ժամանակ շարժւում էին դէպի ցած, քերում և քանդում էին իրենց տաշտերն ու կողքերը և լեռներից զանազան մեծութեան քարեր պոկելով՝ տանում, ցըւում կամ դասում էին աւելի ցածը տեղերում: Այդպէս են առաջացել մեր երկրի շատ տեղերում ջրւած կամ կուտակւած ահազին քանակութեամբ մեծ և փոքր քարերը, որոնք մեծամեծ դժւարութիւններ են ստեղծում երկրագործութեան համար:

7. Զրի ընդարձակւելը սառչելիս

Սառուցը մի ուրիշ յատկութիւն էլ ունի, որով կարողանում է աւելի խոշոր դեր կատարել բնութեան մէջ։ Մենք գիտենք արդէն, որ մարմինները տաքանալուց ընդարձակւում են, իսկ ցրտից սեղմուում. հետեապէս տաքութիւնից նրանց տեսակարար կշիռը փոքրանում է, իսկ ցրտից՝ մեծանում։ Այդ կողմից ջուրը մի որոշ բացառութիւն է կազմում։ Եթէ օրինակ՝ անօթի մէջ (նկ. 55) մինչև մի որոշ կէտ տաք ջուր ածենք, ապա այդ ջուրն աստիճանաբար սառեցնենք, կնկատենք հետևեալը. քանի ջրի տաքութեան աստիճանն իջնում է, այնքան նրա ծաւալը փոքրանում է, այսինքն այնքան նա իջնում է խողովակի մէջ։ Այդպէս շարունակում է մինչև Ցելսիոսի ջերմաչափի չորս աստիճանը։ Տաքութեան աստիճանը դրանից աւելի իջնելիս՝ ջուրը նորից սկսում է ընդարձակւել. նրա մակերեսոյթը խողովակի մէջ նորից սկսում է բարձրանալ։ Զրո աստիճանին հասած՝ ջուրը սառուց է դառնում, սակայն սառուց դառնալով՝ նա նորից ընդարձակւում է և աւելի թեթևանում։ Այդ պատճառով էլ սառուցը լողում է ջրի երեսին։



Նկար 55.

Զրի այդ յատկութիւնը շատ մեծ նշանակութիւն ու-

նի։ Այդ է պատճառը, որ ջրերը սառչում են միայն երեսից։ Յիշաւի՝ երեակայենք մեր առաջ մի որևէ գետ կամ լիճ և պարզենք, թէ ինչու նրա ջուրը ծածկուում է սառուցվ միայն երեսից։ Ենթադրենք, թէ այդ ջրի տաքութիւնը 15 աստիճան է և աշնան ցըտերից հետզհետէ սկսում է իջնել։

Երկրագունդը, ինչպէս և նրա վրայի ջուրը, պաղում է երեսից։ Այդ պաղելուց մեր երեակայած լճի ջրի վերին շերտը սեղմուում, ծանրանում և իջնում է յատակը. իսկ այդտեղի աւելի տաք ջուրը բարձրանում, լցուում է նրա տեղը։ Երես բարձրացած ջուրը նորից սառչում ու իջնում է ցած։ Այդպէս շարունակում է, մինչև որ ամբողջ լճի ջրի տաքութիւնը համնում է Ցելսիոսի 4 աստիճանին։ Այնուհետև երեսի ջուրն աւելի ևս պաղելով՝ ոչ թէ ծանրանում, այլ թեթևանում ու երեսին էլ մնում է։ Ցելսիոսի 4 աստիճանից ցածը ջուրը որքան աւելի է պաղում, այնքան աւելի էլ թեթևանում է։ Վերջապէս զրոից ցածը նա սառուց է դառնում, որն իր թեթևութեան պատճառով մնում է ջրի երեսին և միապաղադ շերտով ծածկում է ամբողջ լիճը։

Եթէ 4⁰ տաքութիւնից ցածը էլ ջուրն աստիճանաբար սեղմէր և ծանրանար, եթէ սառուցը ջրից ծանր լինէր, այդ դէպքում սարսափելի հետևանք կստացէր։ Այդ դէպքում բնութեան բոլոր ջրերը բանի պաղէին, պիտի իջնէին յատակ և փոխարինէին յատակի աւելի տաք ջրով, մինչև որ բոլոր ջուրը կհասնէր զրօ աստիճանին։ Դրանից յետոյ երեսից աւելի պաղած ջուրը սառուց կդառնար և կիջնէր յատակ. նրա տեղ նոր ջուր կբարձրանար, նորից կսառչէր ու կիջնէր և այդպէս շարունակ, մինչև որ կսառչէր լճի ամբողջ ջուրը։ Եթէ այդպէս լինէր, այն ժամանակ ձմեռայ ընթացքում բոլոր գետերը, ծովերն ու ովկիանոսները պիտի ամբողջովին սառչէին յատակից մինչև երես։ Այդ դէպքում ոչ միայն բոլոր ձկներն ու միւս ջրային կենդանիները կոչնչանացին, այլ նոյն իսկ արեգա-

կի ոյժն անկարող կլինէր գարնան և ամառաւայ ամիսների ընթացքում այդ սառուցը հալեցնել։ Բնութիւնը կսառէր, և էլ կեանք չէր լինի նրա վրայ։

8. Մարմինների լուծւելը ջրի մէջ

Շատ մարմիններ ջրի մէջ լուծւում են՝ միքանիսը աւելի, միւսները պակաս։ Առհասարակ պինդ մարմինները տաք ջրի մէջ աւելի շատ են լուծւում, քան սառը, ինչպէս որ օդի մէջ ջրային դազը, այնպէս էլ ջրի որոշ քանակութեան մէջ այս կամ այն պինդ մարմինը կարող է լուծւել միայն մի յայտնի քանակութեամբ։ Եւ երբ օրինակ՝ մի բաժակ ջրի մէջ մի մարմին այնքան է լուծւած, որ էլ աւելի չի կարող լուծւել, ասում ենք, որ ջուրը յագեցած է այդ մարմնով։ Այդ դէպքում լուծոյթն էլ կոչւում է յագեցած։

Վերցնենք մի բաժակ ջուր և մէջը քիչ-քիչ բորակ ածելով՝ սկսենք խառնել։ Սկզբում բորակը հեշտութեամբ և արագ է լուծւում, իսկ յետոյ աւելի և աւելի դանդաղ։ Վերջը մեր ածած բորակը, ինչքան էլ որ խառնում ենք, էլ չի լուծւում ու մնում է բաժակի տակին։ Ուրեմն ջուրը յագեցաւ բորակով։ Այժմ եթէ բաժակը տաքացնենք, կտեսնենք, որ տակին մնացած բորակը նորից լուծւեց։ Բացի գրանից՝ եթէ այժմ էլի քիչ-քիչ բորակ աւելցնենք, այդ էլ կլուծւի, մինչև որ տաք ջուրն էլ կյագենայ։ Ուրեմն բորակը տաք ջրի մէջ աւելի շատ է լուծւում, քան սառը։ Այդպէս են գրեթէ բոլոր պինդ մարմինները։

Եթէ մի քանի մարմիններից յագեցած լուծոյթներ պատրաստենք, կտեսնենք որ զանազան մարմիններ տարբեր քանակութեամբ են լուծւում։ Օրինակ՝ միենոյն տարբութիւն ունեցող մի-մի բաժակ ջրի մէջ բորակը լուծւում է երկու անգամ աւելի, քան շիբը. իսկ հասարակ աղը՝ բորակից էլ աւելի։

Կան և այնպիսի մարմիններ, որ կարելի է լուծել,

գրեթէ ինչ քանակութեամբ որ ուզենանք։ Այդպէս է օրինակ հասարակ սօսինձը. մի բաժակ ջրի մէջ ինչքան էլ սօսինձ գցենք, կլուծւի։

Մենք տեսանք, որ ջրային գազով յագեցած տաք օդը սառեցնելիս նրա ջրի մի մասը թանձրանում ու դուրս է գալիս միջիցը։ Այդպէս են և պինդ մարմինների լուծոյթները։ Այդ բանը հաստատելու համար տաք ջրում շրի յագեցած լուծոյթը պատրաստենք։ Յետոյ այդ պարզ լուծոյթը բաժակով դնենք սառը ջրի մէջ և սկսենք խառնել։ Հէնց որ լուծոյթը սառում է, սկսում է պղտորւել։ Այդ պղտորանքը շրի մանրիկ հատիկներն են։ Քանի դեռ ջուրը տաք էր, նրանք լուծւած էին. բայց հէնց որ ջուրը սառեց, այդ հատիկներն սկսեցին դուրս գալ ջրից. որովհետև տաք ջրի մէջ վիրը մօտ 20 անգամ աւելի է լուծւում, քան սառը։ Եթէ նոյն փորձը կատարենք հասարակ աղի վերաբերմամբ, կտեսնենք, որ նա սառը և տաք ջրի մէջ գրեթէ հաւասար չափով է լուծւում։

Ուրեմն պինդ մարմինները զանազան չափով են լուծւում ջրի մէջ։ Կան և այնպիսիները, որոնք գրեթէ բոլորովին չեն լուծւում։ Այդպէս է ի միջի այլոց պղինձը։

Ջրի մէջ լուծւելու կողմից գազային մարմինները պինդ մարմինների հակառակն են ներկայացնում։ Նրանք սառը ջրի մէջ աւելի են լուծւում, քան տաք։ Այդ պատճառով ջրի մէջ լուծւած օդը կամ մի այլ գազ նրանից դուրս են գալիս ոչ թէ սառեցնելու, այլ տաքացնելու ժամանակ։

Եթէ օրինակ՝ մի բաժակ սառը ջուր բերենք սենեակ և թողնենք, որ տաքանայ, շուտով կնկատենք, որ բաժակի յատակի և կողքերի վրայ օդի մանրիկ պղպջակներ են գոյանում։ Դրանք մէկը միւսի յետելից պղկւում են ու թոշում ջրի երեսը։ Եթէ այդ ջուրը եռացնենք, նրա միջի ամբողջ օդը կը հեռանայ։ Յիրաւի, երբ այդ ջուրը կը կին սառեցնենք ու նրա մէջ ձուկ կամ մի այլ ջրային կենդանի գցենք, նրանք չեն ապրի. որովհետև շնչելու համար օդ չի մնայ ջրի մէջ։ Սակայն նոյն ջուրը երկար ժամանակ բաց մնա-

լով՝ նորից օդ կվանի և կրկին պիտանի կդառնայ նրանց շնչառութեան համար:


Պինդ մարմինների նման գագերն էլ տարբեր քանակութեամբ են լուծուում ջրի մէջ, ոմանը շատ, միւսները քիչ: Ածխաթթւուտ գազն օրինակ՝ սառը ջրի մէջ 70 անգամ աւելի է լուծուում, քան օդը: Պարզ բան է, որ քանի ջրի տաքութեան աստիճանը բարձր լինի, այնքան այդ տարբերութիւնը պակաս կլինի: Օդի գանազան մասերն էլ տարբեր չափով են լուծուում: Այդպէ՝ թթւածինը երկու անգամ աւելի է լուծուում, քան բորակածինը: Այդ պատճառով ջրում լուծւած օդի մէջ թթւածնի քանակութիւնը համեմատաբար աւելի շատ է, քան մթնոլորտային օդի մէջ:

9. Ջրի քամելը եւ զտելը

Այժմ, երբ ծանօթացանք ջրի լուծող դերին, մեզ համար հասկանալի է դառնուում, թէ ինչու բնութեան մէջ մաքուր ջուր չկայ. այսինքն այնպիսի ջուր, որ իր մէջ լուծւած դրութեամբ զանազան նիւթեր չպարունակէ: Համեմատաբար ամենամաքուր ջուրն անձրևաջուրն է: Սակայն նա էլ, թէև փոքր քանակութեամբ, օդից առած նիւթեր ունի իր մէջ: Իսկ աղբիւրների և գետերի ջրերը միշտ այս կամ այն քանակութեամբ լուծւած նիւթեր են պարունակում:

Բացի այդ լուծւած նիւթերից, երբ ջուրը պղտորւած է, նրա մէջ խառնւած են լինում և զանազան անլուծելի մարմիններ, ինչպէս՝ տիզմ, կաւ, բուսական և կենդանային մարմինների մնացորդներ և այլն: Դրանից նա շատ անգամ անախորժ և նոյնիսկ վնասակար է դառնուում խմելու համար: Այդպիսի խառնուրդներ մանաւանդ շատ է լինում գարնանը՝ ջրերի յորդացման ժամանակ: Պղտոր ջուրը պարզեցնելու և գործածութեան համար պիտանի դարձնելու համար զանազան միջոցների են դիմում: Օրինակ՝ ջուրը տակառների մէջ են ածում և սպասում են, որ պարզի: Սակայն պարզեցնելու այդ եղանակը անյարմար է, մանա-

ւանդ որ ջուրը ժամանակի ընթացքում փչանում է: Այդ պատճառով աւելի յաճախ այնպիսի նիւթեր են խառնում ջրին, որոնք արագացնում են նրա մէջ եղած նիւթերի նստելը, օրինակ՝ շիր, ածուխ և այլն: Նոյն նպատակին համելու համար աւելի լաւ է ջուրը քամենք: Ջուրը քամում են զանազան գործիքների օգնութեամբ, որոնցից ամենահասարակը պատրաստում են քաւանդ քարից: Այդպիսի քարեր շատ են տարածւած մեր ժողովրդի մէջ: Ամենաղիւրին կերպով պղտոր ջուրը կարող ենք քամել ծծան թղթի օգնութեամբ: Դրա համար ծծան թուղթը ձագարածե ծալում, տեղաւորում ենք ձագարի մէջ, ապա ձագարը դնում ենք շիրամին ու նրա մէջն ածում ջուրը (Նկար 56): Ջրի բոլոր խառնուրդները մնում են ծծանի վրայ, իսկ նրա միջով անցնում է ու թափուում է ձագարից միայն զտւած, պարզ ջուրը:



Նկար 56.

Քամած ջուրն, ինչքան էլ պարզ լինի, այնուամենայնիւ մաքուր չէ: Այդ բանում համոզւելու համար մաքուր պնակի մէջ քամած ջուր ենք ածում ու պղիտայի կամ սպիրտի լամպի վրայ տաքացնելով, գոլորշիացնում ենք: Ջուրը բոլորովին ցամաքելուց յետոյ նկատում ենք, որ պնակի տակին ինչ որ բարակ փոշի է մնում: Այդ այն նիւթերն են, որոնք լուծւած էին ջրի մէջ: Ջրի մէջ, բացի այդ պինդ նիւթերից, լուծւած է լինում նաև օդ, որը ջրի եռացնելուց ամբողջովին դուրս է գնում: Այդ է պատճառը, որ եռացրած ջուրը մի առանձին համ է ստանում,

Բոլորովին մաքուր ջուր ստանալու համար հասարակ ջուրը գտում են: Այդ դէպքում վարւում են այնպէս, ինչպէս որ ջաջից կամ զինուց օդի են քաշում: Այդ նպատակով ջուրը եռացնում, ջրային գազ են ստանում, իսկ յետոյ այդ գազը թանձրացնում, նորից ջուր են դարձնում: Ջուրը գտելու համար նոյնպիսի գործիք են քանեցնում,


Ինչ որ օդի քաշելու ժամանակ (նկար 57): Կրավի վրայ զետեղած կաթսայի մէջ եռացնում են ջուրը: Կաթսայի բերնին ամուր կերպով դրւած է կափարիչը, որի վերին մասից ըստում է գազատար խողովակը: Այդ խողովակի պտուտակածե

մասը գետեղւած է սառնարանի մէջ: Սառնարանը պաղ ջրով լցրած մի մեծ անօթ է, որի ջուրը շուտ շուտ փոխում են, որ չտաքանայ: Աւելի յաճախ սառնարանն այն-


պէս են սարքում, որ նրա միջով անընդհատ սառը ջուր հոսի: Կաթսայի մէջ ջուրը եռ է գալիս և ջրային գազ դառնում: սա էլ անցնում է պտուտակածե սառը խողովակի մէջ: Այստեղ թանձրանում, հեղուկ ջուր է դառնում և թափւում խողովակի տակին գե-

տեղած անօթի մէջ: Այդ եղանակով ստացած ջուրը բոլորովին մաքուր է և կոչում է զիստիլատ ջուր: Եթէ դիստիլատ ջուրը գոլորշիացնենք, պնակի մէջ ոչինչ չի մնայ, որովհետեւ նրա մէջ լուծւած ոչ մի նիւթ չկայ: Դիստիլատ ջրի մէջ օդ էլ չկայ: այդ պատճառով նրա համը համախորժ է:

Ջուրը կարելի է գտել և աւելի պարզ գործիքով (նկար 58): Դրա համար վերցնում ենք մի ապակէ շիշ, մէջը կիսով չափ ջուր ենք ածում ու բերնին ամրացրած խցանի միջով անց ենք կացնում գազատար



Նկար 57.



Նկար 58.


դրա միւս ծայրն էլ իջեցնում ենք սառցով շրջապատած անօթի մէջ: Շիշը ջուրը եռացնելով՝ ջրային գազ ենք ըստանում. սա էլ անցնելով սառը շիշ մէջ, թանձրանում, հեղուկ է դառնում:

10. Զրի շրջանառութիւնը բնուրեան մէջ

Ցամաքի վրայ անթիւ մեծ ու փոքր գետեր կան, որոնք անընդհատ ահագին քանակութեամբ ջուր են տանում դէպի ովկիանոս: Սակայն ովկիանոսի ջուրը ոչ աւելանում է և ոչ պակասում, որովհետեւ, ինչքան որ նա ջուր է ստանում, այնքան էլ տալիս է մթնոլորտին ջրային գազի ձևով: Այդ ջրային գազը մթնոլորտի մէջ թանձրանում է և անձրեկի, ձիւնի կամ այլ ձևով նորից իջնում է երկրի վրայ: Դրա մի մասն անմիջապէս թափւում է ովկիանոս. միւս մասն էլ թափւում է ցամաքի վրայ, որտեղ դրանից աղբիւրներ և ապա գետեր են գոյանում և նորից ովկիանոս թափւում: Այդպէս ուրեմն՝ ջուրն անընդհատ շրջանառութիւն մէջ է. տաքութեան ազդեցութեան տակ ովկիանոսից նա անդադար գոլորշիանում, բարձրանում է մթնոլորտի մէջ: իսկ այստեղ ցրտից թանձրանալով՝ նորից մասամբ անմիջապէս, մասամբ էլ գետեր գառնալով, վերադառնում է ովկիանոս: Ահա այս երեսոյթն է, որին ջրի շրջանառութիւն են ասում:

Այն ջուրը, որ անձրեկի, կամ այլ ձևով թափւում է ցամաքի վրայ, մասամբ լցուում է գետերը, մասամբ գոլորշիանում, մասամբ էլ ծծւում է հողի մէջ: Մծւած ջուրը շարունակում է իջնել դէպի երկրի ներսը, մինչեւ որ համում է այնպիսի շերտի, որն իր միջով ջուր չի թողնում: Այդպէս են՝ կաւը, կամ պինդ լեռնային տեսակները, որոնք որոշ հաստութեան շերտերով տարածւած են գետենի մէջ: Դրանց վրայով ջուրն սկսում է հոսել այս կամ կողմը և վերջ ի վերջոյ դուրս է գալիս երկրի ձեղքւածքներից, որպէս աղբիւրներ (նկար 59): Աղբիւրներն իրար

հետ միանալով՝ գետակներ են կազմում, գետակները՝ գետեր։ Սրանք էլ իրանց ստացած ջուրը նորից տանում, թափում են ովկիանոս։




Նկար 59.

Ուրեմն աղբիւրների ու գետերի ջուրն անձրևաջրի կամ հալած ձիւնի մի մասն է, որ ծծւում է հողի մէջ։ Նա ինչքան էլ պղտոր լինի, բայց և այնպէս հողի զանազան շերտերից անցնելով՝ բոլորովին քամւում է։ Այդ պատճառով էլ աղբիւրների ջուրն այնքան պարզ, այնքան թափանցիկ է։ Այդ ջուրը լիշեալ շերտերի միջով անցնելիս, իր ճանապարհին այնպիսի նիւթերի է պատահում, որոնք հեշտութեամբ լրւծում են նրա մէջ։ Այդ է պատճառը, որ աղբիւրների ու գետերի ջրերը որոշ քանակութեամբ զանազան նիւթեր են պարունակում իրենց մէջ։

Այդպէս ուրեմն՝ գետերի ջուրը միշտ որոշ քանակութեամբ պինդ նիւթեր է պարունակում, որ տանում խառնում է ովկիանոսի ջրին։ Ովկիանոսն անդադար այդ նիւթերն ստանալով և ինքը մթնոլորտին միայն ջրային գաղտալով, հետզհետէ աւելի և աւելի հարստանում է դրանցով՝ աւելի թանձրանում, աւելի ծանրանում։ Միջին թւով հարիւր ֆունտ ծովի ջրի մէջ երեք և կէս ֆունտ զանազան պինդ մարմիններ կան լրւծւած։ իսկ դրա երեք քառորդական մասը կազմում է հասարակ աղը։ Այդ է պատճառը, որ ծովի ջուրը աղի է։

Շատ տեղերում ծովի ջրի այդ յատկութեամբ օգտագում են և նրանից աղ են ստանում։ Դրա համար ծովի




Նկար 60. - Ծովի ջրից աղ ստանալը

ափի մօտ փոսեր են քանդում ու ծովի ջուրը թողնում են դրանց մէջ (Նկար 69)։ Արեգակի աղպեցութեան շնորհիւ ջուրը գոլորշիանում է, ու տակին մնում է աղը խոշոր բիւրեղների ձեռվ։ Յետոյ այդ աղն առանձին գործարաններում մաքրում են խառնուրդից և ապա դուրս հանում վաճառելու համար։

Ինչպէս որ օդը մթնոլորտում մշտական շարժման մէջ է, այնպէս է և ովկիանոսի ջուրը։ Նա անդադար հսում է տաք վայրերից դէպի սառը վայրերը և ընդհակառակը։ Ովկիանոսի ջրի այդ շարժողութեան և նրա պատճառների մասին հասկացողութիւն կազմելու համար հետևեալ փորձն ենք կատարում (Նկար 61)։ Ապակէ անօթի մէջ ջուր ենք ածում և սկսում ենք եռացնել՝ միայն մի կողքից տաքացնելով։ Ջրի հոսանքի ուղղութիւնն աւելի տեսանելի դարձնելու համար՝ նրա մէջ մի կուց բրինձ ենք գցում։ Երբ ջուրն սկսում է տաքանալ, մանաւանդ երբ եռ է գալիս, նկատում ենք, որ բրնձի հատիկները ջրի երեսով անօթի աւելի տաքացող կողմից հսում են դէպի հակառակ կողմը։ Այդտեղ նրանք խորասուգուում են ցած, տակով հսում են դէպի կրակի կողմը և այստեղ գոլորշու պղպջակների հետ վեր

բարձրանալով, նորից շարունակում են իրենց շրջանաձև ճանապարհը: Նոյնպիսի բան կատարվում է նաև ովկիանոսում: Հասարակածի շուրջը ջուրը սաստիկ տաքանում է և սկսում է հոսել դէպի բեւեռները, որտեղից սառը ջուրը հոսում է դէպի հասարակածը՝ այնտեղ գոյացած դատարկութիւնը լցնելու համար: Այդպիսով առաջ են գալիս ծովային հոսանքներ, որոնք զանազան երկրների կլիմայի վրայ շատ մեծ ազդեցութիւն են անում:



Նկար 61.

IV

Ե Ր Կ Ի Ր

ԱՄԵՆԱՆՇԱՆԱԿՈՐ ՀԱՆՔԵՐԸ ԵՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1. Ի՞նչ է հանքը եւ լեռնային տեսակը


Բնութեանը ծանօթանալով, համոզւում ենք, որ նրա մէջ ամեն բան կապւած է մէկը միւսի հետ: Ոչ մի երեւոյթ չի կատարւում ինքն իրեն, առանց պատճառի և ոչ մէկը չի մնում առանց հետեանքի: Միշտ ամեն մի երեսոյթ հետեանք է մի ուրիշի: Եթե մենք ուսումնասիրում ենք բնութիւնը, աշխատում ենք հասկանալ երեսոյթների մէջ եղած այդ կապը, աշխատում ենք գտնել իւրաքանչիւր երեսոյթի պատճառն ու հետեանքը:

Մինչև այժմ մենք ծանօթացանք օդի ու ջրի առանձնայատկութիւններին և այն փոփոխութիւններին, որոնց ենթարկում են դրանք: Այժմ պիտի ծանօթանանք երկրի հետ և տեսնենք, թէ նա ինչ փոփոխութիւնների է ենթարկում, ինչ կապ կայ այդ փոփոխութիւնների մէջ, և ինչպէս են ազդում միմեանց վրայ հողը, ջուրը և օդը:

Մենք ասացինք, որ երկրագունդը շրջապատւած է մթնոլորտով, իսկ նրա մակերեսոյթի մեծագոյն մասը պատած է ջրով: Իսկապէս երկրի մակերեսոյթը մի մեծ ովկիանոս է, որից ցամաքը դուրս է գալիս մի քանի խոշոր կղզիների ձևով: Հետեապէս մենք կարող ենք ասել, որ երկրագունդը երկու կեղեռվ է շրջապատւած՝ մէկը ջրեց

բաղկացած, միւսը՝ օդից: Իսկ ինքը երկրագունդը կազմած է զանազան պինդ մարմիններից:

Երկրի կազմութիւնը կարող ենք զիտել այնպիսի տեղերում, որտեղ խոր բացւած է գետինը, օրինակ՝ խոր ձորերում, երկաթուղու համար կատարած գետնի կտըրւածքներում, լեռների բացւածքներում և այլն: Այդպիսի տեղերում, երբ նայում ենք վերևից ցածր, նկատում ենք որ գետնի կազմութիւնը միատեսակ չէ: Անթիւ քանակութեամբ շերտեր, միմեանց զուգահեռական, շարւած են իրար վրայ: Այդ շերտերը զանազան հաստութեան են՝ երբեմն մի քանի վերշոկ, երբեմն էլ տասնեակ սաժէն: Դրանցից իւրաքանչիւրը մի տեսակ կազմութիւն ունի. մէկը աւագ է, միւսը կաւ, երրորդը խիճ, մէկը մի տեսակ քար է, միւսը մի ուրիշ տեսակ և այլն: Շատերը հողի նման փխրուն են, կամ ինչպէս ասում են, հողային կազմութիւն ունեն. այդպէս են աւազն ու կաւը. շատերն էլ պնդացել, քարացած տեսակներ են կազմել: Այդ շերտերից իւրաքանչիւրը, որ առանձին կազմութիւն ունի, լեռնային տեսակ է կոչւում: Ամեն քայլափոխում պատահող քարերը զանազան լեռնային տեսակների կտորներ են:



Նկար 62.

Եթէ համեմատենք զանազան լեռնային տեսակներ, օրինակ՝ զանազան տեսակ քարեր, նկատում ենք որ դրանցից շատերը բաղկացած են մի կազմութիւն ունեցող նիւթից. միւսներն ընդհակառակը՝ բաղկացած են մի քանի այդպիսի նիւթերից: Խրամաբանը առաջացած լուծոյթներ ենք պատրաստում զանազան բիւրեղացող նիւթերից, օրինակ՝ բորակից, շատից, սոգից և պղնձի առջասպից: Այդ լուծոյթներն ածում ենք լայն ամանների մէջ, գնում մի հանգիստ տեղ և թողնում, որ ցամաքեն: Մի քանի օրից յետոյ, երբ դրանց ջուրն զգալի չափով կպակասի, նկատում ենք, որ անօթներից առաջատակին փոքրիկ բիւրեղիկներ են գոյացել. և որքան հեղուկն աւելի է ցամաքում, այնքան այդ բիւրեղները խոշորանում են: Նոյն փոքրձցոյց է տալիս, որ վերցրած լուծոյթներից ամեն մէկն իր առանձին բիւրեղներն


մի հանքից, կամ մի քանի: Օրինակ կաւիճը, կրաքարը, հասարակ աղը շատ տեղ ահագին շերտեր են կազմում: Եթէ ըննենք այդ լեռնային տեսակները, կտեսնենք, որ դրանցից իւրաքանչիւրը մի տեսակ նիւթից է բաղկացած: Ընդհակառակը՝ երբ կտըրում ենք ուրիշ լեռնային տեսակներ, դրանց թարմ կոտրած երեսի վրայ զանազան նիւթեր ենք նկատում: Այդպէս է գրանիտը և շատ ուրիշ լեռնային տեսակներ:

Այդպէս ուրեմն երկրագունդը կազմւած է լեռնային տեսակներից. իսկ լեռնային տեսակը կարող է կամ մի հանքից բաղկացած լինել, կամ մի քանի:

Երբ աւելի մօտից ենք ծանօթանում զանազան հանքերի, տեսնում ենք, որ դրանց մէջ յաճախ պատահում են այնպիսիները, որոնց կտորները շրջապատւած են յարթ կողքերով: Օրինակ՝ մաքուր աղի մէջ յաճախ այնպիսի կտորներ ենք գտնում, որոնք կատարեալ խորանարդի ձև ունեն. կարծես վարպետի ձեռքով տաշած լինեն դրանք: Հանքի այդպիսի կանոնաւոր ձևին ըիւրեղ են ասում. իսկ այն մարմինները, որոնք այդպիսի ձեւեր են կազմում, կոչւում են ըիւրեղացող մարմիններ:

Շատ հեշտութեամբ կարող ենք ինքներս բիւրեղներ պատրաստել: Միևնույն ժամանակ այդ եղանակով աւելի լաւ կծանօթանանք բիւրեղի կազմւելուն, քան ուսումնասիրեղով բնական բիւրեղները: Դրա համար յագեցած լուծոյթներ ենք պատրաստում զանազան բիւրեղացող նիւթերից, օրինակ՝ բորակից, շատից, սոգից և պղնձի առջասպից: Այդ լուծոյթներն ածում ենք լայն ամանների մէջ, գնում մի հանգիստ տեղ և թողնում, որ ցամաքեն: Մի քանի օրից յետոյ, երբ դրանց ջուրն զգալի չափով կպակասի, նկատում ենք, որ անօթներից առաջատակին փոքրիկ բիւրեղիկներ են գոյացել. և որքան հեղուկն աւելի է ցամաքում, այնքան այդ բիւրեղները խոշորանում են: Նոյն փոքրձցոյց է տալիս, որ վերցրած լուծոյթներից ամեն մէկն իր առանձին բիւրեղներն

է առաջացնում: Իւրաքանչիւր նիւթի բիւրեղն իր ձևով բոլորովին տարբերում է միւս նիւթի բիւրեղից:



Նկար 63.

Ենք աւելի խոշոր բիւրեղ ստանալ, դրա համար լուծած նիւթից մի բիւրեղիկ ենք կազում թելի ծալրին ու իջեցնում յագեցած տաք լուծոյթի մէջ: Գիշերւայ ընթացքում այդ բիւրեղիկն այնքան է մեծանում, որ երբեմն մօտ մի մատնաչափ բիւրեղ է կազմում:

Լուծոյթներից բիւրեղներ գոյանալը կհասկանանք, եթէ յիշենք, որ ջրի որոշ քանակութեան մէջ միայն որոշքանակութեամբ նիւթ կարող է լուծւել: Երբ լուծոյթն սկսում է ցամաքել, կամ տաք լուծոյթը հովանալ, էլ նոյն քանակութեամբ նիւթ չի կարող պահել իր մէջ: Նիւթի այդ աւելորդ մասը դուրս է գալիս լուծոյթից բիւրեղների ձևով: Պարզ է ուրեմն, որ որքան հեղուկը շատ լինի և որքան երկար թողնենք, այնքան աւելի խոշոր բիւրեղներ կստանանք: Պէտք է գիտենալ սակայն, որ կան և այնպիսի մարմիններ, որոնք երբեք բիւրեղներ չեն կազմում: Այդպէս է օրինակ՝ սօսինձը:


Այժմ ծանօթանանք երկրագունդը կազմող ամենից աչքի ընկնող լեռնային տեսակներին և հանքերին:

2. Գ ր ա ն ի ս

Գրանիտը կարմրաւուն գոյնի լեռնային տեսակ է: Շատ տեղերում ահագին լեռներ և լեռնաշղթաներ ամբողջութեամբ դրանից են բաղկացած:

Բիւրեղներ ենք ստանում և այն դէպքում, երբ տաք ջրից յագեցած լուծոյթ ենք պատրաստում և ապա թողնում, որ գանդաղ հովանայ: Եթէ այդ դէպքում ցանկանալու համար:


Գրանիտը միակերպ լեռնային տեսակ չէ, մի հանքից չէ բաղկացած: Նա կազմւած է միմեանց կպած երեք տեսակ հանքերի հատիկներից: Կարմրաւուն գոյնի հատիկները կոչւում են օրտոկլազ, սպիտակ կիսաթափանցիկ հատիկները՝ կվարց և վերջապէս փայլուն սև թերթիկները՝ փայլար:



Նկար 64. Գրանիտի ողորկած կտոր գրանիտը հէնց այդ տեսակիցն է: Օրտոկլազից յետոյ երկրորդը տեղը բռնում է կվարցը. իսկ ամենից քիչ փայլարը:

Գրանիտը խիստ տարածւած է բնութեան մէջ: Մեծ մասամբ նա պինդ և դիմացկուն լեռնային տեսակ է և այդ պատճառով էլ գործ է ածւում, որպէս շինութեան նիւթ: Աւելի հասարակ գրանիտով մեծ քաղաքներում փողոցներ են քարում:

Օրտոկլազը ոչ միայն կազմում է գրանիտի մեծագոյն մասը, այլ գտնուում է նաև շատ ուրիշ լեռնային տեսակների մէջ: Յաճախ պատահում է նաև ազատ դրութեամբ: Այդ պատճառով բնութեան մէջ նա ամենատարածւած հանքերից մէկն է: Նրա բիւրեղները հատւածակողմներ են կազմում (Նկար 65) և մեծ մասամբ կարմրաւուն, մարմնի գոյն են ունենում: Պնդութեան կողմից թէկ կվարցից ստոր է, այնուամենայիւ սա էլ բաւական պինդ մարմին է: Միենոյն ժամանակ օրտոկլազը համեմատաբար փխրուն է և հեշտութեամբ կոտրատւում ու կանոնաւոր սալեր է տալիս: Բացի դրա-




Նկար 65. Հաստածակողմներ

նից՝ խոնաւ օդի ներգործութիւնից նա հետզհետէ քայլայ-
ւում է: Նրա մի մասը՝ լուծւում է ջրի մէջ ու նրա հետ
հեռանում է, իսկ միւս մասը հետզհետէ մանր փոշի է դառ-
նում: Անձեւաջուրն այդ փոշին էլապնում, տանում է իր
հետ ու մի որեւէ տեղ նստեցնելով՝ մաքուր կաւ է ա-
ռաջացնում.

Կվարցը որոշ չափով նման է աղօտ ապակուն և դրա-
նով էլ տարբերում է գրանիտի միւս բաղադրիչ մասե-
րից: Նա ամենապինդ հանքերից մէկն է: Նրանով կարելի
է գիծ քաշել, այսինքն կտրել, ոչ միայն շատ ուրիշ հան-
քեր, այլ և ողորկ ապակին: Այդ կողմից ուրեմն նա նման
է ալմաստին: Կվարցը, օրտոկլազի նման, շատ տարածւած
է բնութեան մէջ: Նա էլ բացի գրանիտից՝ գտնւում է շատ
ուրիշ լեռնային տեսակների մէջ ու, ինչպէս և օրտոկլազը,
պատահում է նաև ազատ դրութեամբ: Երբեմն էլ բաւա-
կան խոշոր բիւրեղներ է կազմում: Լեռների ճեղքւածք-
ներում կվարցը յաճախ պատահում է սրածայր հատւածա-
կողմներից բաղկացած գեղեցիկ բիւրեղների ձևով (նկար 66):

Կվարցի բիւրեղանալը՝ կատարւում է ճիշտ այնպէս,
ինչպէս և ջրի մէջ լուծւած այս կամ այն նիւթինը: Կայծ-
քարը կամ գայլախազը, որից կազմւած է կվարցը, փոքր
քանակութեամբ լուծւում է
ջրի մէջ: Եթէ լեռան ներսից
գէպի նրա ճեղքւածքը դուրս
եկող ջրի մէջ կայծքար կայ,
այդ ջուրը դուրս գալով, սկսում
է գոլորշիանալ: Դրանից ճեղք-
ւածքի պատերի վրայ կվարցի
բիւրեղներ են գոյանում, որոնք
երբեմն բաւական խոշոր մե-
ծութեան են համուռմ: Գրա-
նիտի մէջ էլ կվարցը բիւրե-
ղացած դրութեամբ է գտըն-
ում: Սակայն այստեղ նրա




նկար 66. կվարցի բիւրեղներ

բիւրեղները շատ մանր են և հատիկների ձևով խտօրէն միա-
ցած են օրտոկլազի ու փայլարի հատիկներին:

Մի քանի լեռնային տեսակների մէջ կվարցը երբեմն
անկանոն գնդեր է կազմում: Այդ գնդերը բաղկացած են
չբիւրեղացած կվարցից, այսինքն կայծքարից:

Կայծքարը մուգ գոյն ունի և կվարցի նման պինդ է.
սակայն, ինչպէս ասացինք, նա բիւրեղացած չէ և կոտըր-
ւելիս սուր եզրներով անկանոն կտորներ է տալիս: Դրանք
իրենց պնդութեան շնորհիւ կարող են զանազան առարկա-
ներ կտրել: Կայծքարի այդ յատկութեամբ օգտուում են
մեր գիւղացիք: Դրա սուր կտորներն ամրացնում են կա-
մերի տակին, որով ցորենի ցօղունը կարողանում են հեշ-
տութեամբ մանրացնել, դարման դարձնել: Իսկ հին ժա-
մանակները, երբ մարդիկ դեռ ծանօթ չէին մետաղների
գործածութեան, զրանից զանազան գործիքներ էին շինում,
օրինակ՝ դանակներ, տապարներ, տէգերի և նետերի ծայ-
րեր և այլն: Վերջապէս հէնց մօտ ժամանակներս, երբ
լուցկի գործածութիւնը դեռ չէր մտել մեր ժողովրդի
մէջ, գիւղացիք դրա օգնութեամբ էին կրակ ստանում:

Փայլարը գրանիտի մէջ գտնւում է մանր և փայլուն
թիթեղիկների ձևով: Կվարցի և օրտոկլազի նման՝ բացի
գրանիտից նա գտնւում է և ուրիշ լեռնային տեսակների
մէջ: Բնութեան մէջ երկու տեսակ փայլար է գտնւում՝
մէկը արծաթագոյն, փայլուն և թափանցիկ, միւսը՝ թէն
գարձեալ փայլուն, բայց սև և անթափանցիկ: Երկումն էլ
երբեմն պատահում են խոշոր կտորներով ու հեշտութեամբ
բաժանվում են բարակ թերթերի (նկար 67): Փայլարի այդ
յատկութիւնը մարդիկ գիտէին
դեռ հին ժամանակներում,
երբ դեռ ապակու գործածու-
թեան ծանօթ չէին, տների պա-
տուհաններն սպիտակ փայլարի
թերթերով էին ծածկում: Հէնց
այժմ էլ փայլարը երբեմն գործ



նկար 67. փայլար

են դնում նոյն նպատակով, օրինակ՝ մեքենաների մէջ, որտեղ բարձր տաքութեան պատճառով ապակին դիմանալ չէ կարող: Նա թէև ապակու նման թափանցիկ չէ, բայց խիստ ճկուն է ու բարձր տաքութիւնից չի կոտրւում:

3. Աւագ եւ աւազաբարեր

Աւազը շատ տարածւած է բնութեան մէջ: Ինչպէս յետոյ տեսնելու ենք, նա կազմում է ամեն մի հողի մեծագոյն մասը: Բայց շատ տեղ աւազը պատահում է անխառն: Այդ դրութեամբ նա ահազին շերտեր է կազմում երկրի մէջ: Շատ տեղ էլ նա ուղղակի գտնում է երկրի երեսին: Օրինակ՝ ցամաքի բոլոր անապատներն էլ սեծ մասամբ աւազով են պատահ:

Աւազը կազմւած է առանձին մանրիկ հատիկներից, որոնցից իւրաքանչիւրն առանձին լեռնային տեսակի կտոր է: Ուրեմն աւազը, թէև ինքն առանձին լեռնային տեսակ է, բայց բաղկացած է ուրիշ լեռնային տեսակների մանր հատիկներից:

Աւազի գլխաւոր յատկութիւնն այն է, որ նրա մասնիկներն իւրար հետ միացած չեն. այդ պատճառով նա հեշտութեամբ ցըւում է: Զուրն էլ արագ անցնում է նրա միջով, որից նա շատ շուտ չորանում է:

Շատ տեղերում աւազը ծածկում է երկրի երեսն ու երբեմն ահազին տարածութիւններ բռնում: Որովհետև նա գուրկ է սննդարար նիւթերից և իր մէջ ջուր չի պահում, այդ պատճառով այդպիսի տեղերը զուրկ են լինում բռնականութիւնից: Քիչ թէ շատ ուժեղ քամին հեշտութեամբ բարձրացնում է այդ աւազն ու ցըւում ուրիշ տեղեր: Յաճախ աւազի բլուրներ և լեռներ են գոյանում այնպես, որտեղ առաջ ամեններն չկային: Այդպիսի աւազուտների շրջակայքի արտերն ու այգիներն միշտ վտանգի են ենթարկւած. որովհետև բամին շատ անգամ աւազով ծածկում է այդ արտերն ու այգիներն և դրանով մեծ վաստ

հասցնում երկրագործութեան: Այդպիսի վասակար երեւոյթների առաջն առնելու համար մարդիկ աշխատում են կապել աւազը. այդ նպատակով նրա վրայ զանազան բոյսեր են աճեցնում:

Զանազան տեսակ աւազ է լինում՝ կամ մեծահատիկ, կամ մանրահատիկ, կամ սպիտակ կամ ուրիշ գոյնի: Երբեմն գտնում է բոլորովին սպիտակ աւազ: Այդպիսի աւազն առաջ է եկել կվարցից. նրա իւրաքանչիւր հատիկը կվարցի փոքրիկ կտոր է: Սպիտակ աւազը հաղւագիւտ է և գործ է ածւում լաւ տեսակ ապակի պատրաստելու համար: Եթէ նրան սօդ և շիբ խառնենք ու շիկացնենք, այդ խառնուրդը կհալւի ու մի թանձր, թափանցիկ նեղուկ կտայ. իսկ երբ այդ հեղուկը սառի, ապակի կդառնայ: Ապակին հէնց այդ եղանակով են պատրաստում:

Հասարակ աւազը կամ մոխրագոյն է լինում, կամ գեղանաւուն, որովհետև բացի կվարցից նրա մէջ կան գրանիտի, օրոտոկլազի, փայլարի և շատ ուրիշ լեռնային տեսակների կտորներ:

Աւազը որոշ պայմաններում պինդ լեռնային տեսակներ է կազմում: Դրանք յայտնի են աւազաքար անունով: Աւազաքար մենք ինքներս էլ կարող ենք պատրաստել: Եթէ օրինակ՝ ջրի հետ կիր խառնենք ու այդ խառնուրդն ածենք աւազի վրայ, ջուրը կզոլորշիանայ, իսկ մնացած կիրը կը կապի աւազի մասնիկները: Հէնց զրա վրայ էլ հիմնւած է կրի գործածութիւնը շինութիւններ կառուցանելու ժամանակ:

Աւազաքարերն էլ հէնց այդ եղանակով են ստեղծւել բնութեան մէջ: Աղբիւրների ջուրը միշտ զանազան նիւթեր է պարունակում իր մէջ: Ենթագրենք, թէ աւազի շերտի մէջ այնպիսի ջուր է ծծւել, որը կրաքար կամ կայծքար է պարունակում: Երբ այդ ջուրը գոլորշիանայ, նրա մէջ լուծւած կայծքարը կամ կրաքարը կմնան աւազի մէջ ու նրա հատիկները կապելով՝ պինդ լեռնային տեսակներ կկազմեն: Օրինակ ջրաղացքարը հէնց այդ եղանակով գոյացած աւազաքար է:

4. Կաւ եւ կաւային թերթաբարեր

Կաւը նոյնպէս շատ տարածւած է բնութեան մէջ ու երկրի կեղեռում ահագին շերտեր է կազմում: Աւազից զանազանուում է նրանով, որ հատիկաւոր չէ: Նրա մասնիկներն այնքան մանր են, որ պարզ աչքով անկարելի է տեսնել: Չորանալիս նրա մասնիկները ոչ թէ ցըւում են, ինչպէս աւազինը, այլ կպած են մնում միմեանց և պինդ կառոր կազմում: Թրջած դրութեամբ կաւը փափուկ է ու մածուցիկ. դրա շնորհիւ նրան կարելի է հունցել, ինչպէս խմորը, և այս կամ այն ձեւ տալ: Աւազի հակառակ՝ կաւի միջով ջուրը չի անցնում, բայց ինքը մեծ քանակութեամբ ջուր է կլանում և ուռչում: Այդ պատճառով, եթէ հողը մեծ քանակութեամբ կաւ է պարունակում, անձրեներից նրա վրայ լճակներ են գոյանում. ինքը հողն էլ կպչուն ցեխ է դառնում ու երկար չի չորանում: Իսկ չորանալուց յետոյ խիստ սեղմուում է ու սաստիկ ճաքճում:

Բոլորովին մաքուր կաւը սպիտակ է լինում: Սակայն այդ տեսակ կաւ բնութեան մէջ շատ քիչ է պատահում: Նա կարող է գտնուել միայն այնտեղ, որտեղ գոյացել է, այսինքն զրանիտային լեռների մօտ: Թանկագին ճենապակէ անօթները այդ կաւից են պատրաստում:

Աւելի յաճախ է պատահում բացմոխրագոյն կամ բըրուտի կաւը, որից զանազան կաւէ անօթներ են պատրաստում: Դա արդէն մաքուր չէ և որոշ խառնուրդներ է պարունակում: Վերջապէս սովորական կաւը, որը դրանից էլ աւելի խառնուրդներ ունի, մուգ մոխրագոյն կամ կարմրաւուն է լինում և գործ է ածւում կրամիտ կամ աղիւս պատրաստելու համար:

Երբ կաւը խիստ շիկացնում ենք, նա բարի նման ամրանում է և ջրից էլ չի փափկանում: Ինչպէս ասում են, կաւը «թրծուում է»: Դրա վրայ էլ հիմնւած է կաւի այս կամ այն գործադրութիւնը:

Հասարակ կաւից աղիւս (կամ կրամիտ) պատրաստում են այսպէս: Նախ պատրաստում են շաղախը: Դրա համար կաւին մի փոքր աւագ են խառնում ու լաւ տրուում: Ապա այդ շաղախից հում աղիւս են թափում, որը չորացնում են արևի, կամ աւելի լաւ, ծածկոցների տակ: Չորացնելուց յետոյ հում աղիւսը դարսում են աշտարակածե հնոցի մէջ ու տակին ուժեղ կրակ վառում: Միքանի օրից յետոյ, երբ երեսի շերտի աղիւսներն էլ շիկացել են, կրակը հանգնում են. իսկ երբ հնոցը հովանում է, սկսում են դուրս բերել արդէն պատրաստի աղիւսը:

Կաւէ անօթներն էլ այդպէս են պատրաստում: Սակայն այդ եղանակով թրծած (այրած) ամանեղէնը ծակոտէն է լինում ու ջուր չի պահում իր մէջ: Զուր չհանող ամանեղէն պատրաստելու համար այդ անօթները թրծելուց առաջ ներսից ծածկում են հասարակ կամ մի այլ աղով: Աղը տաքութիւնից հալւում է ու նրանց ներսը պատում ապակենման շերտով: Դրա միջով ջուրն այլ ևս չի անցնում:


Երկրի խոր շերտերում գտնուող կաւն իր վրայ եղած ու ըիշ լեռնային տեսակների ծանրութեան տակ երկար դարերի ընթացքում փոփոխութեան է ենթարկում: Վերջի ի վերջոյ նա սեղմուում, կարծրանում ու քարացած լեռնային տեսակներ է կազմում: Այդ տեսակ քարացած կաւն արդէն ջրից չի կակում, չի հունցւում. բայց նա հեշտութեամբ բարակ թերթերի է բաժանուում և այդ պատճառով էլ կաւային թերթաքար է կոչւում: Զանազան տեսակ կաւային թերթաքարեր կան: Օրինակ այն լեռնային տեսակը, որից բարետախտակ են պատրաստում, կաւային թերթաքարի մի տեսակն է:

Եթէ կաւային թերթաքարը փոշի դարձնենք ու ջրի հետ խառնենք, նա սովորական կաւի բոլոր յատկութիւններն էլ կստանայ. կդառնայ կպչուն, մածուցիկ ու հեշտութեամբ էլ կհունցւի:

5. Կրաքարեր եւ կիր

Կրաքարերը նոյնպէս խիստ տարածւած են բնութեան մէջ։ Գրեթէ ամբողջ երկրագունդը ծածկւած է զանազան կրաքարերի շերտերով, որոնք երբեմն հարիւրաւոր վերստ տարածութիւն են բռնում։ Շատ տեղ նրանք ծածկում են երկրի երեսը, իսկ աւելի յաճախ պատած են աւազի ու կաւի հաստ շերտերով։ Շատ լեռներ մեծ մասամբ կրաքարերից են բաղկացած։ Այդպէս են օրինակ՝ Ղրիմի լեռները։

Զանազան տեսակ կրաքարեր կան։ Դրանք տարբերում են միմեանգից իրենց գոյնով, պնդութեամբ և ծագումով։ Ամենից շատ տարածւած է կոպիտ կրաքարը, որն իր պնդութեան պատճառով գործ է ածւում շինութիւնների համար։ Կրաքարի միւս տեսակը, որ իր շերտաւորութեան պատճառով հեշտութեամբ սալեր է տալիս, գործ է ածւում փողոցների մայթերը սալելու համար։



Նկար 68. Ծալքեր կաղմած կրաքարի շերտեր։

Մարմարը նոյնպէս կրաքար է. սակայն նրա միւս տեսակներից տարբերում է իր պնդութեամբ և հատիկաւոր կազմով։ Նոր կոտրւած մարմարը շաքարի կազմն է յիշեցնում, և նրա իւրաքանչիւր հատիկը մի բիւրեղ է։ Ուրեմն մարմարը բիւրեղացած կրաքար է։ Մաքուր սպի-


տակ մարմարը գործ է ածւում արձաններ պատրաստելու, նոյնպէս սլալատներ, տաճարներ և այլ շինութիւններ գարգարելու համար։

Կաւիճը նոյնպէս կրաքար է, սակայն մարմարի հակապատկերն է ներկայացնում։ Նա բիւրեղացած չէ, աւելի փափուկ է և հեղտութեամբ փոշի է դառնում։ Ուրեմն այդ կողմից նման է կաւին։ Մի քանի տեղերում ամբողջ լեռներ և բլուրներ կաւճից են բաղկացած ու ձիւնապատ լեռների նման՝ դեռ հեռակացած աչքի են ընկնում իրենց կաթնասպիտակ գոյնով։

Մենք արնէն գիտենք, որ կրաքարը բաղկացած է կըրից և ածխաթթւուալից։ Ուրեմն եթէ նրանից ածխաթթւուար հեռացնենք կմնայ կիրը։ Որովհետեւ կրի գործածութիւնը շինութիւնների համար շատ տարածւած է, այդ պատճառով, եթէ քաղաքների մօտ կրաքարեր կան, այստեղ զան և կրի գործարաններ։ Կիր ստանալու համար կրաքարն այրում են ճիշտ այնպէս, ինչպէս հում աղիւսը։ Երբ կրաքարը շիկանում է, նրանից գուրս է գալիս ածխաթթւուար և մնում է միայն կիրը, որ կոչւում է այրած կամ շնազցրած կիր։

Այրած կիրն արտաքուստ գրեթէ չի տարբերում կրաքարից. նա միայն քիչ սպիտակ է։ Բայց իր բաղադրութեամբ և յատկութիւններով արդէն ոչ մի նմանութիւն չունի նրա հետ։ Կրաքարի մէջ ածխաթթւուած կայ, որն խկոյն գուրս է գալիս, երբ նրա վրայ որևէ թթւուտ ենք ածում։ Կրի մէջ ածխաթթւուած չկայ և թթւուտի հետ խառնւելով՝ նա գազ չի տալիս, այլ միայն լուծւում է նրա մէջ։ Սակայն այրած կրի ամենագլխաւոր զանազանութիւնը՝ ջրի կողմից նրա վրայ ունեցած ազդեցութիւն է։ Կրաքարը ջրից ոչ մի փոփոխութեան չի ենթարկում։ Կիրն ընդհակառակը՝ սաստիկ փոխուում է։ Այդ բանը տեսնելու համար անօթի մէջ մի կտոր այրած կիր ենք դնում ու վրան ջուր ածում (Նկար 69)։ Մի քանի բողէից յետոյ կիրն սկսում է տաքանալ ու գոլորշի արձակել։ Միևնույն ժամա-

նակ նա հետզհետէ ուռչում, մեծանում, ճաքճըւում է և յետոյ ալիւրանման փողի է դառնում (նկար 70): Այդ փոշին արդէն հանգըրած կիր է կոչւում:



Նկար 69. Կրի հանդցնելը.

Վրայ է հիմնւած: Շինութիւններ կառուցանելիս աղիւսների կամ քարերի արանքը լցնում են կրի շաղախով: Իսկ սա օդից ածխաթթւուտ կլանելով՝ կրաքար է դառնում ու ամուր կապում նրանց միմեանց հետ: Սովորաբար այդ նպատակով ոչ թէ մաքուր կիր են գործ դնում, այլ նրա խառնուրդն աւազի հետ: Եթէ աւազի քանակութիւնը պահանջածից (մի մաս կրի վրայ 3—4 մաս աւազ) աւելի չէ, կրի միացնող յատկութիւնը դրանից չի թուլանում: Բայց պէտք է զգոլշ լինել, որ թէ կիրը մաքուր լինի և թէ աւազը կաւ չպարունակէ: Կաւը խիստ թուլացնում է կրի յիշեալ յատկութիւնը:



Նկար 70. Հանդցրած կիր.

6. Կրաքարերի ծագումը


Կրաքարերը, գոյացել են ծովի յատակում: Սակայն ածխաթթւուտային կիր, որից բաղկացած են նրանք, ծովի

ջրում չկայ: Այդ սիւթը մատակարարողը ծովային կենդանիներն են:

Եթէ վերցնենք որևէ կենդանու կմախքը, օրինակ խխունջի խեցին ու վրան աղային թթու ածենք, նրանից իսկոյն ածխաթթւուտի պղպջակներ կրաքարանան: Ուրեմն խեցիի մէջ ածխաթթւուտային կիր կայ: Այդ սիւթը կայ և բոլոր կենդանիների կմախքների մէջ:

Ծովի ջրում բազմաթիւ կենդանիներ են ապրում, որոնք վերջի վերջոյ այդտեղ էլ մեռնում են ու իջնում յատակը: Դրանց գիակների փափուկ մասերը շուտով ոչընչանում են, իսկ պինդ մասերը կամ կմախքները, կարող են մնալ երկար ժամանակ: Այդպիսով գրաբերի ընթացքում այստեղ կմախքների ահագին շերտեր են նստում: Դրանք վերջի վերջոյ ծածկւում են կաւի, աւազի շերտերով և նրանց ծանրութեան տակ ձնշելով՝ հետզհետէ աւելի և աւելի թանձրանում ու պնդանում են: Վերջը կազմում են կրաքարի այս կամ այն տեսակը:

Կրաքարերը զանազան տեսակ են լինում: Որքան աւելի մանը կենդանիների կմախքներից են գոյացել նրանք, այնքան աւելի պինդ են: Ամենապինդ կրաքարերն առաջ են եկել այն ամենամասը կենդանիների կմախքներից, որոնք ոստնարմատներ են կոչւում: Այժմ էլ այդ կենդանիներն այնքան մեծ քանակութեամբ են ապրում ծովերում, որ շատ տեղ ծովի յատակը դրանց կմախքներից բաղկացած թանձր տիղմ է ներկայացնում: Կաւիճը հէնց այդ տիղմն է՝ չորացած և որոշ չափով պնդացած դրութեամբ: Յիրաւի, եթէ կաւճից ստացած փոշին քննենք մանրացոյցի օգնութեամբ, կնկատենք, որ նա ամբողջովին



Նկար 71. Կաւիճը կազմող ոստնարմատների խեցիներ:

բաղկացած է այդ կենդանիների կմախքներից և դրանց կտորներից (Ակար 71):

Կրաքարերի շերտերը թէև գոյացել են ծովի յատակում, բայց այդտեղ չեն մնացել: Մենք քիչ առաջ յիշեցինք, որ շատ տեղերում նոյն իսկ ամբողջ լեռներ բաղկացած են կրաքարերից: Պարզ է ուրեմն, որ այդ լեռները, դրանց կրաքարերը կազմւելիս, լեռներ չեն եղել, այլ ծովի յատակն են կազմել: Հազարաւոր տարիների ընթացքում ինչ որ պատճառներից այդ յատակը հետզհետէ բարձրացել, ցամաք և ապա նոյն իսկ լեռ է դարձել:

7. Ծովերի ցամաքելը եւ աղամաների գոյանալը

Ովկիանոսի ջրի մէջ զանազան պինդ մարմիններ են լուծւած, որոնց երեք քառորդական մասը կազմում է հասարակ ազը: Եթէ որևէ պատճառով ովկիանոսից կտրւում է նրա մի մասը, այդ դէպքում ստացւում է ներքին կամ ցամաքային ծով: Եթէ այդպիսի ծովի մէջ քիչ գետեր են թափւում, նա սկսում է ցամաքել: Նրա ջուրը հետզհետէ պակասում է և վերջապէս աղի թանձը լուծոյթ է դառնում: Տարէց տարի աղն սկսում է նստել յատակին: Զուրը պակասելով հաւաքւում է նախկին ծովի ամենախոր տեղերում: Վերջապէս նա այդտեղ էլ է ցամաքում և այդ փոսերում աղի հաստ շերտեր են նստում: Ժամանակի ընթացքում անձրւեաջուրն աղի այդ կոյտերը կարող է ծածկել աւազի, հողի, կաւի շերտերով: Նրանց տակ նրանք կման, մինչև որ մարդիկ կտննեն և կոկսեն մշակել:

Այդպիսի ցամաքային կամ ներքին ծովեր շատ կան: Օրինակ՝ Պաղեստինի Մեռեալ ծովը հէնց այդ տեսակ ցամաքող ծով է: Նրա ջուրն այնքան է թանձրացել, այնքան շատ աղ է պարունակում, որ մէջը ոչ մի ջրային կենդանի չի կարող ապրել: Այդ պատճառով էլ նրան «Մեռեալ» ծով են ասում: Նոյնպիսի մեռեալ ծով է ներկայացնում և մեր երկրի Ուրմիոյ լիճը:

Աշխարհիս ամենամեծ ներքին ծովը կասպից ծովն է: Գիտական փաստերի հիման վրայ ասում են, որ մի ժամանակ այդ ծովը միացած է եղել Սև ծովի հետ և երկուսն էլ կազմել են Հիսիսային Սառուցեալ ովկիանոսի մասը: Երկրի կեղեկի բարձրանալը կտրել է նրան ովկիանոսից ու նեղ սահմանների մէջ դրել: Այդ ծովի մէջ միայն մի մեծ գետ է թափւում (Վօլգան). իսկ ինքն աւելի շատ ջուր է գոլորշիացնում, քան ստանում է: Այչ պատճառով նա հետզհետէ ցամաքում է: Յամաքելուց նրա մակերևոյթը ովկիանոսի մակերևոյթից նշանաւոր չափով իջել է: Շատ փաստեր ցոյց են տալիս, որ կասպից ծովն առաջ աւելի մեծ և աւելի խոր է եղել: Հին ժամանակներում նա ծածկելիս է եղել իրենից դէպի հիւսիս գտնւած ահագին տափաստանը, որտեղ այժմ, իբրև այդ բանի ապացոյց, բազմաթիւ աղի լճել են մնացել: Դրանցից մօտակայ բնակիչներն ահազին քանակութեամբ աղ են ստանում: որովհետև այդ լճերն ամառը մասամբ ցամաքում են, որից նրանց ափերին և յատակին մեծ քանակութեամբ աղ է նստում: Պարզ բան է, որ եթէ կասպից ծովի ցամաքելը շարունակվի, նրա մէջ թափւող գետերը պակասեն կամ փոխենց իրենց հոսանքը, նրանից ապագայի համար ահագին աղամաքեր կդոյցանան:

Աղը, որ առանձին լեռնային տեսակ է, խիստ տարածւած է ընութեան մէջ: Նրա կոյտերի հաստութիւնը երբեմն հարիւրաւոր սաժէնների է հասնում: Մանաւանդ հարուստ է աղամանքերով մեր երկիրը: Սակայն մեր հանքերը կանոնաւոր կերպով չեն ուսումնասիրւած, շատերը չեն մշակւում: Այդ պատճառով մենք չգիտենք նոյնիսկ՝ նրանց բռնած տարածութիւնները, նրանց շերտերի հաստութիւնը և այն: Աշխարհիս ամենահարուստ աղամանքը համարում է Վելիչկա բաղաքի տակ գտնւածը, որի աղի շերտի հաստութիւնը կազմում է մօտ 700 սաժէն: Դրանից կարելի է եղրակացնել, թէ ինչպիսի ահագին ծով է

այդտեղ ցամաքել, որ այդքան մեծ քանակութեամբ աղ է նստել նրանից:

8. Գան

Ծովի ջրի մէջ բացի հասարակ աղից՝ զանազան ուրիշ նիւթեր էլ կան լուծւած: Պարզ բան է, որ ջուրը ցամաքելիս՝ այդ նիւթերն էլ հասարակ աղի հետ պիտի նըստեն նրա յատակին: Այդ պատճառով աղանձնքերում հասարակ աղի հետ սովորաբար գտնւում են և մի քանի ուրիշ նիւթեր: Դրանցից ամենանշանաւորը գաճն է:

Գաճն իր բաղադրութեամբ բաւական մօտ է կրաքարին: Վերջինը բաղկացած է կրից և ածխաթթւուտից. իսկ գաճը՝ կրից և ծծմբային թթւուտից:

Կրաքարը ջրի մէջ չի լուծւում, այդ պատճառով էլ ծովի ջրի մէջ կրաքար չկայ: Այլ բան է գաճը: Փոքր քանակութեամբ նա լուծւում է ջրի մէջ. դրա շնորհիւ ծովի ջրում միշտ գաճ կայ: Երբ ծովը ցամաքում է, առաջինը նստում է գաճը, որովհետեւ ջրի մէջ նա աւելի քիչ է լուծւում, բան աղը:

Գաճը ջրից դուրս է գալիս բիւրեղացած ձևով: Նրա բիւրեղները որոշ բանակութեամբ ջուր են պարունակում, և այդ պատճառով այդ տեսակ գաճը կոչւում է ջրային: Չորացնելով նրա հետ միացած ջուրն անկարող ենք հեռացնել. դրա համար պէտք է ջրային գաճը բարձր տաքութեան ենթարկենք: Տաքութիւնից ջուրը հեռանում է ու գաճի բիւրեղները փշրւում, փոշի են դառնում: Այդ պիտով ստացւում է այրած գաճ:

Այրած գաճը շատ նման է մանրացրած կաւճին: Սա մի նշանաւոր յատկութիւն ունի, որի վրայ հիմնւած է նրա գործադրութիւնը: Ափսէի մէջ այրած գաճ ենք ածում, ապա վրան ջուր աւելացնում ու խառնում: Մի քանի բոպէից յետոյ գաճն այն աստիճան է պնդանում, որ փայտի կտորը, որով խառնում էինք, շատ դժւարու-

թեամբ է դուրս գալիս միջիցը: Պատճառն այն է, որ ջուրը միանում է այրած գաճի հետ և նորից ջրային գաճ կազմում:

Բնութեան մէջ ջրային գաճը պատահում է հասարակ աղի հետ և նրա պէս շերտեր է կազմում աղանձնքերում: Մարդիկ բերում, այրում են, ինչպէս կրաքարն, ու այրած գաճ են ստանում, որը և գործ են ածում զանազան նպատակների համար: Այրած գաճից իր յիշեալ յատկութեան շնորհիւ զանազան արձաններ ու կիսարձաններ են թափում: Նրանով զարդարում են տների առաստաղներն ու պատերը. վերջապէս որոշ բանակութեամբ աւագ խառնելով՝ նրանով սւաղում են տների պատերը:

9. Քարածուխ, Տորթ եւ նակք

Իւրաքանչիւր մարդ, եթէ ոչ տեսած, գոնէ լսած կինի քարածուխի մասին: Նա այժմ մարդու համար ամենակարևոր հանքերից մէկն է:

Քարածուխը գտնւում է երկրի կեղեռում աւազի, կամ և կրաքարերի շերտերի արանքներում: Նա ինքն էլ շերտեր է կազմում. բայց այդ շերտերը երբէք մի քանի արշինից աւելի չեն լինում:

Քարածուխը գործ է ածւում որպէս վառելիք՝ թէ տներում և թէ մանաւանդ գործարաններում, երկաթուղիներում, շոգենաւերում և այլն: Ներկայումս զանազան առաջաւոր երկներում այնքան շատ գործարաններ են գործում, այնքան մեծ է վառելիքի պահանջը, որ եթէ քարածուխ չլինէր, անտառները շուտով պիտի ոչնչանային և բոլոր գործարանները կանգնէին: Այդ է պատճառը, որ այժմ այն երկիրն է հարուստ համարւում, որն առատ քարածուխի հանքեր ունի:


Քարածուխն իր պնդութեամբ, գոյնով և այրւելու ընդունակութեամբ զանազան տեսակների է բաժանւում: Նրա մի քանի տեսակներն այնքան պինդ են և փայլուն, որ կա-

տարեալ քարացած լեռնային տեսակ են դառել։ Այդպէս է օրինակ՝ անտրացիտը։ Սակայն ինչքան էլ պնդացած և թանձը լինի քարածուխն, այնուամենայնիւ փաստ է, որ նա բոյսերից է առաջ եկել։ Երբեմն նրա շերտերի մէջ ածուխ դարձած ծառերի ամբողջ բներ են պատահում։ Դրանք թէ և ածուխ են դարձել՝ բայց պահպանել են իրենց բուսական կազմութիւնը։ Դրանց մէջ պարզ երկում են՝ ծառի ոստերը, բնի տարեկան շերտերը և այլն։ Շատ անգամ էլ քարածուխի առանձին կտորների վրայ պատահում են ցողունների, ոստերի և տերենների որոշակի դրօշմեր։

Քարածուխի ծագումը նկար 72. Քարացած ծառի բուն քարահասկանալու համար պիտուխի համբում։

տիգիտենանք հետեւեալը։

Օդի մէջ բուսական մարմինը հետզհետէ փառում, անհետանում է։ Եթէ օրինակ՝ ծառի կտրած հաստ բունը մնայ բացօղեայ, նա ժամանակի ընթացքում հետզհետէ աւելի փխրուն կդառնայ և վերջը բոլորովին կփախ։ Բանը նրանումն է, որ օդի ներկայութեամբ նրա մէջ զարգանում են զանազան մանր էակներ—բորբոսներ կամ սունկեր։ Դրանք կերակրուում են նրա նիւթով և հետզհետէ քայլքայում, փտեցնում նրան։ Այլ բան է, երբ բուսական մարմինը ծածկւած է ջրով։ Ջրի մէջ բորբոսներ գոյանալ չեն կարող, և այդ պատճառով բուսական մարմինը ջրի տակին երկար ժամանակ մնում է առանց փտելու։ Բայց այստեղ նա ու-




րիշ փոփոխութեան է ենթարկւում։ Նա հետզհետէ կորցնում է իր հեղուկ և գաղային բաղադրութիւններն ու կամաց կամաց սկանում, պնդանում և վերջապէս ածուխ է դառնում։ Այսինքն ենթարկւում է նոյն փոփոխութեան, ինչպէս և փայտը, երբ նրանից ածուխ են պատրաստում։ Երեխ շատերը տեսած կլինեն, որ երկար ժամանակ ջրի մէջ մնացած փայտը սկանում է. այսինքն կամաց կամաց ածուխի է նմանում։

Ահա այդպէս էլ առաջ է եկել քարածուխը։ Ան-

տառի միջով հոսող ամեն մի մեծ գետ դէպի ծովն է տանում զանազան բուսական մնացորդներ։ Գարնանը ջրերը յորդանալիս, այդ գետերը դուրս են գալիս ափերից, հազարաւոր ծառեր արմատախիլ անում և տանում դէպի ծովը։ Երբեմն այդպիսի ծառերից և ճիւղերից ծովի երեսին լուցաղող խոշոր կղզիներ են գոյանում։ Սակայն բուսական մարմինը, օրինակ ծառի բունը, ջրի երեսին երկար մնալ չի կարող. հետզհետէ ջուր ծծելով, նա ծանրանում է և իջնում յատակ։ Այդ եղանակով տարիների ընթացքում ծովի յատակում ահազին քանակութեամբ ծառերի բներ և այլ բուսական մնացորդներ են կիտուում։ Դրանց մի մասն արդէն փտած է եղել դեռ ջրի կամ հողի երեսին եղած ժամանակ, իսկ միւս մասը պահել է իր բուսական կազմութիւնը։ Երկար դարերի ընթացքում ծովի յատակում կուտակւած այդ բուսական մնացորդները ծածկւում են ծովի ստեղծած աւազի, կափ, կամ կրաքարի շերտերով։ Դրանց ծանրութեան տակ փայտը հետզհետէ սեղմւում և մի միապաղաղ շերտ է կազմում. դա էլ աստիճանաբար իր գաղային

և ջրի մէջ լուծող նիւթերից զրկւելով՝ քարածուխ է դառնում։ Պարզ բան է, որ այդ երևոյթն ոչ միայն շատ հին




Նկար 74. Ծառերից գոյացած շարժական կղզե

ժամանակներում է կատարւել, այլ միշտ, կատարւում է և այժմ։

Քարածուխի ծագմանը շատ նման է տորֆի ծագումը։ Տորֆը մուգ-դեղնագոյն, մարմին է, որը շատ նման է անասունների աղպից պատրաստած աթարին կամ տարթին։ Դա գոյանում է հիւսիսային երկրների լճերում և ճահճներում և նոյնաղէս գործ է ածում, որպէս վառելիք։

Յիշեալ լճերի ափերին մեծ քանակութեամբ զանազան ճահճային բոյսեր են բուսնում, օրինակ մամուռի զանազան տեսակները։ Դրանք ափերից հետզինուէ դէպի լճի կենտրոնը տարածւելով շուտով անընդհատ շերտով ծածկում է լճի երեսը։



Նկար 75. Տորֆային լիճ բուսականութեամբ ծածկած։

Այդ շերտը իւրաքանչիւր տարի շքեղ բուսականութեամբ ծածկւելով՝ տարից տարի հաստանում ու դէպի յատակն է իջնում։ Վերջապէս գալիս է մի ժամանակ, երբ ամբողջ լուրը յատակից մինչև երես բռնւած է բուսական մնացորդներով։ Այդ բուսական նիւթի վերին շերտը բաղկացած է դեռ չփառած կամ մասամբ փառած բոյսերից։ իսկ ստորին շերտերն աստիճանաբար կորցնում են իրենց բուսական կազմը և կամաց-կամաց նոյն փոփոխութեան են ենթարկում, ինչ որ և քարածուխը։ այսինքն հետզինետէ աւելի և աւելի թանձրանում ու մուգ գոյն են ստանում։ Այդ արդէն պատրաստի տորֆն է։ Մարդիկ կարում են այդ տորֆը, նրանից աղիւս են պատրաստում, չորացնում ու գործածում զանազան գործարաններում, երկաթուղիներում և այլն։


Որպէս վառելիք տորֆից աւելի մեծ նշանակութիւն ունի նաւթը, որը մեծ քանակութեամբ գտնում է Բաքու քաղաքի շրջակայքում։ Հում նաւթը մուգ-դեղին գոյնի բուսնում է առանձին գույն և առանձին գույն է առանձին գույն։



Նկար 76. Տորֆի կտրած շերտը.

մի թանձը հեղուկ է։ Դա գոյանում է երկրի շերտերում ու երբեմն ստորերկրեայ անագին աւազաններ է կազմում։ Մարդիկ զանազան նշանների օգնութեամբ գտնում են նաւթահանքերի տեղը, այդտեղ գետինը քանդում են

Նեղ հորերի ձեռվ և այդ հորերի մէջ երկաթէ խողովակներ դնելով՝ հասնում են նաւթի շերտին և սկսում են դուրս քաշել նաւթը։ Նաւթից զանազան գազեր են գոյանում, որոնք երբեմն դուրս գալու տեղ չգտնելով, ստորերկրեայ նաւթային աւազանների վրայ խիստ ճնշում են գործում։ Այդ դէպքում հէնց որ հորը հասցնում են այդպիսի աւազանին, այդաեղ եղած գազը սոսկալի ուժով դուրս է վիժում նաւթահորից և իր հետ դուրս քշում նաւթը։ Այդպիսով ստացւում են նաւթային շատրվաններ, որոնք երբեմն օր ու գիշերւայ ընթացքում կէս միլիոնից մինչև մի միլիոն փութ հում նաւթ են վիժում։ Սակայն նաւթահորերի տէրերն ամեն կերպ աշխատում են շատրվանի բերանը բռնել, որ դուրս վիժող նաւթը հոսի գետնի երեսով և չբարձրանայ վերև։ որովհետև դէպի երկինք թռչող շատրրւանը նաւթահորից քարեր էլ է դուրս գցում, որոնք բաւական է, որ իրար հանդիպելիս մի փոքր կայծ տան, և ահա հրդեհը պատրաստ է։



Նկար 77. Նաւթի շատրւան

Ահոելի և վեհ տեսարան է ներկայացնում նաւթի շատրրվանի հրդեհը։ Նաւթահանքերում ահագին քանակութեամբ շուտ բռնկւող նիւթեր կան, — այդաեղ հաւաքած նաւթը, նաւթային շատրրվանները, նաւթահորերի վրայ շինած փայտէ աշտարակները, և այդ բոլորն իրար շատ մօտիկ։ Մի փոքրիկ կրակը կարող է տարածւել

ամեն կողմ և երբեմն հարիւր հազարաւոր բուրիների վնաս պատճառել։

Հում նաւթն առանձին խողովակներով նաւթահանքերից մղում են նաւթագործարանները։ Այդ գործարաններում հում նաւթը մշակում են։ Նրան զտում են այնպէս, ինչպէս և ջուրը։ Նաւթի գոլորշին թանձրացնելով, ստանում են մշակած, կամ մաքուր նաւթ, որը գործ ենք ածում մեր լամպերի մէջ։ Իսկ հում նաւթի մնացորդը զտելուց աւելի և աւելի թանձրանում է և գործ է ածւում որպէս վառելիք գործարաններում, երկաթուղիներում, շոգենաւերում և այլն։ Այդ մնացորդը մազութն է։

10. Մետաղներ

Բնութեան մէջ չի եղել ոչ մի բան, որ կարողանար այնպիսի մեծ նշանակութիւն ունենալ մարդու համար, ինչպէս մետաղների գործածութիւնը։ Քանի դեռ մարդը ծանօթ չէր այդ բանին, բառիս բուն նշանակութեամբ վայրենի էր։ Նա իր բոլոր զէնքերն ու գործիքները քարից էր պատրաստում։ Նա ոչ ապահով տներ կարող էր շինել և ոչ էլ գործածքներ պատրաստել. այդ պատճառով պատապարւում էր զանազան այրերում ու քարանձաւներում, իսկ իր մերկութիւնը ծածկում էր զանազան վայրի կենդանիների մորթով։ Գործիքներ չունենալու պատճառով նաւրաւորութիւն չուներ մշակել հողը։ Խեղճ էր այն ժամանակւայ մարդը, անզօր բնութեան երևոյթների և իրեն շրջապատող գազանների դէմ։ Բնութեան կատարեալ գերին էր նա։ Միայն մետաղների գործածութեամբ նա կարողացաւ տէր դառնալ բնութեան։ Իսկ ներկայումս մեր կեանքի համար ամեն մի անհրաժեշտ իր մետաղներից կամ մետաղների օգնութեամբ են պատրաստում։

Մետաղները խիստ տարածւած են բնութեան մէջ. նրանք պատահում են զրեթէ բոլոր լեռնային տեսակների մէջ։ Սակայն ազատ գրութեամբ կարող են գտնւել միայն

մի քանի մետաղներ, այնչէ՝ ոսկին, արծաթը, պղինձը։ Միւս
մետաղները հեշտութեամբ միանում են թթւածնի և ուրիշ
մարմինների հետ և այդ պատճառով պատահում են զա-
նազան քիմիական միացումների, կամ հանքերի ձևով։ Այն
բոլոր հանքերը, որոնց մէջ որևէ մետաղ է գտնվում,
կոչում են մետաղահանքեր։ Հետևապէս կան՝ երկաթի
մետաղահանքեր, պղինձի, արծաթի, ցինկի, մնդիկի և այլն։

Մետաղահանքերից մետաղ ստանալը շատ դժւար է.
Դա կապւած է գիտութեան և որոշ փորձառութեան հետ։
Այդ պատճառով մարդն ամենից առաջ ծանօթացաւ և ըս-
կըսեց գործածել այն մետաղները, որոնք ազատ գրու-
թեամբ էին գտնվում, այսինքն՝ ոսկին, արծաթը և մանա-
ւանդ պղինձը։ Իր գէնքերն ու գործիքներն սկզբում նա
պատրաստում էր միմիայն պղնձից։

Մետաղահանքերից մետաղ ստանալը մարդը շատ ուշ
սովորեց ու նախ և առաջ սկսեց այնպիսի մետաղներ
պատրաստել, որոնց ստանալը աւելի հեշտ է։ Այդ երկրորդ
կարգի մետաղներն են՝ անագը, կապարը, երկաթը և սըն-
դիկը։ Երկար դարերի ընթացքում մարդը միայն այդ եօթ
մետաղները գիտէր։ Մնացած միւս մետաղների հետ, ո-
րոնց քանակութիւնը 40-ից անց է, նա ծանօթացաւ մի-
այն վերջին ժամանակները։

Բոլոր մետաղներն էլ պարզ կամ տարրական մար-
միններ են։ Նրանք բոլորն էլ առանձին մետաղային փայլ
ունեն և լաւ ողորկում են։ Հարւածից ոչ թէ կոտրուում
կամ փշրուում են, ինչպէս փայտը կամ ապակին, այլ կըռ-
ւում, տափակում են։ Իսկ տաքութիւնից նախ փափկա-
նում և ապա հալւում են։ Հալւած դրութեամբ մետաղ-
ները խառնուում են միմեանց հետ ու զանազան զանդւած-
ներ են կազմում։

Այդ յատկութիւններն իհարկէ տարբեր չափով են
զարգացած զանազան մետաղների մէջ։ Ոսկին օրինակ՝ ա-
ւելի լաւ է կռւում քսն երկաթը։ Ծեծելով նրանից կա-
րելի է այնպիսի բարակ թիթեղ ստանալ, որ բոլորովին

թափանցիկ կլինի։ Իսկ երկաթից այդպիսի թիթեղ պատ-
րաստել անկարելի է։ Միւս կողմից մետաղի կռւելու ըն-
դունակութիւնը կախւած է նրա տաքութեան աստիճանից։
որքան տաքութիւնը բարձր է, այնքան մետաղն աւելի
հեշտ է կռւում։

Զանազան մետաղներ, նայած իրենց պնդութեան,
ծանրութեան և այլ յատկութիւններին, տարբեր նպատակ-
ների համար են ծառայում։ Պարզ բան է, որ անագից
կամ կապարից չի կարելի դանակ շինել։ Միւս կողմից
մետաղներն առնասարակ մաքուր դրութեամբ չեն գործ
դրւում, որովհետև մաքուր մետաղը նախ՝ շուտ է, փչա-
նում, շուտ է միանում թթւածնի հետ, և երկրորդ՝ յա-
ճախ հարկաւոր յատկութիւններից զուրկ է։ Օրինակ՝ մա-
քուր երկաթը շատ փափուկ է և շուտ է ժանդուում։
Նրանից պատրաստած իրերը դիմացկուն չեն և շուտ են
փչանում։ Այդ պատճառով զանազան գործիքներ պատ-
րաստելու համար մաքուր երկաթի փոխարէն գործ են
զնում կամ պողպատ կամ չուցուն։ Դրանք երկուսն էլ եր-
կաթի ու ածխածնի խառնուրդն են։ Սակայն դրանք եր-
կաթից այնքան պինդ են, որ շատ յարմար են զանազան
գործիքներ և իրեր պատրաստելու համար։

11. Մետաղներ ստանալը

Բնութեան մէջ մաքուր դրութեամբ միայն մի քանի
մետաղներ են գտնվում։ Դրա պատճառն, ինչպէս արդէն
գիտենք, այն է, որ մետաղներից շատերը հեշտութեամբ
միանում են թթւածնի և մի քանի ուրիշ մարմինների հետ։
Օրինակ՝ երկաթը խոնաւ տեղում ժանդուում է, այսինքն
միանում է թթւածնի հետ և երկաթի թթւուկ է կազմում։
Հետեւապէս մաքուր երկաթ բնութեան մէջ չի կարող դրտ-
նել։ Այդպիս են և շատ ուրիշ մետաղներ։ Այդ պատճա-
ռով մետաղները ընութեան մէջ մեծ մասամբ գտնվում
են մետաղահանքերի ձևով և հէնց դրանցից էլ ստացւում
են։

Մետաղահանքերից մետաղն ստանալու համար տարբեր միջոցների են դիմում, նայած թէ ինչ մետաղահանքի հետ գործ ունեն՝ թթւածնային, թէ ծծմբային։ Աւելի հեշտ է թթւածնային հանքերից մետաղ դուրս բերելը։ Դրա համար դեռ հին ժամանակներից օգտվում են շիկացրած ածուխով։ Մետաղահանքերն ու ածուխը շերտ-շերտ դարսում են հնոցի մէջ, ապա ածուխը վառում են և ուժեղ օդի հոսանքի ենթարկում։ Շիկացած ածուխը մետաղահանքից խլում է թթւածինն ու նրա հետ միանում։ Դրանից ածխաթթւուտ է գոյանում, որը ցնդում է օդը։ Այդպիսով մետաղն ազատում է ու հաւաքւում հնոցի ստորին մասում։

12. Երկար

Մետաղներից ոչ մէկն այնպիսի խոշոր նշանակութիւն չունի մարդկութեան համար, ինչպէս երկաթը։ Այդ պատճառով նա ամենից շատ է գործածւում։ Միւս կողմից շատ տարածւած են բնութեան մէջ նրա հանքերը։ Համարեա ամեն մի երկրում երկաթ կայ։ Իսկ փոքր քանակութեամբ նա դանւում է ամեն մի հողի, գրեթէ իւրաքանչիւր լեռնային տեսակի մէջ։ Աւագի դեղնաւուն, կամ շատ հողերի մուգ գորշագոյն գոյնը նրանից է, որ դրանց մէջ երկաթ է պարունակում։

Երկրի զանազան շերտերում տարածւած են թէ թթւածնային և թէ ծծմբային երկաթահանքեր։ Թթւածնային երկաթահանքերն աւելի կարեոր են և սովորաբար երկաթը դրանցից են ստանում։ Այդ երկաթահանքերից ամենից նշանաւոր են՝ մագնիտային, կարմիր և մուգեղնագոյն։

Մագնիտային երկաթահանքը սև գոյնի հանք է և բաղկացած է երկաթի մաքուր թթւուկից։ Այդ հանքը նրանով է նշանաւոր, որ երկաթը սրան ձգում է, երբեմն ել է ձգում երկաթին։ Շատ երկրներում, օրինքն է ձգում երկաթին։


Նակ՝ Որուսաստանում ահագին լեռներ կան, որ ամբողջովին այդ հանքից են բաղկացած։

Կարմիր երկաթահանքը սև գոյն ունի և նոյնպէս բաղկացած է երկաթի թթւուկից։ Սա կարմիր երկաթահանք է կոչւում այն պատճառով, որ անողորկ ճենապակու վրայ կարմիր գիծ է թողնում։ Իսկ երբ մանրացնում ենք, կարմիր փոշի է տալիս, որ յայտնի է «մումիա» ներկի անունով։


Այդ երկուսից աւելի տարածւած է մուգգեղնագոյն երկաթահանքը։ Սա ճենապակու վրայ մուգ-դեղին գիծ է քաշում։ Իսկ մանրացրած դրութեամբ յայտնի է «օխրա» ներկի անունով։ Այդ երկաթահանքն էլ նոյնպէս երկաթի թթւուկ է, միայն ջրի հետ միացած։ Ուրեմն այդ հանքն իսկական ժանգն է։

Գլխաւորապէս այդ երեք հանքերից են ստանում երկաթը։ Ծծմբային երկաթահանքերը, թէև շատ տարածւած են բնութեան մէջ, բայց երկաթ ստանալու համար անպէտք են։ Պատճառն այն է, որ դրանցից ծծումքն ամբողջովին հեռացնել անկարելի է։ Իսկ այդ մարմնի ամենափոքը ներկայութիւնը երկաթի մէջ՝ նրան փխրուն ու անպէտք է դարձնում։

Երկաթը շատ վաղուց է յայտնի մարդկութեան։ Սակայն նրա գործածութիւնը առաջ շատ քիչ էր տարած-



ւած, որովհետև մարդիկ ծանօթ չէին նրա մի քանի յատկութիւններին:



Նկար 79. Մուղ-գեղնագոյն երկաթահանք

թիւնն այն է, որ հալւելու համար մօտ 1600° տաքութիւն է պահանջում: Այդպիսի տաքութիւն հասարակ վառարաններում ու հնոցներում անկարելի է ստանալ:

Ածխածնի հետ միանալով՝ մաքուր երկաթը խիստ պնդանում է: Եթե երկաթի մէջ ածխածնի քանակութիւնը քիչ է, մօտաւորապէս փունտի մէջ մի կամ երկու մսխալ, այդ դէպքում, եթէ նրան շիկացնելուց յետոյ արագ հովացնում ենք, պողպատ ենք ստանում: Շիկացրած պողպատը կարելի է կռել, ինչպէս և երկաթը: Սակայն նա անհամեմատ աւելի ամուր է և ճկուն: իսկ հալւում է 1300° տաքութեան ժամանակ: Պողպատի գործածութիւնն ուրեմն աւելի հեշտ է և աւելի նպատակայարմար: Նրանից այնպիսի գործիքներ են պատրաստում, որոնցից պահանջում է խիստ պնդութիւն ու ճկունութիւն, օրինակ՝ զանազան երկարգործական իրեր, կտրող գործիքներ, զըսպանակներ և այլն:

Եթէ երկաթի մէջ ածխածնի քանակութիւնն աւելի է, փունտի մէջ 2-ից մինչև 5 մսխալ, այդ դէպքում նա

երկաթը նշանաւոր է նրանով, որ ածխածնի հետ միանալով, նոր յատկութիւններ է ստանում:

Մաքուր երկաթը փափուկ է, լաւ ծեծւում է ու խիստ ձգւում: Բացի դրանից նրա կտրուները շիկացրած դրութեամբ մուրճի հարւածների տակ հեշտութեամբ միանում են իրար հետ:

Նրա զլխաւոր պակասու-

թիւնն այն է, որ հալւելու համար մօտ 1600° տաքութիւն է պահանջում: Այդպիսի տաքութիւն հասարակ վառարաններում ու հնոցներում անկարելի է ստանալ:


Ածխածնի հետ միանալով՝ մաքուր երկաթը խիստ պնդանում է: Եթե երկաթի մէջ ածխածնի քանակութիւնը քիչ է, մօտաւորապէս փունտի մէջ մի կամ երկու մսխալ, այդ դէպքում, եթէ նրան շիկացնելուց յետոյ արագ հովացնում ենք, պողպատ ենք ստանում: Շիկացրած պողպատը կարելի է կռել, ինչպէս և երկաթը: Սակայն նա անհամեմատ աւելի ամուր է և ճկուն: իսկ հալւում է 1300° տաքութեան ժամանակ: Պողպատի գործածութիւնն ուրեմն աւելի հեշտ է և աւելի նպատակայարմար: Նրանից այնպիսի գործիքներ են պատրաստում, որոնցից պահանջում է խիստ պնդութիւն ու ճկունութիւն, օրինակ՝ զանազան երկարգործական իրեր, կտրող գործիքներ, զըս-

պանակներ և այլն:

Եթէ երկաթի մէջ ածխածնի քանակութիւնն աւելի

չուգուն է դառնում: Չուգունը, թէկ պողպատի նման ամուր է, բայց ոչ նրա ճկունութիւնն ունի և ոչ էլ կարող է կռուել: Հարւածից նա իսկոյն կոտրում է: Այդ պատճառով չուգունից պատրաստած գործիքը շատ հեշտութեամբ կարող է կոտրուել: Իսկ որ զլխաւորն է, նրա կտրոներն իրար միացնել անկարելի է, մինչդեռ պողպատինը կարելի է: Սակայն երկաթի ու պողպատի համեմատ չուգունն այն առաւելութիւնն ունի, որ համար 1100° տաքութիւն է պահանջում: Այդպիսի տաքութիւն ստանալն արդէն դժւար չէ: Այդ պատճառով չուգունի գիւտը սաստիկ հեշտացրեց երկաթ պատրաստելն ու նպաստեց նրա գործածութեան արագ և մեծ չափով տարածելուն: Երկաթահանքերից առաջ ստանում են չուգուն. իսկ յետոյ այդ չուգունը կամ պողպատ են դարձնում, կամ մաքուր երկաթ:


Երկաթահանքերից չուգուն ստանալու համար ահագին աշտարակածն հնոց են շինում, որը տակից մինչև ըերանը լցնում են փոփոխակի ածուխի և երկաթահանքի շերտերով: Հնոցի տակին երկու անցքեր են թողնում, որոնցից մէկով օդի հոսանք են մղում, իսկ միւսով հալած մետաղն է գուրս գալիս.



Նկար 80. Երկաթահանքի հնոց

Հնոցը լցնելուց յետոյ՝ ստորին շերտի ածուխը վառում էն և սկսում են արագ օդ փշել առանձին օդ մղող գործիքներով: Ածուխը շիկանալով, հանքից խլում է ածխածնը: Դրանից ածխաթթուուտ գաղ է գոյանում, որ ցնդում է օդը: Իսկ ազատած երկաթը միանում է ածխածնի հետ ու չուգուն կազմում: Այդ չուգունը խիստ տաքութիւնից հալւում է ու հաւաք-

ուռմ հնոցի ստորին մասում։ Այստեղից էլ առանձին անցքով շիկացած փայլուն հեղուկի ձևով հոսում է առանձին կաղապարների մէջ և սառչում է։ Հնոցի մէջ ածուխի ու երկաթահանքի քանակութիւնն այրւելուց հետզհետէ պակասում է։ Սակայն վերեից անընդհատ ածուխ և հանք են աւելցնում և շարունակում են գործն անդադար ոչ թէ օրերով կամ շաբաթներով, այլ ամիսներով ու տարիներով, քանի դեռ չէ փչացել հնոցը։



Նկար 81. Երկաթահանքի հնոց ներսիցը

13. Պղինձ

Պղինձը երկաթից յետոյ ամենից շատ է տարածուած։ Նրա գործածութիւնն էլ շատ մեծ է։ Մաքուր պղինձը կարմրաւուն է, թրծած աղիւսի գոյն ունի։ Մեր սովորական կաթսաները հէնց դրանից են պատրաստում։ Նա արծաթից աւելի փափուկ է, աւելի հեշտ է ծեծւում և աւելի հեշտ էլ հալում է։ Նրան կարելի է ծեծել նոյնիւ առանց տաքացնելու և այնքան բարակացնել, որ թափանցիկ թիթեղ կը դառնայ։

Մաքուր երկաթ կամ պողպատ ստանալու համար չուգունը շիկացնում են օդի ներկայութեամբ։ Եթէ չուգունի մէջ եղած ածխածինն այրւում է ամբողջովին, այդ դէպում մաքուր երկաթ է ստացւում։ Իսկ երբ այնպէս են անում, որ ածխածնի մի մասը մնում է, մաքուր երկաթի փոխարէն ստացւում է պողպատ։

Մաքուր պղինձը մէկ-մէկ գտնուում է բնութեան մէջ։ Երբեմն նոյնիսկ բաւական խոշոր կտորներով։ Սակայն այդ մետաղն էլ սովորաբար իր հանքերից են ստանում։ Դրա համար պղինձահանքը, ինչպէս և երկաթահանքը, բարձր տաքութեան են ենթարկում։ Տարբերութիւնը միայն նրանումն է, որ պղինձն աւելի շուտ և աւելի հեշտ է հալում։ այդ պատճառով հնարաւորութիւն է ստացւում աւելի փոքր հնոցներով օգտւել։

Պղինձի հանքերից ամենից նշանաւոր են՝ ծծմբային պնձահանքը և մալաքիտը։ Առաջինը՝ դեղին, ոսկեգոյն, մետաղային փայլ ունեցող մի հանք է. իսկ երկրորդը նշանաւոր է իր՝ մէկ մէկու մէջ ամփոփւած կանաչ գոյնի սիրուն շերտերով։ Այդ շերտերը, մանաւանդ երբ մալաքիտը ողորկած է, այնքան գեղեցիկ տեսք ունեն, որ նրանից զանազան զարդի իրեր են պատրաստում, օրինակ՝ վաղեր, պղեսպապիներ և այլն։



Նկար 82. Մալաքիտ

Շատերը նկատած կլինեն, որ պղինձից պատրաստած իրերը երկար ժամանակ հողի կամ խոնաւութեան մէջ մնալով՝ ծածկւում են կանաչ նիւթով։ Այդ նիւթը մալաքիտ է։

Որովհետև մաքուր պղինձը փափուկ է և խոնաւ տեղում շուտ է փչանում, այդ պատճառով նրա գործածութիւնը սահմանափակ է։ Դրա միւս պատճառն էլ այն է, որ պղինձը թթւածնի և զանազան թթւուտների հետ միա-

նալով, թունաւոր նիւթեր է առաջացնում, որոնք մարդու կեանքի համար շատ վտանգաւոր են: Հենց այդ հիման վրայ մաքուր պղնձից պատրաստած կաթսաները պարբերաբար կլայեկում են, այսինքն ծածկում են անազի բարակ շերառվ: Այդ շերառը օդից և թթուներից ազատ է պահում պղինձը և չի թոյլ տալիս, որ յիշեալ թունաւոր նիւթերը գոյանան: Բացի կաթսաներից և զանազան պղնձէ ամաններից մաքուր պղինձը գործ է ածւում նոյնպէս՝ պղնձէ բրամներ, խոշոր գործարանային կաթսաներ պատրաստելու համար և այլն:

Աւելի յաճախ պղինձը գործ է ածւում զանազան զանգւածների ձևով: Պղնձի և ցինկի զանգւածը կոչում է արոյը կամ գեղին պղինձ: Արոյը պղնձից աւելի հեշտ է հալում: Այդ պատճառով նրանից պատրաստում են՝ ինքանեռներ, դռների ու լուսամուտների պղնձէ մասեր և այլն: Աւելի ևս հեշտ է հալում ու զանազան կաղապարներով ձուլում է պղնձի և անազի զանգւածը, որ բրօնզ անունն է կրում: Բրօնզն աւելի թանկ է և գործ է դրւում լամպեր, մոմականեր և զանազան զարդարանքի երեր թափելու համար:

14. Կապար, անագ եւ ցինկ

Բոլորիս յայտնի կապարը սովորական մետաղներից ամենափափուկն է. նրան կարելի է կտրել ոչ միայն դանակով, այլ և եղունգով: Կապարը թղթի վրայ մատիտի նման սև գիծ է թողնում:

Ցնութեան մէջ կապարն ազատ դրութեամբ չի պատահում, և այդ պատճառով այդ մետաղն էլ ստանում են հանքերից: Նրա ամենից նշանաւոր հանքը կապարի վայրն է: Դա մի ծանր ու փայլուն հանք է, որ այդ յատկութիւնների շնորհիւ կարելի է շատ հեշտութեամբ զանազանել ուրիշ հանքերից:

Կապարը շատ ծանր մետաղ է և իր ծանրութեան

պատճառով գործ է դրւում գնդակ ու մանրագնդակ պատրաստելու համար: Նրանից պատրաստում են նոյնպէս զանազան խողովակներ ջրմուղների համար, արկղներ և այլն: Կապարի թարմ կտրւածքը գորշ կապտագոյն խիստ փայլ ունի: Սակայն այդ փայլը շուտով խաւարում է, որովհետեւ օդի մէջ կտրւածքը անմիջապէս թթւուկի անփայլ շերտով է ծածկում:

Անազը տարբերում է կապարից իր արծաթանման սպիտակ գոյնով ու փայլով: Նա օդի մէջ չի թթւում և միշտ փայլուն է մնում: Բացի դրանից նա կապարից էլ հեշտ է հալում: Իր քիչ տարածւած լինելու պատճառով անազը բաւական թանկ է և գործ է ածւում զիխաւորապէս բրօնզ պատրաստելու համար: Հենց այդ է բրօնզի թանգութեան պատճառը: Անազից պատրաստում են նոյնպէս բարակ թերթեր զանազան նիւթեր փաթաթելու համար: Այդպիսի թերթեր պատրաստում են նաև կապարից: Սակայն կապարի թերթերով ուտելիքներ փաթաթել չի կարելի (Բնչու): Անազը գործ է դրւում, ինչպէս տեսանք, նոյնպէս պղնձէ ամանեղիններ կլայեկելու համար: Նոյն հիման վրայ երկաթէ թերթերն անազի շերտով պատելով, ստանում են ժեստ կամ սպիտակ երկաթ, որից նոյնպէս զանազան ամանեղին են պատրաստում:

Ցինկը գորշ գոյնի փափուկ ու անփայլ մետաղ է. արտաքինով նման է օդի մէջ մնացած ու խաւարած կապարին: Ստացւում է ցինկահանքերից:

Ցինկը կապարից դժւար է հալում: Բայց որովհետեւ օդի մէջ փոփոխութեան չի ենթարկում և աւելի արժան է անազից, այդ պատճառով նրանից աւելի է գործածում: Ինչպէս և ժեստից, ցինկից էլ զանազան ամանեղին են պատրաստում. նոյնպէս նրա բարակ շերտով պատած երկաթէ թերթերով տանիքներ են ծածկում: Այդպիսի ցինկած երկաթը չի ժանգուառ:

ԱԶՆԻՒ ՄԵՏԱՂՆԵՐ

15. Սնդիկ, արձաք եւ ոսկի

Այդ մետաղներն օդի մէջ չեն թթւում, չեն փոփոխում և այդ պատճառով էլ կոչւում են ազնիւ մետաղներ:

Դրանցից մնդիկը միակ հեղուկ մետաղն է: Ջրի նման նրան կարելի է եռացնել և գազ դարձնել: Միևնույն ժամանակ նա էլ առանց տաքացնելու դանդաղ գոլորշիացնում է ու ցամաքում: Հետեւապէս մնդիկի գազը, որը խիստ թունաւոր է, կարող է տարածել օդի մէջ:

Մնդիկի կաթիլն ափսէի մէջ կամ սեղանի վրայ դցած՝ խիստ դիւրաշարժ է: Դրա պատճառն այն է, որ մնդիկն այդ մարմիններին չի կպչում, դրանց չի թրջում: Ընդհակառակը՝ մետաղներին նա կպչում է ու նրանց վրայ ածած ժամանակ այդպիսի դիւրաշարժութիւն երևան չի հանում: Եթէ պղնձէ որևէ առարկայի մնդիկ քսենք, նա կծածկի դրա բարակ շերտով և սպիտակ գոյն կստանայ:

Մնդիկի մէջ մետաղներից շատերը լուծուում են, ճիշտ այնպէս, ինչպէս աղը լուծուում է ջրի մէջ: Նրա այդ յատկութեամբ օգտւում են զանազան մետաղէ իրեր արծաթաջրելու կամ ոսկեջրելու համար: Օրինակ՝ ոսկեջրելու համար առարկան ծածկում են մնդիկի մէջ լուծած ոսկով: Յետոյ, երբ մնդիկը գոլորշիացնում են, նրա վրայ ոսկու բարակ շերտ է մնում: Սովորական հայելիներ պատրաստելու համար ապակու յետեւը պատում են մնդիկի մէջ լուծած անագով ու ապա մնդիկը գոլորշիացնում են:

Մնդիկն ստանում են կինաբարիս (ԿԻՆՈՎԱՐԵ) ասած հանքից, որը յայտնի ներկ է: Կինաբարիսի մէջ շատ անգամ մնդիկը պատահում է ազատ դրութեամբ՝ մանր կաթիլների ձևով:

Արծաթն էլ մնդիկի նման ազատ դրութեամբ քիչ է պատահում բնութեան մէջ. այդ պատճառով այդ մետաղն էլ մեծ մասամբ ստացնում է իր հանքերից:

Արծաթն սպիտակ, վայլուն ու շատ փափուկ մետաղ է: Նա հեշտութեամբ ծեծում և շատ լաւ ողորկում է: Ծեծելիս ձգում է ու բարակ լարեր է տալիս: Խսկ ամենազլսաւորը՝ օդի թթւածինն ու թթւուտները նրա վրայ չեն ազդում: Դրա շնորհիւ արծաթն օդի մէջ չի փոփոխում: Արծաթի միակ պակասութիւնն այն է, որ նա շատ փափուկ է: Այդ պատճառով մաքուր արծաթից ոչ մի իր չի կարելի պատրաստել: Բայց երբ արծաթը հալում են որոշ քանակութեամբ պղնձի հետ, ստանում են մի գանգւած, որը պահպանելով արծաթի յատկութիւնները, միևնույն ժամանակ շատ պինդ է: Արծաթէ իրերը հէնց այդպիսի խառնուրդից են պատրաստում: Սակայն արծաթի թանգութեան պատճառով նրա յիշեալ օգտակար յատկութիւններով մարդիկ քիչ են օգտւում: Նրան գործ են ածում միայն արծաթէ դրանքներ, շքեղութեան իրեր ու զանազան գարդարանքներ պատրաստելու համար:

Ոսկին գեղին, վայլուն մետաղ է: Նա աւելի ևս հաստատուն, աւելի անփոփոխ է, քան արծաթը: Իր խիստ փափկութեան պատճառով նրան էլ գործ են դնում միայն գանգւածի ձևով: Մանաւանդ զարմանալի է նրա ծեծելու ընդունակութիւնը. օրինակ՝ տասը ըուլիանոց ոսկէ դրամից ծեծելով՝ կարելի է մի քառակուսի սաֆէն տարածութիւն ըոնող բարակ ու թափանցիկ թիթեղ ստանալ: Առհասարակ ոսկին իր օգտակար յատկութիւնների և սակաւ գտնելու պատճառով ամենաթանկ մետաղն է: Նա գործ է դրւում՝ ամենից արժէքաւոր դրամ ու զանազան թանգագին զարդարանքներ պատրաստելու համար:

Ոսկին բնութեան մէջ միայն ազատ դրութեամբ է պատահում: Նրան գտնում են մանր հատիկների ձևով ոսկերեր աւազի մէջ, որը գոյացել է ոսկի պարունակող լեռնային տեսակների քայլայումից: Այդ աւազը սովորական աւազից ոչնչով չի տարբերում, ու նրա մէջ գտնուող ոսկին չի երևում, որովհետև ցրւած է լինում աւազի հատիկների մէջ: Սակայն երբեմն այդպիսի աւազի մէջ պատահած է այդպիսի աւազի մէջ:

հում են ոսկու կտորներ՝ մի քանի ֆունտ, նոյնիսկ մի քանի փութ ծանրութեամբ:

Ոսկին ստանում են ոսկերեր աւազը ողողելով։ Ամենապարզ ձեռվ այդ գործողութիւնը կատարում են այսպէս։ Ոսկերեր աւազն առնում են երկաթէ թասերի մէջ ու վըրան ջուր ածելով՝ սկսում են ձեռքերով տրորել։ Պղտորած ջուրը թափում են, նորից պարզ ջուր ածում ու տրորում։ Այսպէս շարունակում են, մինչև որ թասի տակին մնում է ոսկու փոշին, որն իր ծանրութեան պատճառվ ջրի հետ չի գնում։ Իհարկէ այդ եղանակով շատ դանդաղ է առաջ գնում գործը։ Ահագին քանակութեամբ աւազ պիտի լւանան ու ողողեն, որ մի փոքր ոսկի ստանան։ Այդ պատճառով ոսկին աւազից բաժանելու համար այժմ գործ են դնում աւազ ողողող գործիքներ, որոնք օրեկան տասնեակ հազարաւոր փթերով աւազ են ողողում։

ԵՐԿՐԻ ԿԵՂԵՒԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ


16. ԶԵՐՄՈՒԹԵԱՆ և օդի ազդեցութիւնը

Բնութեան մէջ ամեն բան փոփոխութեան է ենթարկում։ Իհարկէ կենդանի մարմինների սնունդ ստանան, աճելը, բազմանան ու մեռնելը մենք տեսնում ենք։ Սակայն ոչ միայն դրանք, այլ և անկենդան մարմինները, նոյնիսկ ամենապինդ լեռնային տեսակներն, անընդհատ փոփոխում են։ Որոշ մարմիններ փոխում են քիչ թէ շատ արագ, միւսներն ընդհակառակ՝ այնքան դանդաղ, որ նկատել անկարելի է։ յամենայն դէպս անփոփոխ բան բնութեան մէջ չկայ։ Այժմ տեսնենք, թէ ինչ փոփոխութիւնների է ենթարկում երկրագունդը։

Երկիրը կազմող հանքերն ու լեռնային տեսակները նախ և առաջ քայլայւում են տաքութեան փոփոխութիւնից։ Ոչ միայն փխրուն, այլ և ամենապինդ լեռնային տեսակները

ցերեկւայ խիստ տաքանալուց և գիշերւայ սառելուց անդադար ճաքճում են։ Դրա պատճառն այն է, որ այդ լեռնային տեսակները նախ ամեն կողմով էլ հաւասար չեն տաքանում։ Երկրորդ՝ դրանք բաղկացած են զանազան հանքերից, որոնք տաքութիւնից և ցրտից տարբեր չափով են ընդգարձակւում ու սեղմուում։

Ինչքան էլ մանր լինեն այդ սկզբնական ճեղքւածքները, այնուամենայնիւ դրանց մէջ արդէն կարող է թափանցել ջուրը։ Դրանից լեռնային տեսակի քայլայումն աւելի արագ է առաջ գնում։ Այդ ճեղքւածքների մէջ հաւաքւած ջուրը ձմեռը սառուց է դամնում և իր ահոելի ուժով լայնացնում ու խորացնում է նրանց, որից լեռնային տեսակի երեսի շերտը զանազան մեծութեան կտորների է բաժանում։ Դրանք էլ իրենց արանքի սառուցը հալելուց յետոյ պոկւում են միմեանցից և գլորուում ցած։ Ընկնելիս նրանք դիպչում են աւելի առաջ պոկւածներին, ջարդում, ջարդուում են ու քարերի ահագին կոյտեր քշում մինչև լեռան ստորոտը։ Ամեն մարդ տեսած կլինի ապարաժու լեռների ստորոտում և կրծքերի վրայ թափւած զանազան մեծութեան անթիւ քարերի կիտուկներ։ Այդ բոլորն առաջ են եկել յիշեալ եղանակով։ Այսինքն պոկւել են լեռան ծերպերից և թափւել ցած։ Երբեմն լեռան կրծքերն ու փեշերը պատած են լինում մանր սրածայր քարերից բաղկացած խճով։ Բաւական է, մարդ ոտք դնի դրա վրայ, որ խճի ամբողջ կոյտը սողայ ցած և իր նկար 83. Լեռներից թափւած քարերի կոյտեր



հետ տանի մարդուն:

Սակայն լեռնային տեսակի քայքայումը միայն դրանով չէ սահմանափակւում: Օդի և խոնաւութեան ազդեցութեան տակ այդ քայքայումը կատարւում է աւելի խորը կերպով: Ով յաճախ զբօննել է լեռներում ու ձորերում, նա անշուշտ պատահած կլինի այնպիսի քարերի, որոնք ձեռք տալուն պէս փշրւում են դրանից. Նրանց նիւթը դրսից քայքայւել փոշի է դարձել, իսկ ներսի մասը նոյն պինդ քարն է մնացել: Այդպիսի քարեր յաճախ պատահում են անձրևից պատսպարւած տեղերում, օրինակ այրերում: Բոլոր լեռնային տեսակներն էլ, թէև շատ դանդաղ, բայց անընդհատ քայքայւում են այդ եղանակով: Նրանց քայքայման նիւթը, նրանց տւած փոշին, չենք նկատում միայն այն պատճառով, որ անձրևաջուրը միշտ սրբում տանում է իր հետ:

Շատ հետաքրքիր է գրանիտի և այն լեռնային տեսակների քայքայումը, որոնց կազմութեան մէջ մասնակցում են օրտօկլազն ու կվարցը:


Գրանիտի մեծագոյն մասը կազմում է օրտօկլազը: Այդ հանքն օդի և խոնաւութեան ազդեցութեան տակ անդադար քայքայւում է: Նրա մի մասը լուծւում է ջրի մէջ. հետևապէս անձրևաջուրն առնում, տանում է իր հետ: Միւս մասն էլ մանր փոշի է դառնում, որը նոյնպէս ողողում տանում է ջուրը: Այդպէս գրանիտի օրտօկլազն անդադար քայքայւում է ու հեռացնում: Դրանից յետոյ պարզ է, որ պիտի ամբողջապէս քայքայւի գրանիտի և այն շերտը, որի օրտօկլազը հեռացել է: Այդ շերտի մէջ եղած փայլարի թիթեղիկներն ու կվարցի հատիկներն այլևս կապւած չեն միմեանց օրտօկլազով: Այդ պատճառով տեղացող անձրևը առնում է դրանց և քշում ցած:

Ճիշտ է այդ քայքայումը կատարւում է շատ դանդաղ, այնքան գանդաղ, որ մենք երբէք չենք կարող նկատել: Սակայն ի՞նչ նշանակութիւն ունի բնութեան համար ժամանակը: Գուցէ հազարաւոր դարեր պիտի անցնեն, մինչև

որ քայքայւի, փոշի դառնայ մի որևէ զբանիտային ապառաժ: Այսուամենայնիւ վաղ թէ ուշ այդ լինելու է:

17. Հոսող ջրի դերը: Աւագի եւ կալի նստելը

Ո՞վ չի տեսել, թէ ինչպէս յորդառատ անձրևի ժամանակ ամեն կողմից ջուրը հոսում է դէպի ցած տեղեր: Նա անդադար ողողում է գետնի երեսը. քշում տանում է ոչ միայն հողի մասնիկներն, այլև աւազ, նոյնիսկ մանր քարեր: Այդ ջրերն առաջ են գնում, միմեանց հանդիպում և աւելի ուժեղ հոսանքներ կազմում, որոնք աւելի խոշոր քարեր են տանում: Երեակայենք այժմ, թէ ինչ է կատարւում որևէ լեռան վրայ, նրա խորթուփորթ կրծքերին ու փեշերին և մանաւանդ նրա ձորերի մէջ: Ամեն կողմից դէպի խոր ձորն են վազում հազարաւոր վատկներ: Դրանք քշում, տանում են դէպի ցած թէ կվարցի ու փայլարի մանր հատիկները և թէ լեռնային տեսակից պոկւած մեծ ու փոքր քարեր: Իսկ այստեղ ձորի մէջ արդէն կատաղի գետ է գոյացել: Դա անոելի գոռոցով ահագին քարափներ է տեղահան անում ու քշում առաջ: Այդ բոլոր քարերն ու քարափներն անդադար զարկւում են իրար, զարկւում ափերին ու հունին: Նրանք անընդհատ քերում են ափերն ու յատակը, ջարդում են, ջարդուում և հազար ու մի կտորներ պոկւում իրարից: Իսկ կատաղած ջուրն այդ բոլորն առած՝ տանում է իր հետ: Գետը գնալով՝ ուրիշ գետակներ է ընդունում, որոնք նոյն գործը կատարել են մի այլ տեղում: Վերջապէս նա դուրս է գալիս տափարակը և նրա հոսանքն սկսում է դանդաղել: Լեռներից բերած քարերի մի մասը ճանապարհին է մնացել, իսկ շատերը եկել հասել են այստեղ: Բայց դրանք բոլորն էլ արդէն ճեափիւած են, բոլորն էլ խիստ մաշւել, մանրացել ու ողորկւել են: Դրանք այլիս առաջ գնալ չեն կարող: Սակայն դրանցից բաժանւած մանր կտորներն ու փոշին, որ այնքան պղտորում



Նկար 84. Լեռնային գետակ

են ջուրը, դեռ գնում են առաջ և նստում են այնտեղ, որտեղ ջրի հոսանքը խիստ դանդաղում, կամ բոլորովին դա-

դարում է: Իհարկէ, որտեղ ջրի հոսանքը դեռ ըիչ արագ է, այնտեղ նստում են ջրի բերած աւելի խոշոր մասնիկները՝ խիճն ու աւազը. իսկ աւելի հանդարտ տեղերում նստում է կաւը:

Մեծ գետերն իրենց ստորին հոսանքում, մանաւանդ գարնան յորդացած ժամանակ, դուրս են գալիս ափերից և ահազին տարածութիւններ բռնում: Իւրաքանչիւր անգամ ջուրը պակսելուց յետոյ այդ ափերի վրայ տիղմի, աւազի և կաւի նորանոր շերտեր են նստում: Այդպիսի գետերի հովանի ստորին մասը սովորաբար լայնարձակ ու բոլորովին հարթ տարածութիւններ է ներկայացնում: Այդ հարթութիւններն ամբողջովին ստեղծւել են ջրի բերած նիւթերից:

Գետի բերած տիղմն ու աւազն աւելի մեծ քանակութեամբ նստում են ծովի յատակին, գետաբերանի մօտ: Այստեղ այդ բերւածքից գոյանում են բազմաթիւ մեծ ու փոքր կղզիներ. իսկ ինքը գետը բաժանում է բազմաթիւ ձիւղերի և հոսում դրանց արանքով: Այդպիսով ստեղծւում են գետերի դելտաները, որոնք քանի գնում, աւելի և աւելի մեծանում են:


Լեռնային տեսակների քայքայման գործում մասնակցում են և ուրիշ պատճառներ:

Նախ պէտք է յիշենք անձրեւ: Նրա կաթիւներն իհարկէ աննշան ոյժ ունեն: Սակայն լեռնային տեսակի վրայ դարերի ընթացքում տեղացող անձրեւի կաթիւներն անդադար հարւածող մուրճերի նման նրանից անընդհատ մանր հատիկներ են պոկտում: Անձրեւի կաթիւների այդ ազդեցութիւնը հասկանալի կլինի, եթէ յիշենք, թէ ինչպէս տանիքների նաւերից թափող անձրւաջուրը ժամանակի ընթացքում փոսեր է առաջացնում դրանց տակին դրած սալաքարերի վրայ:

Լեռների և լեռնային տեսակների քայքայման գործում աւելի նշանաւոր դեր են կատարում սառցադաշտերը: Դրա մասին արդէն խօսել ենք իր տեղում:

Վերջապէս այդ բանում մեծ դեր է կատարում և ծովը: Դլա ալիքներն անդադար հարւածում են ափերին, քանդում ու ողողում նրանց: Ինչ որ այդ ալիքները պոկում են ափերից, ջուրը տանում, նստեցնում է ծովի յատակին:


Այդպէս ուրեմն օդը, ջուրն ու սառցադաշտերն անդադար քայլայում են երկիրը և մասաւանդ քերում, տաշում ու ցածրացնում են լեռները: Այդ քերած նիւթը ջուրը



Նկար 85. Ծովի ափին զարնուող ալիքը

տանում, թափում է գետերի մէջ: Եթէ յիշենք, թէ որքան շատ են ցամաքի վրայ հոսող մեծ ու փոքր գետերը, որոնք բոլորն էլ այդպիսի գեր են կատարում, այն ժամանակ կարող ենք հասկանալ, թէ ինչ աներևակայելի քանակութեամբ քար, աւագ ու կաւ են տանում դրանք դէպի ովկիանոս, և ինչ մեծ չափերով է կատարւում երկրի կեղևի քայլայումը:

Ուրեմն մի կողմից ցամաքի բարձրութիւնները քայլայում, մաշւում են, միւս կողմից լցւում է ծովի յատակը և հետզհետէ նորանոր լեռնային տեսակներ են գոյանում: Այդ միաժամանակ և միմեանց հակառակ գործող երե-



Նկար 86. Ծովի ափին՝ ալիքներից քայլայւած

ւոյթները, կարծես, ձգտում են ոչնչացնել երկրի անհարթութիւնները՝ հաւասարեցնել, հարթեցնել նրա մակերեւոյթը:

18. Հոդ


Լեռնային տեսակների այդ անդադար քայլայւելու շնորհիւ ցամաքը գրեթէ ամեն տեղ պատած է հողով:

Մեր հայրենիքի նման լեռնոտ երկրներում է, որ տեղական անոելի քարաժայուերի և ապառաժների ձևով երկրի երեսն են դուրս եկել զանազան քարացած լեռնային տեսակները: Իսկ որտեղ երկրի մակերեւոյթը քիչ թէ շատ հարթէ, այնտեղ երկիրը պատած է նախ և առաջ հողով:

Հոդ անունով կոչւում է երկրի ամենավերին շերտը, որ աչքի է ընկնում իր աւելի մուգ, երբեմն նոյնիսկ բոլորովին սև գոյնով: Դրա մէջ են տարածւած երկիրը պատող բոյսերի արմատները: Հոդի սև գոյնի պատճառը նրան ծածկող բոյսերը և նրա մէջ ապրող կենդանիներն են: Մեռած կենդանիների և բոյսերի մնացորդները հետ-

զհետէ փոռում, մի տեսակ սև գոյնի նիւթ են առաջացնում, որ կոչւում է, ըուսահող: Ահա այդ նիւթն է հողին մուգ գոյն տւողը: Բուսահող կարող ենք պատրաստել նաև արհեստական եղանակով: Դրա համար փշացած խոտը կամ գարմանը կիտում ենք զրսեում մի տեղ ու թողնում: Մօտաւորապէս մի կամ երկու տարուց յետոյ այդ կիտուկը կիտի, կլպակսի և մի փխրուն սև գոյնի հող կդառնայ: Բուսահողը հէնց այդ է և այդ եղանակով էլ գոյանում է: Հողի մէջ ապրող միջատները, որդերը և այլ կենդանիներ անընդհատ նրա մէջ շարժւելով ու քանդելով՝ գոյացած բուսահողը խառնում են նրա մասնիկներին: Այդ է պատճառը, որ հողը հաւասար մուգ գոյն է ունենում:

Հողը մեղ համար ցամաքի ամենակարեոր մասն է, որովհետև նրա յատկութիւններից է կախւած բոյսերի՝ հետեւապէս և կենդանիների կեանքը: Իսկ մարդն առանց կենդանիների ու բոյսերի չի կարող իր գոյութիւնը պահպանել: Որտեղ հող չկայ, այնտեղ չի կարող ապրել մարդը:




Նկար 87. Հող և ստորահող

զանազան հանքերի, մանը հատիկներ և ապա կենդանիների ու բոյսերի կիսափտած մնացորդներ: Այդ կենդանային և բուսական մնացորդներից, ինչպէս ասացինք, կազմում է բուսահողը:

Հողին կազմութեանն աւելի մօտից ծանօթանալու համար նախ և առաջ նրան չորացնում ենք: Դրա համար մեր

վերցրած հողը մի ամանով դնում ենք օրինակ՝ գոլ վառարանի մէջ: Չորացնելուց յետոյ նկատում ենք, որ հողի քաշը պակսեց: Ուրեմն հողն իր մէջ որոշ քանակութեամբ ջուր է պարունակում: Դրանից յետոյ չորացրած հողը տապակիչի մէջ լաւ շիկացնում ենք: Այժմ նկատում ենք, որ հողն իր մուգ գոյնը կորցրեց և աւելի բաց,—բաց կարմիր կամ բաց գեղին գոյն ստացաւ: Բացի դրանից՝ այդ գործողութիւնից յետոյ որոշ չափով նորից պակսում է հողի քաշը, որով հետև շիկացնելով՝ նրա ամբողջ բուսահողը այրում ենք: Քաշի այդ պակասը ցոյց է տալիս հողի մէջ եղած բուսանողի քանակութիւնը: Եթէ այժմ այրած հողի վրայ ջուր ածենք ու խառնենք, մի պղտոր հեղուկ կատանանք, որից իսկոյն անօթի տակին կնստեն խոշոր մասնիկները, այսինքն աւագը. իսկ հողի մասը մասնիկները գեռ երկար ժամանակ կլողան ջրի մէջ: Վերջը դրանք էլ կնստեն և կկազմեն նստուածքի վերին շերտը (Նկար 88): Այժմ եթէ պարզած ջուրը թափենք, կնկատենք, որ նստուածքի վերին շերտը բաղկացած է աւագից, ստորինը՝ կաւից: Այդպէս ուրեմն հողը բաղկացած է՝ բուսահողից, աւագից և կաւից: Ամենից շատ աւագն է. երկրորդ տեղը բոնում է կաւը, իսկ ամենից քիչը բուսահողն է: Զանազան հողերի մէջ իհարկէ այդ նիւթերի քանակութիւնը տարբեր է:

Բացի այդ նիւթերից ամեն տեսակ հողի մէջ կան Նկար 88, զանազան մետաղների միացումներ, կամ ինչպէս ասում են, աղեր, որ յիշեալ եղանակով գտնել անկարելի է: Այդ աղերից շատերը լուծւում են ջրի մէջ: Բոյսերի կերակուրը հէնց այդ լուծւող մասերն են կազմում: Հողի լուծւող մասը որոշելու համար այսպէս ենք վարւում: Շիկացրած հողը խառնում ենք դիստիլատ ջրի մէջ ու ստացած պղտոր հեղուկը բամում ենք ծծան թղթի օգնութեամբ: Ծծան թղթից անցած ջուրը պարունակում է այն բոլոր նիւթերը, որոնք լուծւած են եղել նրա մէջ: Եթէ այդ ջուրն ածենք մի



ամանի մէջ և գոլորշիացնենք, ամանի տակին կստանանք մի բարակ փոշի: Ահա այդ է հողի լուծւող մասը, որը և կազմում է նրա պտղաբերութեան միակ հիմքը: Որքան այդ լուծւող մասը շատ լինի, այնքան հողն աւելի արգաւանդ կլինի:

Եթէ գետինը բանդենք մօտաւորապէս 2 արշին խորութեամբ, կնկատենք, որ հողի սև շերտն անկատելի կերպով անցնում է նրա տակ գտնւած բաց շերտին: Այդ բաց շերտն ստորահողն է: Ստորահողն աւելի բաց գոյն ունի, որովհետև բուսահող չէ պարունակում: Եթէ յիշեալ եղանակով ստորահողն էլ վերլուծենք, կտեսնենք, որ նա ևս բաղկացած է կաւից և աւազից: Հետեապէս պարզ է, որ հողը առաջացել է ստորահողից: Երկրի վերին շերտի այդ փոփոխութիւնն, այսինքն ստորահողի հող դառնալը, կատարւում է աստիճանաբար, երկար տարիների ընթացքում: Այդ գործում մասնակցում են միաժամանակ՝ օդը, մթնոլորտային տեղութեամբ, հոսող ջուրը և այդ շերտում ապրող բոյսերն ու կենդանիները: Օդի ազդեցութեան շնորհիւ հողի բաղադրիչ մասերը զանազան փոփոխութեան են ենթարկում: Դրան նալաստում է անձրեից և ձիմից գոյացող ջուրը: Յորդ անձրեները և վարարած գետերը հողի երեսին թողնում են իրենց բերած տիղմը. բոյսերը փառելով բուսահող են առաջացնում: Վերջապէս հողի մէջ ապրող կենդանիները մի կողմից բուսահողի կազմութեան գործին են մասնակցում. միւս կողմից իրենց կենդանութեան ժամանակ անընդհատ հողը բանդելով, նրա մասերը հաւասարապէս խառնում են իրար:

19. Սորերկեայ ջուր եւ աղբիւրներ: Այրերի գոյանալը

Անձրեից և հալող ձիւնից գոյացող ջրի միայն մի մասն է հոսում երկրի երեսով և թափում գետերի ու ովկիանոսի մէջ: Նրա մեծագոյն մասը ծծւում է երկրի ներսը: Երկրի կեղեր կազմող շերտերով նա շարունակում

է իջնել ցած, մինչև որ հասնում է այնպիսի շերտի, որը ջրի համար անանցանելի է: Այդպէս է կաւը և այն քարացած թանձր տեսակները, որոնք իրանց մէջ ճեղքւածքներ չունեն: Ընդհակառակը՝ խճի, աւազի և ճեղքւածքներ ունեցող քարացած լեռնային տեսակների միջով ջուրը հեշտութեամբ անցնում է և իջնում ցած: Երբ ջուրը հասնում է անանցանելի շերտին, սկսում է հաւաքւել նրա երեսին. ապա հոսում է այս կամ ուղղութեամբ, նայած, թէ դէպի որ կողմն է թեքւած այդ շերտը: Այդ ջրին ստորերկրեայ ջուր են ասում: Զրհորներից ստացւող ջուրը հէնց այդ ջուրն է, որը հոսելով անթափանցիկ շերտի երեսով, դուրս է գալիս երկրի երեսը և աղբիւրներ կազմում: Երկրագնդի վրայի բոլոր աղբիւրներն էլ այդ եղանակով են գոյանում:

Երկրի, մանաւանդ մի քանի լեռնային տեսակների, բայքայման գործում ստորերկրեայ ջուրը շատ մեծ դեր է կատարում: Նա լեռնային տեսակից առնում, տանում է այն բոլորն, ինչ որ կարող է լուծւել նրա մէջ: Իհարկէ դրա օգնութեամբ աւելի խիստ բայքայման են այն տեսակները, որոնք հեշտութեամբ լուծւում են ջրի մէջ: Այդ տեսակներին են պատկանում նախ և առաջ աղը, ապա գաճը և կրաքարերը: Մեզ համար ամենից հետաքրքիր է կրաքարերի բայքայւելը,

Կրաքարը ջրի մէջ չի լուծւում: Բայց երբ ջուրն ածխաթթւուտ է պարունակում, այդ գէպքում ընդունակ է դառնում լուծել կրաքարը: Յիշենք մեր կատարած փորձը: Երբ պարզ կրաջրի միջով ածխաթթւուտ անցկացրինք, նա պղտորեց և սպիտակ հեղուկ դարձաւ: Հեղուկի մէջ գոյացած սպիտակ նիւթը կաւիճ է, այսինքն կրաքար: Բայց եթէ այդ սպիտակած հեղուկի միջով շարունակում ենք ածխաթթւուտ անցկացնել, հեղուկը նորից պարզում է. որովհետև հեղուկի ջուրն իր մէջ ածխաթթւուտ է ընդունում և արդէն ընդունակ է դառնում լուծել նոր գոյացած կաւիճը:


Նոյն բանը կարող ենք ցոյց տալ ուրիշ եղանակով:

Վերցնում ենք մի պաղունց կաւճի ու խառնում գիստիլատ ջրի մէջ։ Որքան կաւճը քիչ է և ջուրը շատ, այնքան լաւ։ Կաւճը ջրի մէջ չի լուծում, և ջուրն սպիտակ կաթի գոյն է ստանում։ Եթէ այժմ այդ սպիտակ և պղտոր հեղուկի միջով ածխաթթւուտ անցկացնենք, նա կպարզի, այսինքն կաւճը կլուծվի։

Ածխաթթւուտ գազը միշտ գոյանում է բնութեան մէջ։ Հողի մէջ անդադար փտում են բոյսերի և կենդանիների մնացորդները, իսկ դրանց փտելուց ածխաթթւուտ է գոյանում։ Բացի դրանից շատ տեղ երկրի կեղեկի ճեղքւածքներից ածխաթթւուտ է դուրս գալիս։ Ուրեմն հողի ծակոտիներում միշտ առատ քանակութեամբ ածխաթթւուտ կայ։ Ստորերկրեայ ջուրը նախ և առաջ անցնումէ հողի՝ միջով։ ուրեմնալուծումէ իր մէջ ածխաթթւուտը և ցած իջնում։ Այդ ջուրն արդէն ընդունակ է լուծել կրաքարը։ Այդէ պատճառը, որ գրեթէ բոլոր աղբեկրների ջրի մէջ որոշ քանակութեամբ կրաքար է պարունակւում։ Երբ ջրի մէջ ածխաթթւուտի քանակութիւնը շատ է, և այդ ջուրը կրաքարի շերտի միջով է հոսում, այդ դէպքում նա սովորականից աւելի կրաքար է լուծում իր մէջ։ Այդպիսի ջուրը կոշտ է կոչւում։ Կոշտ ջուր ունեցող աղբեկրներ երկրի երեսին աւելի շատ են, քան փափուկ ջուր ունեցողները, այսինքն քիչ կրաքար պարունակողները։ Կոշտ ջուրը որոշ յատկութիւններ ունի։ Օրինակ՝ այդպիսի ջրի մէջ սապոնը փրփուր չէ տալիս. ուրեմն այդ տեսակ ջուրը լւածքի համար անուշտք է։ Կոշտ ջուրը լաւ չէ և խմելու համար։ Վերջապէս կոշտ ջուրը կաթսաների և ինքնաեռի պատերի վրայ կրաքարի պինդ շերտ է նստեցնում։ Պատճառն այն է, որ այդ տեսակ ջուրը եռացնելիս նրա միջի ածխաթթւուտը դուրս է գնում։ Իսկ դրանից յետոյ կրաքարն էլ չի կարող մնալ լուծւած դրութեամբ։ Նրա մի մասը դուրս է գալիս հեղուկից ու նստում անօթի պատերի վրայ։

Այժմ երեսակայենք, թէ ածխաթթւուտով հարուստ ստորերկրեայ ջուրն իր համար ձանապարհ է բաց արել

կրաքարի շերտի միջով։ Այդ ջրի իւրաքանչիւր մասը որոշ չափով կրաքար է լուծում ու առաջ գնում։ Իհարկէ նրա տարած նիւթը շատ քիչ է. սակայն դարերի ընթացքում իւրաքանչիւր վարկեան մի փոքր նիւթ գնալով, ժամանակով կրաքարի մէջ խոր առւակներ են գոյանում։ Դրանք հետգհետէ լայնանում, ստորորկրեայ լայն անցքեր, գալերէյներ են առաջացնում։ Յաճախ այդ գալերէյների առաստաղը տեղ-տեղ փլչում, թափւում է ու ջրի առաջը կտրում։ Սակայն անխոնջ ջուրը շարունակում է իր գործը. փլւածքի մէջ շուտով ձանապարհ է բաց անում ու կամաց-կամաց ողողում, դուրս տանում բոլորը։ Այդպիսով փլւածքների տեղ ստորերկրեայ ընդարձակ դահլիճներ կամ այրեր են գոյանում, որոնք տամնեակ և հարիւրաւոր բաժանմուքներ են ունենում։ Այդպէս են առաջ եկել բոլոր այրերը։



Նկար 89. Ստալակտիտային այր

լուտի մեծ մասը դուրս է գալիս և ցնդում օդը։ Իսկ երբ նրա մէջ ածխաթթւուտի քանակութիւնը պակասում է, նա

անընդունակ է դառնում պահել իր մէջ ամբողջ կրաքարը։ Զրի հազարաւոր կաթիլներ առաստաղից անդադար ընկնում են ցած ու կաթած տեղերում թողնում իրենց մէջ լուծւած կրաքարի մի մասը։ Իւրաքանչիւր մարդնկատած կինի, թէ ինչպէս աշնանը տանիքների նաւերի ծայրերին սառցի ձողիկներ են գոյանում։ Տանիքի վրայի ձիւնից հայած ջուրն այդ ձողիկներով կաթիլ-կաթիլ հոսում է ցած։ Բայց մինչև կաթիլի վայր ընկնելը նրա մի մասը սառչում է ու մնում ձողիկի վրայ։ Այդպիսով սառցի ձողիկը հետզհետէ հաստանում ու երկարում է։

Յիշեալ այրի առաստաղի վրայ կրաքարից այդպիսի ձողիկներ են գոյանում իւրաքանչիւր այն կէտում, որտեղից ջուրը կաթում է ցած։ Այդ ձողիկները, որոնք ստալակտիտ են կոչւում, անընդհատ երկարում և հաստանում են, որովհետև նրանց երեսով հոսող ջուրն իր մէջ լուծւած կրաքարի մի մասը միշտ թողնում է դրանց վրայ։ Ստալակտիտներից թափւող ջուրը դիպչում է յատակին և հազարաւոր մանր կաթիլներով ցրւում ամեն կողմ։ Այդ պատճառով այրի յատակն ու պատերը միշտ սրսկւած են ջրով, որն իր կողմից կրաքարի մի մասը թողնում է դրանց վրայ ու կրաքարի գեղին շերտով ծածկում։ Այդ շերտն էլ հետզհետէ աճում է և, եթէ մի բան ենք ձգում այդտեղ, նրան էլ ծածկում է կրաքարի շերտով։ Սակայն ուղղակի ստալակտիտների տակ, որտեղ անմիջապէս ընկնում է ջուրը, կրաքարի շերտն աւելի արագ է աճում։ Այդ տեղերում շուտով բարձրութիւններ են գոյանում, որոնք հետզհետէ մեծանում են ու զանազան բարձրութեան և հաստութեան սիւներ են առաջացնում։ Որոշ ժամանակից յետոյ յատակից բարձրացող սիւնը համում է առաստաղից իջնող ստալակտիտին։ Այդպիսով այրի մէջ հետզհետէ գոյանում են անթիւ քանակութեամբ զանազան ձեր ու մեծութեան սիւներ, որոնք ամենասիրուն կոթողների պատկեր են ներկայացնում։ Դրանցից մի քանիւը դեռ նոր են սկսել, նոր են զարդանում. միւսներն արդէն


որոշ բարձրութեան են հասել. շատերն էլ միացել, տարբեր բարձրութեան և հաստութեան սիւներ են կազմել։ Երբ լոյս է ընկնում այդպիսի ալիր մէջ, այդ անթիւ սիւներն, առաստաղն ու պատերը ամենաբազմերանդ գոյներ են արտացոլում և կատարեալ կախարդական սրահի պատկեր ներկայացնում։

20. Երկրի միջուկը եւ կեղեւը

Ուրեմն օդն ու ջուրն անընդհատ քանդում, քերում են երկրի բարձրութիւնները և լցնում նրա ցածը տեղերը։ Իհարկէ եթէ դրան հակառակ գործողութիւն չլինէր, այժմ երկրագունդը կարող էլ բոլորովին հարթացած լինէր։ Սակայն բանը նրանումն է, որ թէկ ջուրը միշտ քերում, հարթեցնում է լեռները, երկիրն էլ իր կողմից միշտ նորանոր լեռներ է առաջացնում։ Ուրեմն մի կողմից մաշտում ոչնչանում են հին լեռները, միւս կողմից ստեղծւում են նորերը։ Երկիրը, կարծես, մրցում է ջրի և օդի հետ։ Այն ոյժը, որ նոր լեռների ծագման պատճառ է հանդիսանում, երկրի ներքին տաքութիւնն է։

Գիտնականները գտել են, որ երկրի միայն արտաքին շերտն է սառած, այսինքն պնդացած կամ բարացած նիւթերից բաղկացած։ Ընդհակառակը՝ նրա ներսում այնպիսի տարութիւն է տիրում, որ ամեն բան հալւած և շիկացած վիճակի մէջ է։ Իբրև ապացոյց այդ բանի ծառայում են հետևեալ փաստերը։ Նախ՝ որքան իջնում ենք գէպի երկրի ներսը, այնքան տաքութեան աստիճանը բարձրանում է, երկրորդ՝ տաք աղբիւրների ու գէյզերների գոյութիւնը և երրորդ՝ հրաբուխները։

Զանազան օգտակար հանքեր ստանալու համար մաքիկ ստիպւած են լինում քանդել երկրի կեղեւը և իջնել նրա խորքերը։ Որովհետև երբեմն այդ հանքերը շատ խորումն են դժուում։ Ստորերկրեայ այն անցքերը, որ քանդում են յիշեալ հանքերն ստանալու համար, կոչւում են հանքահորեր։ Այդ



Նկար 90. Աշխատանք քարածուխի հանքահարում

հանքահորերում բազմաթիւ մարդիկ են աշխատում ամենածանր պայմանների մէջ, զրկւած մաքուր օդից և արևի լոյսից: Երբեմն հարիւրաւոր աշխատաւորներ որևէ դժբաղտութեան պատճառով վարկենական մահ են գտնում այնտեղ: Այնուամենայնիւ ապրելու ցանկութիւնը, կտոր հացի կարիքն ստիպում է մարդկանց այդպիսի վտանգների վրայ ուշադրութիւն չդարձնել: Եթէ հնարաւորութիւն լինէր, այդ հանքահորերն էլ աւելի կխորացնէին, որովհետեւ շատ առատ հանքեր հէնց այդպիսի խորքերում



Նկար 91. Գաղերի պայթիւնը քարածուխի հանքում

են գտնուում: Սակայն բանից գուրս է գալիս, որ որուսահմանից աւելի խորանալ դէպի երկրի ներսն անկարելի է. որովհետեւ քանի աւելի են իջնում, այնքան տաքութեան աստիճանն աւելի է բարձրանում: Վերջն այնպիսի տաքութեան են հասնում, որի մէջ նոյնիսկ մի քանի րոպէ մնալն արդէն անկարելի է դառնում:

Այդպիսով բազմաթիւ փորձերի հիման վրայ գտել են, որ երկրի կեղեկի որոշ խորութիւննից սկսած՝ իւրաքանչիւր 100 ոտնաչափի իջնելով՝ տաքութիւնը մի աստիճան բարձրանում է: Այդ հաշուով մի քանի տասնեակ վերստ խորութեան վրայ այնպիսի սաստիկ տաքութիւն պիտի լինի, որ երկրի երեսին գտնուող բոլոր մարմիններն էլ պիտի հալւած ու շիկացած վիճակի մէջ լինեն: Այդ հիման վրայ ընդունում են որպէս փաստ, որ երկրագունդը միայն արտաքուստ է պատած պինդ և սառը կեղեռվ. իսկ դրա տակ երկրի ամբողջ նիւթը հալւած և շիկացած վիճակի մէջ է:

Շատ տեղերում

գետնից տաք աղբիւրներ են բխում:

Այդպիսի աղբիւրներ մեր կովկասումն էլ շատ կան, օրինակ՝

Թիֆլիսում, Աբասթումանում և այն:

Պարզ բան է, եթէ այդ աղբիւրների

ջրերը երկրի խոր-


քում գտնուած ա-

ւելի տաք շերտե-

րով չհոսեն, նրանց

ջուրն էլ տաք չի լինի: Հետևապէս

դրանք էլ ցոյց են




Նկար 92. Քարածուխի հանքահորի կարւածքը

ներսում տաքութեան աստիճանն աւելի բարձր է:

Այդ աղբիւրների ջրի տաքութիւնը երբէք եռացման աստիճանի չի հասնում: Սակայն երկրագնդի երեսին կան և այնպիսի աղբիւրներ, որոնք գետնի տակից եռացող ջուր ու գոլորշի են դուրս գցում: Դրանք գէյզերներն են: Գէյզերները մշտական հոսող աղբիւրներ չեն, այլ եռացող ջրի և գոլորշու պարբերաբար գործող շատրւաններ: Դէյզերը ջրով լցւած մի աւագան է, որի մէջտեղում ջուրը եռ է գալիս: Երբ մարդ քիչ կանգնում է այդ աւագանի մօտ, յանկարծ երկրի ներսից ինչ որ աղմուկ է լսում, որն սկսում է աւելի և աւելի ուժեղանալ: Մէկ էլ ինչ որ սոսկալի աղմուկի հետ գոլորշու ու ջրի ահագին շատրւան է բարձրանում: Դրան անմիջապէս հետևում են երկրորդը, երրորդը և այն,—մէկը միւսից աւելի ուժեղ, մէկը միւսից աւելի բարձր: Վերջապէս խփում է ամենավերջինը և գէյզերը կանգ է առնում: Դրանից յետոյ եռացող ջրի աւագանն արդէն դատարկւել է: Երբ մօտենում ենք, նրա կենարոնում նկատում ենք նեղ ջրհորի նման մի անցք, որն, ով գիտէ, որքան է խորանում դէպի երկրի ներսը: Շուտով այդ նորն ու բերանը շրջապատող աւագանը նորից լցւում է եռացող ջրով. սակայն գէյզերը դեռ հանգիստ է: Կանցնի մի ժամ, գուցէ և աւելի, որից յետոյ նորիցկը կսւի աղմուկը և նորից կդցեն եռացոց շատրւանները:

Գէյզերի ծագումը շատ պարզ է: Երկրի որևէ ճեղք-




Նկար 93. Գէյզեր

ւածքով ջուրն իջնում է ցած, մինչև նրա շիկացած միջուկը: Այստեղ նա արդէն հեղուկ դրութեամբ մնալ չի կարող ու սարսափելի տաքութիւնից շուտով գոլորշի է դառնում: Սակայն գոլորշին դուրս գալ չի կարող, որովհետեւ ճեղքւածքով շարունակում է իջնել ջուրը: Հետևապէս գոլորշու քանակութիւնը քանի գնում, շատանում է. իսկ քանի աւելի շատրւանում և տաքանում է գոլորշին, այնքան էլ աւելանում է նրա ոյժը: Վերջապէս նա այնքան ոյժ է ստանում, որ կարողանում է դէպի երկինք թոցնել ճեղքւածքի մէջ եղած ջուրը: Երբ գոլորշին ամբողջովին դուրս է գալիս, գէյզերը հանգստանում է: Այդ հանգստութիւնը շարունակում է այնքան, մինչև որ ջուրը նորից ցած է իջնում և այնքան գոլորշի տալիս, որ նորից կարողանում է բարձրացնել վերևից հոսող ջուրը:

21 Երկրաշարժ եւ հրաբուխ


Երբ երկրի շիկացած միջուկին հասած ջուրը գոլորշի դառնալով՝ կարողանում է իր իջած բացւածքներով դուրս գալ, այդ դէպքում գէյզերներ են գոյանում. իսկ երբ ստորերկրեայ գոլորշին իր համար դուրս գալու ճանապարհ չի գտնում, այն ժամանակ նա առաջացնում է երկրաշարժ և հրաբխային վիժում:



Նկար 94. Հրաբռւի վիժումը

Շատերը տեսած կլինեն, որ, երբ եռացող ինքնաեռի կրակը թէժ է ու կափարիչն էլ ամուր փակած, ինքնաեռը կանգնած տեղում դողում, շարժում է։ Դրա պատճառը ճնշւած գոլորշին է, որը դժւարութեամբ է դուրս գնում ինքնաեռից։

Ահա այդպիսի բան, միայն սոսկալի չափով, տեղի է ունենում երկրի մէջ, երբ նրա ներսն անցած ջուրը գուլորշի գառնալով, տեղ չի գտնում դուրս գալու։ Ինչպէս որ աղմկում է եռացող ինքնաեռը, դրա համապատասխան սոսկալի դղրդոց է լսում երկրի ներսից։ Երկրագնդի կեղեց ներքին սյժի աղդեցութիւնից սկսում է շարժել ու տատանւել, որից երբեմն ահագին քաղաքներ աւերակների կոյտեր են դառնում։ Այդ երկրաշարժն է։ Ասկայն տաքացած ու ճնշւած գոլորշու ոյժի առաջ երկրի հաստ կեղևն անգամ չի կարողանում դիմադրել։ Նրա մէջ ճեղքւացքներ են գոյանում, որոնց միջով գոլորշին սարսափելի աղմկով բարձրանում է վեր ու իր հետ երկինք է թոցնում՝ այն բոլորը, ինչ որ պատահում է ճանապարհին։ Ապա այդ ճեղքւածքներից սկսում է դուրս գալ և հոսել երկրի ներսի նիւթը՝ «լաւան», մի շիկացած թանձը հեղուկ։ Լաւան երկրի




Նկար 95. երկրաշարժից կործանւած շինութիւն

երեսով հոսելով՝ այրում և ծածկում է այն բոլորը, ինչ որ պատահում է իրեն։

Այդպիսի վիժումը երբեմն տեսում է օրեր և շաբաթներ։ Վիժման ժամանակ երկրի բացւածքից ահազին շիկացած քարեր են թոշում երկինք։ Գիշերն այդ շիկացած քարերը սոսկալի հրավառութեան պատկեր են ներկայացնում։ Իսկ բարձրացող գոլորշու սիւնը հրային ահուելի սիւնի տպաւորութիւն է թողնում։ Ցերեկն այդ սիւնը մուգ գորշագոյն է երեսում, որովհետեւ գոլորշու հետ ահազին քանակութեամբ մանր աւազ կամ հրաբխային մոխիր է բարձրանում։ Այդ մոխիրի խոշոր մասնիկները թափւում են ցած, իսկ աւելի մանրը տարածւում է օդի մէջ և գրեթէ բոլորովին խաւարեցնում լոյսը։ Ցած թափւող մոխիրից վիժման տեղի շուրջը շուտով կոնածել լեռ է բարձրանում, որը գնալով աւելի և աւելի բարձրանում է։ Ահա այդպէս են գոյացել հրաբուխները կամ հրաբխային լեռները։ Դըրանց գագաթին մի ձագարածե լայն բացւածք է լինում, որը գնում է դէպի լեռան ներսը։ Այդ հրաբխի բերանն է, կամ ինչպէս ասում են «կրատերը»։

Հրաբխի վիժումը վաղ թէ ուշ դադարում է։ Այսուամենայնիւ նա շարունակում է գործել։ Նրա գագաթից անընդհատ թանձը գոլորշի է բարձրանում, որը գիշերները



Նկար 96. լաւայով ծածկւած փողոց

լեռան միջի շիկացած լաւայից կարմիր գոյն է ստանում։ Իսկ ինքը լեռը ներսից անդադար դըղըրդում, անդադար աղմկում է։ Այդպէս շարունակում է մինչև նոր վիժումը։

Գործող հրաբուխներ շատ կան երկրիս երեսին։ Դրանք մեծ մասամբ տարածւած են ծովերի ափերին։ Սակայն աւելի շատ են եղել հրաբուխները հին ժամանակներում։ Մեր երկրի գրեթէ բոլոր լեռնային գաղաթները մի ժամանակ հրաբուխներ են եղել։ Այդ ցոյց է տալիս նրանց կոնաձևութիւնը։ Սակայն դրանք գործել են այնպիսի ժամանակ, որից ոչ մի յիշողութիւն չի մնացել։ Այժմ զրանց հանգստութիւնը ոչնչով չի վրդովում, ու բացի իրենց ձեւից ոչ մի հրաբխային նշան չունեն։ Դրանք, ինչպէս առում են, հանգած հրաբուխներ են։ Երբեմն հանգած հրաբուխները երկար քնից յետոյ նորից արթնանում են։ Այդպէս էր Եւրոպայի ամենանշանաւոր հրաբուխը—Վեզուվը, որն անյիշելի ժամանակներից ի վեր քնած լինելով՝ յանկարծ արթնացաւ և մի քանի քաղաքներ ու գիւղեր իր լաւայի և մոլորի տակ թաղեց։ Այդպէս էր նոյնպէս մեր Մասիսը, որը սրանից մօտ 70 տարի առաջ կարճ ժամանակով արթնացաւ և իր լաւայի տակ թաղեց Ակոսի հարուստ հայաբնակ գիւղը։

22. Յաւաբի եւ լեռների ծագումը

Ինչպէս որ ամեն մի տաքացած մարմին հետզհետէ սառում է, այնպէս էլ, թէկ շատ դանդաղ կերպով, աստիճանաբար սառում է երկրի միջուկը։ Դրանից նրա պինդ կեղեր հետզհետէ հաստանում է։ Ինարկէ, ինչքան էլ դանդաղ լինի այդ սառելը, այնուամենայնիւ կգայ մի օր, երբ երկրի միջուկն ամբողջովին սառած, պնդացած կլինի։ Այնուհետև նրա ներսն իջած ջուրը ոչ թէ գոլորշի, այլ սառուց կդառնայ, որն այլևս չի հալւի, ու ըստին արեգակի ճառագայթները չեն համիլ նրան։ Երկրագունդն այն ժամանակ բոլորովին կհանգստանայ, և

ոչ տաք աղբիւրներ, ոչ գէյզերներ և ոչ երկրաշարժ ու հրաբուխ այլ ևս չեն խոռվիլ նրա հանգիստը։

Սակայն եթէ երկրի պինդ կեղեր հետզհետէ հաստանում է, ուրեմն առաջ նա աւելի բարակ է եղել։ Նետեսպէս եղել է և այնպիսի ժամանակ, երբ կեղեւ ամենակին չի եղել, ու երկրագունդն ամբողջովին բաղկացած է եղել հալած ու շիկացած նիւթերից։ Յիրաւի, գիտականներն ասում են, որ երկրագունդը մի ժամանակ հէնց այդ գրութեան, այդ վիճակի մէջ է եղել։ Այդ շիկացած հեղուկ գունդը, ինչպէս և այժմ, շրջապատւած էր մթնոլորտով։ Բայց այդ մթնոլորտի մէջ բացի օդից գտնում էին և այն բոլոր մարմինները, որոնք այդպիսի բարձր տաքութեան ժամանակ հեղուկ վիճակի մէջ մնալ չէին կարող։ Օրինակ՝ մեր գետերը, ծովերն ու ովկիանոսը լցնող ամբողջ ջուրը ջրային գագ էր նեղիայցնում և գտնում էր մթնոլորտի մէջ։

Շիկացած երկրագունդը հետզհետէ սառում էր։ Նրա տաքութիւնը կամաց-կամաց խում էր մթնոլորտն ու տալիս անհուն տարածութեան։ Բայց աւելի ևս սառեցնում էին նրան այն ժամանակւայ աներևակայելի խիստ և առատ անձրևները, որոնք երկրի երեսին հասնելու պէս՝ գոլորշի էին դառնում և նորից բարձրանում օդը։ Մենք գիտենք, որ հեղուկ ջուրը գոլորշի դառնալու համար տաքութիւն է պահանջում։ Պարզ բան է, որ այս գէպքում անհրաժեշտ տաքութիւնն ստացւում էր երկրից։

Վերջապէս երկրագունդն այնքան պաղեց, որ նրա երեսին գտնող ամենադժւար հալւող մարմինները սառեցին և մի բարակ պինդ կեղեւ կազմեցին։ Այդ կեղեն իհարկէ աւելի պաղ էր, քան նրա տակ գտնուղ հալւած նիւթը, սակայն նրա տաքութիւնը 100 աստիճանից գեռշատ բացաւ էր։ Նրա վրայ թափւող անձրևների հեղեղները կատաղի կերպով եռ էին գալիս, որպէս շիկացած պլիտայի վրայ թափած ջուր ու գոլորշանում, օգն էին ցնդում։ Երբ վերջապէս երկրի կեղենի տաքութիւնը 100 աստիճանից ցած իջաւ, անձրևաջուրն արդէն սկսեց կան-

գնել նրա երեսին, և այդպիսով երկրագունդը շրջապատ-
ւեց ջրի շերտով: Այդ շերտի հաստութիւնը հետզհետէ մե-
ծանում էր, որովհետև քանի աւելի էր սառում երկրա-
գունդն, այնքան սառում էր և մթնոլորտը. իսկ որքան ա-
ւելի էր սառում մթնոլորտը, այնքան աւելի քիչ ջուր կա-
րող էր պահել իր մէջ: Այդ ժամանակ երկրագունդն ան-
սահման ովկիանոսով շրջապատւած մի գունդ էր: Յամաքի
ամենափոքր կտոր անգամ չէր երևում նրա անվերջ տա-
րածութեան վրայ:

Երկագունդը սառելով՝ պիտի միևնոյն ժամանակ նաև
սեղմւէր, փոքրանար: Նա ամեն կողմից հաւասարապէս
էր փոքրանում, քանի դեռ բաղկացած էր հեղուկ մարմին-
ներից: Բայց հէնց որ նրա երեսին պինդ կեղև գոյացաւ,
այդ երևոյթն սկսեց կատարւել անհաւասար կերպով: Մենք
գիտենք, որ սառելուց հեղուկ մարմիններն աւելի արագ և
աւելի խիստ են սեղմւում, քան պինդ մարմինները: Նոյն
քան իհարկէ տեղի էր ունենում և երկրագնդի վրայ:
Նրա հեղուկ միջուկը սեղմւում էր արագ, պինդ կեղև՝
դանդաղ: Միևնոյն ժամանակ այդ կեղևն ու միջուկն իրար
պինդ կպած էին: Ո՞վ չի տեսել, որ թարմ ինձորը հնա-
նալով, այսինքն ցամաքելով՝ նրա կաշին խորշոմում, կըն-
ձիռներ է տալիս: Դրա պատճառն այն է, որ ինձորի հիւ-
թալի միջուկն աւելի շատ ջուր է տալիս օդին, հետևա-
պէս աւելի է սեղմւում, քան ցամաք կաշին: Անհաւասար
սեղմւելուց այդպիսի կնճիռներ պէտք է կազմէր և երկրի
կեղևը: Այդպիսով նրա վրայ առաջ եկան բարձրութիւն-
ներ ու ցած տեղեր: Երկրի վրայի ջուրը հաւաքւեց այդ
փոսերի մէջ, իսկ ծալքերի գլուխները դուրս մնացին ջր-
ուց: Այդ ծալքերն երկրի առաջին լեռներն էին: Այդպի-
սով անսահման ովկիանոսի մէջ առաջ եկան առաջին կըդ-
զիները: Սակայն երկրի սառելն ու սեղմւելը շարունակ-
ւում էր անընդհատ, ինչպէս որ շարունակւում է և այժմ:
Յիշեալ ծալքերը, թէև դանդաղ, անընդհատ մե-
ծանում էին, որից լեռները բարձրանում, իսկ ջրերն ա-


ւելի և աւելի խորանում էին: Միևնոյն ժամանակ երկրա-
գնդի այս կամ այն տեղում՝ կեղևի տակ հաւաքւած գո-
լորշու ու գագերի շնորհիւ՝ խոշոր պղպջակներ էին գոյա-
նում, որոնք բարձրացնում, դուրս էին հանում ջրից կե-
ղևը և մեծ ցամաքներ առաջացնում: Իհարկէ սկզբում,
երբ գեռ կեղևը բարակ էր, այդ պղպջակները շուտ-շուտ
փոփոխում էին իրենց տեղը. հետևապէս յաճախ ցամաքը
նորից ծովի յատակ էր դառնում և ընդհակառակը: Բայց
որքան աւելի էր հաստանում կեղևը, այնքան ցամաքն
աւելի մնայուն, աւելի հաստատուն էր դառնում:

23. Երկրի կեղեւի դարաւոր տատանումները

Երկրի կեղևը երբ գոյացաւ, նա բաղկացած էր այն-
պիսի լեռնային տեսակներից, որոնք առաջ էին եկել երկ-
րի հալւած նիւթի սառելուց: Առաջին ցամաքները հէնց
այդ տեսակներից էին կազմւած: Բայց երբ ցամաքը գո-
յացաւ, նրա վրայ աղբիւրներ և գետեր առաջ եկան: Իսկ
դրանից յետոյ օդն ու ջուրը ձեռք ձեռքի տւած՝ սկսեցին
իրենց քայլքայող և ստեղծագործող գործը:

Մի կողմից երկիրը շարունակում էր սառել, նրա կե-
ղևը հաստանում էր: Բայց որովհետև հեղուկ միջուկն աւե-
լի արագ էր սեղմւում, այդ պատճառով երկրի ծալքերը,
այսինքն լեռներն, աւելի մեծանում, աւելի բարձրանում
էին: Շատ տեղ այդ ծալքերի գոյանալու պատճառով
կեղևը ձեղքում էր, և միջուկի հալւած նիւթը դուրս
էլ գալիս ու ահագին տարածութիւններ բռնում: Բայց այդ
դուրս վիժած նիւթը շուտով սառում էր և հաստացնում
երկրի կեղևը: Միւս կողմից օդն ու ջուրն սկսեցին քան-
դել և քերել այդ նախնական լեռների ու ցամաքի երեսը:
Քերած նիւթն անձրևաջուրը հաւաքում, թափում էր գե-
տերը, իսկ դրանք տանում, լցնում էին երկրի փոսերը,
այսինքն գետերի հովիտներն ու ծովերի յատակը: Այդ
բերւած նիւթերից իրենց նստած տեղերում սկսեցին գոյա-


նալ նոր լեռնային տեսակներ: Այդպիսով ժամանակի ընթացքում երկրի գրեթէ ամբողջ կեղեր ծածկւեց այդ բերւած տեսակների շերտերով: Շատ քիչ տեղերում և գրեթէ միայն բարձր լեռնաշղթաների կատարներին պատճենում ենք այնպիսի լեռնային տեսակների, որոնք ոչ մի շերտաւորութիւն չունեն: Դրանք այն տեղերն են, ուր երկրի սկզբնական կեղեր մնացել է բաց:



Նկար 97. Ստորեւում սկզբնական, իսկ վերեւում շերտաւոր լեռնային տեսակներ

Այդպէս ուրեմն երկրի կեղեփ բոլոր շերտաւոր տեսակները, ինչպէս աւազը, աւազաքարերը, կաւը, թերթաքարերը, կրաքարերը և այլն, բոլորն էլ գոյացել են ջրի շնորհիւ: Իսկ դրանց տակին ամեն տեղ էլ գետեղւած է երկրի սկզբնական կեղեր: այսինքն այն լեռնային տեսակները, որոնք գոյացել են երկրի հալւած նիւթի սառելուց:

Զրի ստեղծած շերտերի մէջ յաճախ զանազան կենդանիների և բոյսերի մնացորդներ են գտնում: Դրանք այն կենդանիների և բոյսերի մնացորդներն են, որոնք այդ շերտերի գոյանալու ժամանակ ապրելիս են եղել երկրի վրայ: Այդ մնացորդներն անթիւ դարերի ընթացքում պահ-



Նկար 98. Ծովային կենդանիների քարացած մնացորդներ

ւելով այս կամ այն շերտի մէջ, համակւել են դրանց նիւթով և քարացել:

Այդ քարացած մարմինները ցոյց են տալիս նախ, թէ երկրի կեղեփ այս կամ այն շերտը որտեղ է գոյացել՝ ծովի յատակում, թէ ցամաքի վրայ: Պարզ բան է, որ ծովի յատակում գոյացող շերտերի մէջ գտնւում են միայն ծովային կենդանիների մնացորդներ, իսկ զետերի հովիտներում գոյացող շերտերի մէջ՝ ցամաքային կենդանիների մնացորդներ: Նրանց օգնութեամբ գտել նոյնպէս որ երկրի գրեթէ ամբողջ երեսը փոփոխակի ծածկւած է կամ ծովի յատակում առաջ եկած շերտերով կամ ցամաքում: Ուրեմն դրանից պէտք է եզրակացնենք, որ ցամաքի ամեն մի մասը երբեմն ծովի յատակ է եղել, երբեմն էլ ցամաք:

Այդ երեւում է այն հանդամանքից, որ ծովային կենդանիների մնացորդներ պարունակող շերտերի վրայ յաճախ դրւած են ցամաքային կենդանիների մնացորդներ պարունակող շերտեր. դրանց վրայ նորից ծովային կենդանիներ պարունակող շերտեր և այլն: Դրանից պէտք է եզրակացնենք, որ երկրի կեղեր միշտ տատանւել է, որ ցամաքի միևնույն մասերը մերթ իջել, ծովի յատակ են կազմել, մերթ բարձրացել, ցամաք դառել:

Երկրի կեղեփ այդ տատանումը ոչ միայն կատարւել է հին ժամանակներում, այլ կատարւում է այժմս էլ: Այդ բանը մեզ համար զարմանալի չպէտք է թւայ, որովհետեւ նրա պատճառը նոյն հանդամանքն է, ընչից որ առաջ են եկել լեռները: Այդ պատճառը երկրի միջուկի տաքութիւնն է, երկրի կեղեր և միջուկի անհաւասար սեղմւելը: Միջուկի աւելի արագ սեղմւելը տատանում, շարժում է երկրի կեղերը: Սակայն այդ տատանումը շատ դանդաղ է կատարւում, և այդ պատճառով միայն երկար տարիների զիտողութիւններից յետոյ կարողացել են մարդիկ նկատել այդ փաստը: Օրինակ՝ մենք այժմ գիտենք, որ Բալթիկ ծովի հիւսիսային մասում ծովի յատակը իւրաքանչիւր 100 տարւայ ընթացքում մօտ մի մետր բարձրանում է, իսկ

Նրա հարաւային մասում ափը հետզհետէ իջնում է: Գիտենք
նոյնպէս, որ հիւսիսային Աֆրիկայի Սահարա անապատը
մի ժամանակ ծովի յատակ է եղել: Ուրեմն այդ նախկին
ծովի յատակը հետզհետէ բարձրացել, այժմեան աւազով
պատած անապատն է դառել:

Որ երկրի կեղեց դանդաղ մերթ իջնում, մերթ բարձ-
րանում է, այդ բանը հաստատում է հետևեալ հետաքրքիր
փաստով: Շվեցիայում մի ջրանցքի համար գետինը գորե-
լիս ծովի ափի մօտ ջրի մակերեսոյթից տամերէք սաժէն
բարձր մի մակոյկ գտան իր խարիսխի հետ: Երբ գետինը
աւելի խոր քանդեցին, դրանից իննը սաժէն ցածր դուրս
եկաւ մի բաւական լաւ պահպանւած խրճիթ: Ուրեմն մա-
կոյկն իր խարիսխով 9 սաժէն ցարձր էր, քան խրճիթը:
Բացարենք այդ փաստը: Ո՞վ գիտէ քանի տամեակ գու-
ցէ և հարիւրաւոր դար առաջ այդ տեղում ծովի ափ է ե-
ղել, և ափի մօտ շինւած է եղել ձկնորսական մի խրճիթ:
Այդ ժամանակ ցամաքը դանդաղ իջնելիս է եղել: Ափն իջ-
նելիս՝ խրճիթը կամաց-կամաց ջրի տակն է գնացել: Եր-
կար ժամանակի ընթացքում ջրի բերած աւազն ու տիղմը
նրան ծածկել են, և վերջապէս նրա վրայ իննը սաժէնանոց
շերտ է նստել: Դրանից դարեր յետոյ մի օր նոյն տեղում,
որտեղ մի ժամանակ խրճիթն էր կանգնած, ջրի երեսին խա-
րիսխ ձգնած մի մակոյկ էր տատանւում: Ուրեմն այդ
տեղն այնքան էր իջել, որ խրճիթը ծածկւել էր 9 սաժէն
հողի շերտով և դեռ դրա վրայ ծովս այնքան խորն էր, որ
նոյն տեղում խարիսխ ձգած մակոյկն էր տատանւում: Քա-
մուց թէ այլ պատճառից մակոյկը շուռ է գալիս և ընկղ-
մում: Նորից անցնում են դարեր: Մակոյկն ու խարիսխն
ծածկւում են 13 սաժէն հաստութեամբ աւազի և տիղմի
շերտով: Դրանից յետոյ ցամաքն սկսում է բարձրանալ և
երկար դարերի ընթացքում հասնում է իր այժմեան դրու-
թեան:

Ծովի յատակում ստեղծւած շերտերը յաճախ գտնուում
են նոյնիսկ բարձր լեռների վրայ: Մենք գիտենք օրինակ,

որ կրաքարը գոյացել է ծովի յատակում. միևնոյն ժամա-
նակ փաստ է, որ Ղրիմի լեռների կատարը բաղկացած է
կրաքարից: Ուրեմն այն տեղը, որտեղ այժմ Ղրիմի լեռ-
ներն են բարձրանում, ծովի յատակ է եղել: Կրաքարը
գոյանալուց յետոյ երկրի սեղմւելու շնորհիւ այդտեղ նոր
ծալք է գոյացել, և նոր լեռնաշղթայ առաջ եկել:

Այդպէս ուրեմն երկրի անընդհատ սեղմւելու պատ-
ճառով նրա կեղեց դանդաղ տատանւում է: Մի տեղ նա
բարձրանում է, մի այլ տեղ իջնում. շատ տեղ էլ նոյն
պատճառից կեղեկի նոր ծալքեր, այսինքն նոր լեռներ են
գոյանում:



Վ Ր Ի Պ Ա Կ Ե Ն Ե Ր

42-րդ երեսում № 30 նկարը և 141-րդ երեսում № 89 նկարը ուղիղ չեն դրած: Դրանց վերին կողմը ստորին կողմն է ներկայացնում և ստորինը՝ վերին:

ԳԱՍՏՐԻԳՐՈՎԸ ԲՆԱԳԱՏՄՈՒԹԻՒՆ ԱԻԱՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇ

ՊԻՏՈՅՔՆԵՐԻ ՅՈՒՑԱԿԸ ԵՒ ԴՐԱՆՑ ՄՈՏԱԽՈՐ ԳՆԵՐԸ

I. Ա. Յօրենք եւ զործիքներ

Բ. կոպ.

3	հատ սրւակ (колбы плоскодонн. изъ бѣл. стекла)	մօտաւ.	65
2	» ձագար (воронки обыкнов.)	· · ·	25
1	» » (воронка химич. съ дл. трубкой)	· ·	20
1	» փական (зажимъ)	· · · ·	15
12	» փորձանակ փայտէ պատւանդանով (пробирные цилиндрики съ дерев. стативомъ)	· · ·	1 20
2	ցլանաձև անօթ (цилиндры къ спиртом. Тралесса)	1	15
2	կողանակ (щеточки для очищениѧ пробирокъ)	·	20
2	սպիրտի լամպ (спиртовыя лампочки)	· ·	65
1	կասկարյ (треножникъ желѣзный)	· ·	40
1	ցանց (сѣтка мѣдная для треножника)	· ·	15
1/4	Փունտապակէ խողովակներ (стеклянныя трубочки)	· ·	15
1/8	» » փայտիկներ (стеклянн. палочки)	· ·	08
*1	հատ օդային ատրանակ (воздушн. пистолеть)	· ·	—
*)	կշեռք իր չափերով (вѣсы въ разновѣсками)	· ·	—
1	հատ չափ (мензурка въ 100 грам.)	· ·	85
1	մետաղէ գունդ և օգակ (мѣдн. шарикъ съ кольцомъ для демонстрированія расширенія тѣла)	· ·	—
1	ջերմաչափ (термометръ комн. съ дѣлен. Реом. и Цельс.)	20	
2	ջերմաչափ ջելուիտի (термометры хим. Цельс. до 150°)	1	80

	ր. կուտ.
2 համ բանկա (банки стекл.)	80
6 » բաժակներ (стаканы химич. ставка въ 6)	90
1 » ապակէ զանդ (стекл. толстост. колоколь)	80
2 » երկբերան անօթ (стеклянки Вульфа съ 2 горл.)	90
*1 » պնիվմատիկ աւազան (пневматич. ванна)	—
1 » ճենապակէ փոքրիկ թաս (фарфор. чашечка мал.)	20
1 » ճենապակէ թաս (фарфор. чашка для выпарив.)	35
1 » ճենապ. սանդ և վարսանդ (ступка фарф. съ пест.)	55
3 » բետորտ (ресторты безъ тубулуса)	39
1 » փայտէ պատւանդան (стативъ дерев.)	1 30
1 » խցան ծակելու գործիք (наборъ сверла)	1 25
100 » խցաններ (пробокъ дерев.)	35
1 » հասարակ մկրատ	
1 » մուրճ	
1 » ունելիք (тигельные щипцы)	
1 » խարտոց	
1 » սուրտափակաբերան աքցան (отроцлоскогубцы).	

II. Կիրեր եւ իրեր.

1/2 ֆունտ բետինէ խցաններ (резин. пробки: 3 шт. безъ дыръ, 3 шт. съ 1 дырой и 2 шт. съ 2 дырами)	1 80
500,0 մաղիկ (рутуть)	2
25,0 մագնիյ (магній въ лентѣ)	50
1 ֆ. բերտուտի տղ (бертолетвая соль)	36
1 ֆ. մարգանեցի թթւուկ (перекись марганца)	05
1 ֆ. մարմար կտորներով (мраморъ въ кускахъ)	15
1/2 » ցինկ (цинкъ въ кускахъ)	50
1 » աղային թթու (соляная кисл.)	50
1 » ծծմբային թթու (сѣрная кислота)	40
1 » բորակ (бура въ порошкѣ)	20
1 » շիր (квасцы)	15
*1 միխալ լուսածին (фосфоръ)	—
*4 համ գրպանի ժամացոյցի զապանակ (часовая пружина)	—
1/2 ֆունտ սոսինձ.	
1/2 գետա ծծան թուղթ (фильтровальн. бумага)	20
1 նմուշ կարմիր գրանիտ (гранитъ красн. крупнозерн.)	
1 » սպիտակ գրանիտ (сѣрий гранитъ)	

*1 նմուշ հասարակ կվարց (кварцъ обыкновен.)	
*1 » կաթնագոյն կվարց (молочн. кварцъ)	
*1 » կայծքար (кремень)	
*1 » կարմիր օտօկաշպ (красн. ортоклазъ)	
*1 » փայլար (слюда)	
*1 » սպիտակ աւազ (бѣлый песокъ)	
*1 » խոշորահատ աւազաքար (крупнозерн. песчаникъ)	
*1 » ջրաղացի աւազաքար (жернов. песчаникъ)	
*1 » սպիտակ կաւ (бѣлая глина)	
*1 » բրուտի կաւ (гончарная глина)	
*1 » հասարակ կաւային թերթաքար (обыкн. глинист. слан.)	
*1 » քարեատիտակի » (асидн. сланецъ)	
*1 » հասարակ կրաքար (обыкнов. известнякъ)	
*1 » սպիտակ մարմար (бѣлый мраморъ)	
*1 » այրած կիր (сженная известь)	
*1 » հանգըրած կիր (гашеная известь)	
*1 » հասարակ գաճ (гипсъ обыкнов.)	
*1 » այրած գաճ (сженый гипсъ)	
*1 » տորֆ (торфъ)	
*1 » հասար. քարածուխ (каменн. уголь)	
*1 » անտրացիտ (антрацитъ)	
*1 » կօկս (коксъ)	
*1 » հում նաւթ (сырая нефть)	
*1 » լավա (лава)	
*1 » պղինձ թերթով (мѣдь въ листѣ)	
*1 » արոյր (латунь)	
*1 » բրոնզ (бронза)	
*1 » կապար (свинецъ)	
*1 » կապար թերթով (листов. свинецъ)	
*1 » ցինկ թերթով (цинкъ листовой)	
*1 » ժեշտ (жесть)	
*1 » անագի ամալգամ (оловянная амальгама)	
*1 » կապարի փայլ (свинцов. блескъ)	
*1 » պղնձի փայլ (мѣдный блескъ)	
*1 » մալաքիտ (малахитъ)	
*1 » ցինկած երկաթ (оцинков. желѣзо)	
*1 » կինաքարիս (киноварь)	
*1 » կարմիր երկաթահանք (красн. желѣзнякъ)	
*1 » մագնիտի երկաթահանք (магнитн. желѣзъ)	
*1 » գորշ երկաթահանք (бурый желѣзнякъ)	

*1 նմուշ չուզուն (чугунъ)
*1 » պողպատ (сталь обыкновен.)

Այս ցուցակի այն իրերը, որոնք *-ով չեն նշանակած, իր պահեստում ունի Թիֆլիսի „Կավե. Օճա. որգ. առեկ. տօարամ“ ընկերութիւնը, որտեղից և կարելի է ստանալ ցոյց տւած զներով: Թիւրիմացութեան տեղիք չտալու համար պէտք է յիշենք, որ այդ գները մօտաւորական են. որովհետև իւրաքանչիւր իր (արւակ, բետորտ և այլն) տարբեր միծութեան է լինում, և իւրաքանչիւրն իր առանձին զինն ունի: Այդ իրերով կարելի է կատարել այն բոլոր փորձերը, որոնք նկարագրուած են գրքիս մէջ: *-ով նշանակած (և առհասարակ ցուցակում յիշած բոլոր իրերը) կարելի է ստանալ Թ. Ի. Բլէք-ից (С.-Петербургъ Надеждинская ул., 16), որն իր պահեստում բնական գիտութիւններն աւանդելու համար բոլոր անհրաժեշտ պիտոյքներն ի ցոյց ունի գրած և յատկապէս դրանց առեւտրով է զբաղուած: Իր պրէյսկուրանան ձրիաբար ուղարկում է իւրաքանչիւր գիմողին:

Աւելորդ չենք համարում յիշել, որ ցուցակում նշանակած իւրերից շատերը իւրաքանչիւր դպրոց կարող է գտնել իր տեղում. օրինակ՝ սոսինձ, կիր, կրաքար, ջրաղացի քար, նաւթ, մկրատ մուրճ և այլն և այլն: Հմուտ ուսուցիչը զրոսանքների ժամանակ կարող է շատ բան իր շրջակայքում գտնել և կամաց-կամաց համեստ բայց անհրաժեշտ բնապատմական հաւաքածու ստեղծել: Հարկաւոր է միայն ցանկութիւն: Վերջապէս չեղած դէպքում գրքումս նշանակած անօթներից շատերը կարելի է փոխարինել ձեռքի տակ եղած իրերով, օրինակ կօլբայի տեղ կարելի է վերցնել հասարակ ջրի գրաֆին, կամ գինու շիշ, քիմիական բաժակ-ների տեղ՝ հասարակ բաժակներ և այլն:

Կազմող



Ց Ա Ն Կ

Երևան

III

1

Կազմողից

Նախարարն

I. Մարմնների ընդանուր յատկութիւնները

1. Տարածականութիւն և ծաւալ	5
2. Պինդ, հեղուկ և գազային մարմիններ	7
3. Մարմինների երեք վիճակը	10
4. Ախմելիութիւն	11
5. Ծանրութիւն	12
6. Երկարութեան և ծաւալի չափելը.	13
7. Ծանրութիւն չափելը: Կշեռք	15
8. Տամնորդական չափեր.	16
9. Մարմնի տեսակաբար կշիռը	18
10. Պինդ մարմինների ընդարձակւելը տաքանալուց	19
11. Հեղուկ մարմինների ընդարձակւելը: Զերմաշափ	21
12. Գազային մարմինների ընդարձակւելը	24
13. Տաքութիւն և ցուրտ: Լաւ և վատ հաղորդիչներ	26

II. 0 դ

14. Ի՞նչ տեսակ մարմին է օդը.	30
15. Օդի ծանրութիւնը: Մթնոլորտ	31
16. Օդի առաձգականութիւնը և ձնշումը	33
17. Մթնոլորտի ձնշումը	34
18. Մթնոլորտի ձնշման չափելը: Բարօմետր	37
19. Մթնոլորտի ձնշման չափը և փոփոխութիւնները	40
20. Մթնոլորտային օդի շարժողութիւնը	40
21. Օդի բաղադրութիւնը	45
22. Ածուխի այրելը: Ածխաթթւուտ գաղ	48
23. Բորակածին և թթւածին	53
24. Մոմի այրելուց գոյացող նիւթերը	56
25. Զըածին	58
26. Ֆիզիկական և քիմիական միացումներ: Հասարակ խառնուրդ և քիմիական միացում.	61
27. Պարզ և բարդ մարմիններ	63

III. Զ ո ւ ր

1. Զըած նշանակութիւնը և տեսակները

65

2.	Զըի եռացումը	66
3.	Զըի գոյորշիանալը	69
4.	Ամպ, մառախուղ, անձրև և ձիւն.	71
5.	Սառցի ձեփ փոփոխւելը	74
6.	Սառցադաշտեր	76
7.	Զըի ընդարձակւելը սառչելիս	80
8.	Մարմինների լուծւելը ջըի մէջ	82
9.	Զըի քամելը և զտելը	84
10.	Զըի շրջանառութիւնը բնութեան մէջ	87

IV. Երկիր

1.	Ի՞նչ է հանքը և լեռնային տեսակը	91
2.	Գրանիտ	94
3.	Աւազ և աւազաքարեր	98
4.	Կաւ և կաւային թերթաքարեր	100
5.	Կրաքարեր և կիր	102
6.	Կրաքարերի ծաղումը	104
7.	Ծովերի ցամաքելը և տղահանքերի գոյանալը	106
8.	Գաճ	108
9.	Քարածուխ, տորֆ և նստթ.	109
10.	Մետաղներ	115
11.	Մետաղներ ստանալը	117
12.	Երկաթ	118
13.	Պղինձ	122
14.	Կապար, անագ և ցինկ	124
15.	Մնդիկ, արծաթ և ոսկի	126
16.	Զերմութեան և օղի ազգեցութիւնը	128
17.	Հոսող ջըի դերը: Աւազի և կաւի նստելը	131
18.	Հող	135
19.	Ստորերկեայ ջուր և աղբիւրներ: Այրերի գոյանալը	138
20.	Երկըի միջուկը և կեղեր	142
21.	Երկըաշարժ և հրաբուխ	147
22.	Ցամաքի և լեռների ծաղումը	150
23.	Երկըի կեղեսի դարաւոր տատանումները	153
24.	Վրիտակ	159
25.	Բնապատմութեան աւանդելու համար անհրաժեշտ իրերի և նիւթերի ցուցակը	159

«Ազգային գրադարան»



NL0240798

